

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍԱՐԳԻՍ ԴԱՆԹԱՐՋՅԱՆ

ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ  
ՄՏԱԿՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ  
ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ուսումնական ձեռնարկ

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2004

Ղանթարջյան Ս. Լ.

Նորարարությունների կառավարում և մտավոր սեփականության օբյեկտների գնահատում. ուսումնական ձեռնարկ, Եր., Երևանի համալս. հրատ. 2004, 84 էջ:

Մեր օրերում մեծ է մտավոր սեփականության դերը միջազգային բիզնեսում: Ինտերնետի առկայությունը և ինֆորմացիոն տեխնոլոգիաների արագընթաց զարգացումը առաջին պլան են մղում մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների պահպանման խնդիրները: Առևտրի գլոբալիզացիան նշանակում է, որ մտավոր սեփականության այնպիսի օբյեկտներ, ինչպիսիք են, օրինակ, գյուտերը, արդյունաբերական նմուշները, ապրանքային նշանները, բերում են մեծ եկամուտներ դրանց սեփականատերերին: Ուսումնական ձեռնարկի նպատակն է ծանոթացնել ուսանողներին մտավոր սեփականության կառավարման միջազգային մեխանիզմների և իրավաբանական հիմքերի հետ: Հատուկ ուշադրություն է դարձվում մտավոր սեփականության ղեկավարման և գնահատման հարցերին:

Ղ  $\frac{1203020400}{704(02)04}$  2004

ԳՄԴ

ISBN5-8084-05

© Ս. Լ. Ղանթարջյան, 2004թ.

## ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Հայաստանի Հանրապետության ինտեգրումը համաշխարհային տնտեսական տարածքի մեջ կախված է նրանից, թե որքան արագ մեր հանրապետությունում կգնահատվեն այն ոչ նյութական ակտիվները, որոնք կուտակվել են ձեռնարկություններում և գիտահետազոտական ինստիտուտներում 80 տարիների ընթացքում: Այսօրվա դրությամբ ՌԴ-ի ոչ նյութական ակտիվների մասը ակտիվների ընդհանուր կառուցվածքի մեջ 15%-20% է: ԱՄՆ-ում նշված ցուցանիշը երկու անգամ ավելի է, քանի որ մտավոր սեփականության օբյեկտները իրավաբանորեն ավելի ճիշտ են ձևակերպված, իսկ ձեռնարկությունների ակտիվների ղեկավարումը կախված է մտավոր սեփականության օբյեկտների ավելի ստույգ գրանցումից, գնահատումից, պահպանումից և ներդրումից:

1998 թ. վերջին ամերիկյան 6153 ֆիրմաների ընդհանուր արժեքը կազմել է 13.7 տրլն. դոլար, ընդ որում, հիմնական կապիտալի արժեքը կազմել է այդ շուկայական արժեքի ընդամենը 14%-ը, իսկ մնացած մասը կազմել է մտավոր սեփականության օբյեկտների արժեքը:

Ուսումնական ձեռնարկի նպատակն է տալ ապագա մագիստրոսներին հատուկ գիտելիքներ միջազգային պրակտիկայում մեծ զարգացում ստացած մտավոր սեփականության կառավարման հիմունքների վերաբերյալ և ծանոթացնել մտավոր սեփականության (ՄՍ) գնահատման հիմնական մոտեցումներին և ստանդարտներին: Ընդ որում, ՄՍ արժեքային ցուցանիշները ուսումնասիրվում են գիտելիքների, հայտնագործությունների, մտավոր գործունեության այլ արդյունքների կարևորագույն շարժիչ ուժի ձևափոխվելու դիրքերից:

Ապագա մագիստրոսները կժանոթանան ՄՍ արժեքի գնահատման ծախսային, եկամտային և համեմատական մեթոդներին, որպեսզի այնուհետև օգտագործեն դրանք պրակտիկայում:

## Բ Ա Ժ Ի Ն Ա Ռ Ա Զ Ի Ն

### ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

#### 1. ՄՏԱԿՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

##### ՄՏԱԿՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Ամենալայն իմաստով մտավոր սեփականությունը (ՄՍ) նշանակում է օրենքով ամրագրված իրավունքներ, որոնք մտավոր գործունեության արդյունքներ են՝ արդյունաբերության, գիտության, գրականության և արվեստի ոլորտներում: Տարբեր երկրներ ընդունում են ՄՍ պահպանության օրենքներ՝ ելնելով մի շարք հանգամանքներից: Նախ և առաջ դրանք ձգտում են օրենսդրական կերպով ձևակերպել ստեղծարարների գույքային և ոչ գույքային իրավունքները իրենց ստեղծագործությունների նկատմամբ՝ հասարակության իրավունքները այդ ստեղծագործությունը հասանելի դարձնելու առումով: Մյուս կողմից, կառավարությունները գիտակցաբար ձգտում են խրախուսել ստեղծագործողներին և նպաստել ազատ առևտրին՝ ելնելով տնտեսական և սոցիալական շահերից:

Օրենսդրությունը ՄՍ ոլորտում ձգտում է պահպանել ՄՍ ստեղծողների շահերը՝ տրամադրելով նրանց ժամկետային որոշ իրավունքներ: ՄՍ բաժանվում է երկու ճյուղերի՝ «արդյունաբերական սեփականություն» և «հեղինակային իրավունք»:

Առաջինը ենթադրում է գյուտի պահպանությունը արտոնագրի օգնությամբ, որոշակի առևտրական շահերի պահպանությունը արդյունաբերական նմուշների, ապրանքային նշանների և ապրանքային անվանումների օրենսդրական ակտերի օգնությամբ:

«Հեղինակային իրավունքը» հնարավորություն է տալիս գրականության, երաժշտության և արվեստի ոլորտներում գործող հեղինակներին ստանալ որոշակի իրավունքներ, որոնք թույլ են տալիս որոշակի սահմանափակ ժամկետում թույլատրել կամ սահմանափակել այդ ստեղծագործությունների օգտագործումը:

##### ՄՏԱԿՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ

Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության կոնվենցիայում, որը կնքվել է Ստոկհոլմում 1967թ. հուլիսի 14-ին, ամրագրված է, որ ՄՍ իր մեջ ընդգրկում է իրավունքներ, որոնք վերաբերում են.

1. գրականության, գեղարվեստական և գիտական ստեղծագործություններին,
2. կատարողների ելույթներին, ֆոնոգրամաներին (ձայնագրություններին) և եթերային հաղորդումների ծրագրերին,
3. բոլոր ոլորտներում մարդկային գործունեության գյուտերին,
4. գիտական հայտնագործություններին,

5. արդյունաբերական նմուշներին,
6. ապրանքային նշաններին, սպասարկման նմուշներին և առևտրական անվանումներին,
7. անբարեխիղճ մրցակցության խափանմանը,

ինչպես նաև բոլոր այն իրավունքներին, որոնք մտավոր գործունեության արդյունք են արդյունաբերության, գիտության, գրականության կամ արվեստի ոլորտներում:

Առաջին կետում նշված գործունեության տեսակները կարգավորվում են հեղինակային իրավունքով: Իրավունքները, որոնք նշված են թիվ 2 կետում, սովորաբար կոչվում են «հարակից իրավունքներ», այսինքն՝ իրավունքներ այն ոլորտներում, որոնք հարակից են հեղինակային իրավունքին:

Գործունեության տեսակները, որոնք ընդգրկված են թիվ 3, 5 և 6 կետերում, արդյունաբերական սեփականության պահպանման օբյեկտներ են:

Երբեմն «արդյունաբերական սեփականություն» տերմինը ոչ ճիշտ կերպ հասկացվում է որպես արդյունաբերական արտադրության գործընթացում օգտագործվող շարժուն կամ անշարժ սեփականություն օրինակ՝ գործարաններ, սարքավորումներ և այլն: Մեր դեպքում, արդյունաբերական սեփականությունը մտավոր սեփականություն է, այսինքն՝ վերաբերում է մարդու մտավոր գործունեության արդյունքներին: Որպես օրենք դրանք գյուտերն են և արդյունաբերական նմուշները: Կարելի է առաջարկել հետևյալ հասարակ պարզաբանումները. գյուտերը իրենցից ներկայացնում են տեխնիկական պրոբլեմների նոր լուծումներ, իսկ արդյունաբերական նմուշները՝ արդյունաբերական իրերի արտաքին տեսքը (դիզայնը):

#### ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Այսպիսով, արդյունաբերական սեփականության տակ ամենաընդհանուր իմաստով հասկանում են գյուտերի, օգտակար սարքերի, արդյունաբերական նմուշների, ապրանքային նշանների և ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիայի անբարեխիղճ մրցակցությունից պաշտպանության իրավունքներ: Հեղինակային իրավունքը պահպանում է ստեղծագործողների իրավունքները նրանց գործունեության արդյունքների վրա:

Ներկայացնենք արտոնագրային իրավունքի հասկացությունները ավելի մանրամասնորեն.

1. Արտոնագիրը փաստաթուղթ է, որը տրվել է հայտի հիման վրա, պետական կամ ռեգիոնալ գործակալության կողմից, ինչը գործում է մի խումբ երկրների շրջանակներում: Արտոնագիրը նկարագրում է գյուտը, տեխնիկական ոլորտի հատուկ պրոբլեմի լուծումը և ամրագրում է համապատասխան իրավունք, երբ արտոնագրված գյուտը կարող է օգտագործվել միայն արտոնագրողի թույլտվությամբ:
2. Ապրանքային նշանը իրենից ներկայացնում է նշում, որը անհատականացնում է տվյալ ձեռնարկության ապրանքները և թույլ է տալիս տարբերել դրանք մրցակիցների ապրանքներից:

3. Որոշ երկրներում, այդ թվում նաև ՀՀ որոշ գյուղերին տրվում է պահպանություն՝ «օգտակար սարք» անվանմամբ: Այսպիսի գյուղերը ունեն օգտագործման ավելի նեղ ոլորտ և սովորաբար վերաբերում են օբյեկտի կառուցվածքային իրականացմանը:
4. Արդյունաբերական նմուշը ստեղծագործական գործունեության արդյունք է, որը ուղղված է մասսայական արտադրության իրերի արտաքին տեսքը բարելավելուն: Արդյունաբերական նմուշը պետք է գեղագիտական առումով բավարարի սպառողներին և միևնույն ժամանակ արդյունավետորեն իրականացնի իր հիմնական ֆունկցիան:
5. Շատ երկրներում, այդ թվում նաև ՀՀ օրենսդրությամբ, կարգավորվում են հարաբերություններ, որոնք կապված են ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիայի ստեղծման, իրավական պահպանության և օգտագործման հետ: Պահպանությունը տարածվում է նյութական կրիչների վրա ֆիքսված ինտեգրալ միկրոսխեմաների էլեմենտների տարածքային դիրքերի և դրանց միջև եղած կապերի վրա:
6. Հեղինակային իրավունքով պահպանվում են նյութական ձև ունեցող գեղարվեստական ստեղծագործություններ (գրքեր, նկարներ, գրաֆիկա, ֆոտոնկարներ) կամ ոչ նյութական ձևով մարմնավորված երաժշտությունը և պոեզիան: Հեղինակային իրավունքը պահպանում է գաղափարի արտահայտման ձևը, այլ ոչ թե գաղափարը որպես այդպիսին: Ստեղծագործության պահպանությունը կախված չէ դրա որակից կամ արժեքից:

ՄՏԱԿՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱԳՄԱՆ և ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՌՈՑ ՊԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Գիտելիքների ոլորտը, որն ունի խիստ կապվածություն ՄՍ ծագման և օգտագործման հետ, բավականին յուրահատուկ է և լայն: Այն ներառում է և՛ տնտեսագիտության, և՛ իրավունքի, և՛ ճյուղային տեխնոլոգիաների, և՛ հոգեբանության, և՛ կառավարման հիմունքները: Այդ իսկ պատճառով ամենաբարդ հարցերը կապված են ՄՍ կոմպլեքս ղեկավարման հետ, քանի որ միշտ ծագում է հստակ խնդիր, և ղեկավարման նպատակն է տվյալ բիզնեսում ստանալ կոնկրետ արդյունք՝ կայուն մեծ եկամուտներ և հետևապես, գերշահույթ:

ՄՍ որպես մարդկային զարգացման կարևոր նախապայման ծագել է ստեղծարարական արդյունքների նկատմամբ իրավունքի տեսքով: Նախ այն հանդես է եկել փաստաթղթերով ձևակերպված արտոնությունների տեսքով, որոնք տրվում էին պետության կողմից ամենաակտիվ գյուտարար-արհեստավորներին, նրանց ընտանիքի անդամներին, աշխատակիցներին, ըստ հայեցողության, ընտրանքային կարգով: Առաջին անգամ այդպիսի արտոնություններ տրվել են Վենետիկյան հանրապետությունում 1474 թ.: Սկսած այդ պահից՝ ՄՍ պատմությունը անցել է զարգացման երեք փուլ՝ ընտրանքային արտոնություններ, ազգային արտոնագրում և իրավունքների միջազգային պահպանություն:

Առաջին փուլը վերաբերում է այն ժամանակահատվածին, երբ լայն տարածում ստացավ արհեստավորական արտադրությունը: Արհեստավորները, միավորվելով արտադրամասերի մեջ, սկսեցին ստեղծել այդ ժամանակահատվածի համար բարձր արտադրողականություն ունեցող աշխատանքի գործիքներ: Այսպես, 1300 թ. Արևմտյան Եվրոպայում ստեղծվեց

Ճախարակը, իսկ 15-րդ դարի վերջում՝ ուղքով շարժվող ճախարակը: 14-րդ դարի կեսերին կառուցվեցին առաջին դոմնային վառարանները, իսկ 15-րդ դարի կեսերին տպագրվեցին առաջին գրքերը: Երկրի ղեկավարը, ելնելով սեփական պատկերացումներից, այս կամ այն գործունեության օգտակարությունից, սկսում է տալ արտոնագրային պահպանագրեր: Այդ պահպանագրերը թույլ էին տալիս արտադրության և առևտրի կազմակերպման փուլում, բացի բացառիկ իրավունքներից, ազատվել նաև հարկերի վճարումից: Երբ արտոնությունները դարձան մասսայական, և սկսվեցին չարաշահումներ ու դատական վեճեր, 1628 թ. Անգլիայում ընդունվեց «Դրույթներ մենաշնորհի մասին» փաստաթուղթ, որի համաձայն այն մենաշնորհները, որոնք չունեին 14 տարով տրված արտոնագրային պահպանագրեր, հայտարարվում էին անվավեր: Ռուսաստանում առաջին արտոնությունները մտցրեց Պետրոս I-ը. դրանք գործում էին մինչև 1812 թ., երբ ի հայտ եկավ առաջին օրենքը:

#### ԱԶԳԱՅԻՆ ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ՍԿԻԶԲԸ

1790 թ. Միացյալ Նահանգներում, իսկ 1791 թ. Ֆրանսիայում ընդունվեցին ազգային օրենքները, որոնց համաձայն բոլոր արտոնությունները տրվում էին հեղինակներին: Համաձայն այդ օրենքների՝ իրավունքները տրվում էին միայն այդ երկրի քաղաքացիներին:

Երբ արդյունաբերական հեղափոխությունը տարածվեց այլ երկրների վրա, անմիջապես նկատվեց արտոնագրման կտրուկ աճ: Օրինակ՝ 1815-1820 թթ. 100-ից ավելի արտոնագրեր գրանցել են միայն ԱՄՆ, Ֆրանսիան և Անգլիան: Իսկ ընդամենը 10 տարի նշված ցուցանիշը ապահովվում էր արդեն շուրջ 10 երկրներում: 1836 թ. սկսվեց ըստ էության փորձաքննության անցկացումը, այսինքն՝ արտոնագրի բովանդակությունը սկսեց ենթարկվել մանրամասն փորձաքննության՝ ըստ նորամուծության:

Ինչպես արդեն նշվել էր, 1812 թ. Ռուսաստանում ընդունվեց առաջին արտոնագրային օրենքը, իսկ 1826 թ.՝ առաջին օրենքը հեղինակային իրավունքի մասին: Համաձայն առաջին օրենքի իրավունքները պահպանվում էին 3.5 տարուց մինչև 10 տարի, իսկ համաձայն երկրորդ օրենքի՝ հեղինակի համար իրավունքները պահպանվում էին ցմահ, իսկ նրա ժառանգորդների համար՝ 25 տարով:

1917 թ. դեկտեմբերի 29-ին ընդունվեց դեկրետ «Պետական հրատարակչության մասին», որի համաձայն հեղինակային իրավունքը գործում էր 5 տարի, իսկ 1918 թ. նոյեմբերին հաստատված մեկ ուրիշ դեկրետով բոլոր տեսակի հեղինակային իրավունքները անցնում էին պետության սեփականության տակ:

1931 թ. Ռուսաստանում ընդունվեց նոր օրենք գյուտերի մասին, որի համաձայն մտցվեց արտոնագիր՝ «հեղինակային վկայական» հասկացության փոխարեն: Այդ փաստաթղթում նշվում էին հեղինակների ազգանունները, իսկ իրավունքները անցնում էին պետությանը: Հենց հեղինակների իրավունքների ամրագրման բացակայությունն էլ եղավ այն հիմնական պատճառը, որ նախկին Խորհրդային Միության ձեռնարկությունները իրենց արտադրանքի տեխնիկական և տեխնոլոգիական մակարդակով զգալի հետ մնացին զարգացած երկրներից:

ՀՀ արտոնագրային վարչությունը ստեղծվեց ՀՀ կառավարության 1992 թ. հունվարի 26-ի որոշմամբ: 1993-2000 թթ. ընթացքում մշակվեցին և ընդունվեցին ՄՍ օբյեկտների պահպանության համապատասխան օրենքներ, մասնավորապես՝

1. «Արտոնագրերի մասին», որը հաստատվել է 1993 թ. օգոստոսի 21-ին,
2. «Ապրանքային նշանների, սպասարկման նշանների և ապրանքների ծագման տեղանունների մասին, որը հաստատվել է 1997 թ. հուլիսի 9-ին,
3. «Ֆիրմային անվանումների մասին», որը հաստատվել է 1997 թ. հուլիսի 9-ին,
4. «Ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիայի իրավական պահպանության մասին», որը հաստատվել է 1998 թ. մարտի 3-ին,
5. «Հեղինակային իրավունքի մասին», որը հաստատվել է 2000 թ. հունվարի 13-ին:

Նշված օրենքների հետ կարելի է ծանոթանալ ՀՀ Մտավոր սեփականության ազգային գործակալության, ինչպես նաև ՀՀ ազգային ժողովի ինտերնետային հասցեներում. [www.armpatent.org](http://www.armpatent.org), [www.parliament.am](http://www.parliament.am):

Զնայած օրենսդրական դաշտը ՄՍ ոլորտում կայացած է, ստեղծարար գործունեության արդյունքներին տիրապետելու իրավունքը առ այսօր դեռ չի դարձել այն գործիքը, որը թույլ է տալիս խրախուսել ներդրումներ և զարգացնել դրա հետ կապված արդյունաբերությունը:

#### ԲԱՅԱՌՉԱԿ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԱՏՎԱԾԸ

1883 թ. Փարիզում տեղի ունեցավ դիվանագիտական կոնֆերանս, որը ընդունեց արդյունաբերական սեփականության պահպանման Փարիզյան կոնվենցիան՝ 11 երկրների ստորագրությամբ: Այնուհետև այդ կոնվենցիայի բնագիրը մի քանի անգամ ենթարկվել է փոփոխությունների և լրացումների: Այսօրվա դրությամբ կոնվենցիայի մասնակիցներ են ավելի քան 140 երկրներ, այդ թվում նաև Հայաստանը: Այս կոնվենցիան լրացվում է 1891 թ. ընդունված նշանների միջազգային գրանցման մասին Մադրիդյան համաձայնագրով, որին նույնպես միացել է ՀՀ-ն:

ՄՍ պահպանության ոլորտում առկա են միջազգային մակարդակի երկու հիմնական ինստիտուտներ և մի շարք ռեգիոնալ կազմակերպություններ: Այդ ինստիտուտները կառուցվում են Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (ՄՍՀԿ) և Համաշխարհային առևտրական կազմակերպության (ՀԱԿ) հիման վրա: Ռեգիոնալ կազմակերպություններից ամենակարևորը Եվրամիությունն է:

## 2. ՄՍԱԿՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐԻԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ (ՄՍՀԿ)

### ՄՍՀԿ-Ն ԱՅՍՕՐ

ՄՍՀԿ միջազգային կազմակերպություն է, որի նպատակն է ՄՍ ստեղծողների և ՄՍ տերերի իրավունքների պահպանությունը ամբողջ երկրագնդում: 2000 թ. վերջում ՄՍՀԿ



անդամակցում էին 171 երկիր, ինչը կազմում է աշխարհի երկրների 90%: ՄՍՀԿ աշխատակազմը ընդգրկում է աշխարհի 75 երկրներից եկած 690 աշխատողներ, որոնք իրականացնում են ՄՍ պահպանության հետ կապված բազմաթիվ գործընթացներ, մասնավորապես՝ տարբեր միջազգային պայմանագրերից բխող վարչական գործառույթներ:

ՄՍՀԿ ստեղծման հիմքերի ելակետը 1873 թ. է, երբ Վիեննայում կայացած գյուտերի միջազգային ցուցահանդեսին հրաժարվեցին մասնակցել բազմաթիվ գյուտարարներ՝ վախենալով, որ նրանց գյուտերը կարող են օգտագործվել այլ երկրներում: Հենց այդ տարի ստեղծվեց Արդյունաբերական սեփականության (ԱՍ) պահպանության փարիզյան կոնվենցիան, որը պահպանում էր իրավունքներ ԱՍ այնպիսի օբյեկտների նկատմամբ, ինչպիսիք են 1. գյուտերը, 2. ապրանքային նշանները, 3. արդյունաբերական նմուշները: Փարիզյան կոնվենցիան, որի մասնակիցները 14 երկրներ էին, ուժի մեջ մտավ 1884 թ., որի վարչական գործառույթները կատարելու համար ստեղծվեց Միջազգային բյուրո:

1886 թ. ծնվեց գրականության և գեղարվեստական ստեղծագործությունների պահպանման Բեռնի կոնվենցիան, որի նպատակն էր աջակցել մասնակից երկրների քաղաքացիներին՝ ապահովելու իրենց իրավունքների միջազգային պահպանություն և կիրառության վերահսկողություն, դրամական պարզևատրման գործող համակարգ: Այդ իրավունքները տարածվում էին պատմվածքների, պոեմների, պիեսների, երաժշտության, օպերաների, նկարների, քանդակների, ճարտարապետական ստեղծագործությունների վրա:

Ինչպես և Փարիզյան կոնվենցիայի դեպքում, Բեռնի կոնվենցիայի վարչական խնդիրների լուծման նպատակով ստեղծվեց միջազգային բյուրո:

1893 թ. վերոհիշյալ երկու բյուրոները միացան որպես մեկ միջազգային կազմակերպություն՝ ՄՍ պահպանման միացյալ բյուրո, որը գործում էր Շվեյցարիայի մայրաքաղաք Բեռնում և ուներ ընդամենը 7 աշխատող: 1960 թ. միջազգային կազմակերպություններին ֆիզիկապես մոտ տեղակայվելու նպատակով միացյալ բյուրոն տեղափոխվեց Ժնև, իսկ 1970 թ. վերանվանվեց ՄՍՀԿ: 1974 թ. ՄՍՀԿ դարձավ Միացյալ ազգերի կազմակերպության (ՄԱԿ) մասնագիտացված հիմնարկներից մեկը:

ՄՍՀԿ այսօր կատարում է 21 միջազգային պայմանագրերից բխող վարչական գործառույթներ: Այդ պայմանագրերը վերաբերում են տարբեր ոլորտներին: Ստորև ուսումնասիրենք յուրաքանչյուր ոլորտը ավելի մանրամասնորեն:

#### ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԻՄՔԵՐԸ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՈՏՈՒՄ

Արդյունաբերական սեփականության ոլորտում կարևորագույն միջազգային պայմանագրերն են.

1. Արդյունաբերական սեփականության պահպանման Փարիզյան կոնվենցիան (1884 թ.):
2. Մադրիդյան պայմանագիրը ապրանքների ծագման կեղծ կամ մոլորության մեջ մտցնելու ցուցումների մասին (1891 թ.):
3. Նայրոբյան պայմանագիրը օլիմպիական խորհրդանիշի պահպանման մասին (1981 թ.):

4. Վաշինգտոնյան պայմանագիրը ՄՍ մասին՝ ինտեգրալ միկրոսխեմաների շրջանակներում (1989 թ.);
5. Պայմանագիր ապրանքային նշանների օրենքների մասին (1994 թ.):  
ՀՀ-ն միացել է առաջին երկու պայմանագրերին 1994 թ. մայիսի 17-ին:

ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԻՄՔԵՐԸ

Հեղինակային իրավունքի համակարգերը, անկախ ազգային կանոնադրության առանձնահատկություններից, նպաստում են գրականության և արվեստի ոլորտում գործող ստեղծագործողների իրավունքների պահպանությանը:

Հեղինակային իրավունքի ոլորտում են հետևյալ միջազգային պայմանագրերը.

1. Բեռնի կոնվենցիան գրական և գեղարվեստական ստեղծագործությունների պահպանման մասին (1886 թ.);
2. Հռոմի կոնվենցիան արվեստի կատարողների, ֆոնոգրամա արտադրողների և հեռահաղորդման մարմինների հետաքրքրությունները պահպանելու մասին (1961 թ.);
3. Ժնևի կոնվենցիան ֆոնոգրամաների անօրինական վերարտադրումից ֆոնոգրամաներ արտադրողներին պաշտպանելու մասին (1971 թ.);
4. Բրյուսելի կոնվենցիան արբանյակների միջոցով հաղորդվող ազդանշանների ծրագրի տարածման մասին (1974 թ.);
5. ՄՍՀԿ պայմանագիրը հեղինակային իրավունքի մասին (1996 թ.);
6. ՄՍՀԿ պայմանագիրը արվեստի կատարումների և ֆոնոգրամաների մասին (1996 թ.)

Հիմնական միջազգային պայմանագիրը հեղինակային իրավունքի պահպանության մասին Բեռնի կոնվենցիան է, որին ՀՀ-ն միացել է 2000 թ. հոկտեմբերի 19-ին:

ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՄՍՀԿ գործունեության շրջանակներում ՄՍ պահպանման աջակցությունը միջազգային նորմերի և ստանդարտների մշակման մեջ է:

Չնայած այն հանգամանքին, որ ՄՍՀԿ հիմնաքարը շարունակում են մնալ փարիզյան և Բեռնի կոնվենցիաները, հետագա պայմանագրերը էլ ավելի ընդլայնեցին և խորացրեցին նշված երկու պայմանագրերով իրականացվող պահպանությունը: Միևնույն ժամանակ դրանք հնարավորություն տվեցին հաշվի առնել այն փոփոխությունները, որոնք կապված են տեխնիկական առաջընթացի հետ: ՄՍՀԿ համար մեծ դեր ունի նաև ազգային օրենքների համապատասխանեցումը միջազգային օրենքներին:

ՊԼՀՊԱՆՈՒԹՅԱՆ և ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՈՐԱԼ ՀԱՄԱԿԱՐԳ

Տեխնիկական առաջընթացը և առևտրի զլոբալիզացիան ստիպեցին ստեղծել այնպիսի մեխանիզմներ, որոնք կարճ ժամկետներում և օպտիմալ կարգով ապահովեցին նոր գյուտերի և

թանկարժեք ակտիվների (ապրանքային նշաններ, արդյունաբերական նմուշներ) պահպանությունը: Մասնավորապես, այդպիսի գործընթացները թույլ են տալիս մեկ հայտով կատարել գրանցում մի քանի միջազգային պայմանագրի անդամ երկրներում: Միևնույն ժամանակ զգալիորեն մատչելի է դառնում արտոնագրման պրոցեսը: Նշված գործընթացներին աջակցում են հետևյալ պայմանագրերը.

1. Արտոնագրային կոոպերացիայի մասին պայմանագիրը (PCT) (1970 թ.);
2. Բուդապեշտի պայմանագիրը մանրէների պահպանման միջազգային ճանաչման մասին՝ արտոնագրային միջոցառումների նպատակների համար (1977 թ.);
3. Մադրիդյան համաձայնագիրը նշանների միջազգային գրանցման մասին (1891 թ.);
4. Մադրիդյան համաձայնագրին կից արձանագրություն (1989 թ.);
5. Լիսաբոնյան պայմանագիրը՝ ծագման տեղանունների պահպանության և միջազգային գրանցման մասին (1958 թ.);
6. Հաագայի պայմանագիր արդյունաբերական նմուշների միջազգային պահպանության մասին (1925 թ.):

Որպես օրինակ կարելի է նշել, որ Արտոնագրային կոոպերացիայի մասին պայմանագրի համաձայն, մտցվում է շրջանառության մեջ «միասնական արտոնագիր» հասկացողությունը, որի համաձայն հայտատուն հայտը ներկայացնելուց հետո հնարավորություն ունի ժամանակ շահել և որոշել, թե որ երկրներում իմաստ չունի արտոնագրելու իր հայտը: Միջազգային հայտերի քանակը աճել է 2625-ից (1979 թ.) մինչև 67007 (1998 թ.), ինչը հավասարագոր է 4.8 մլն. ազգային հայտերի ներկայացմանը (1 հայտով 72 երկիր):

### **3. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԱՈՒՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ և ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ**

#### **ԳՅՈՒՏԵՐ**

Գյուտը, որը ներկայացվում է արտոնագրային պահպանման, պետք է բավարարի մի քանի չափանիշների: Դրանք են.

1. Գյուտը պետք է պարունակի արտոնագրաունակ օբյեկտ.
2. Գյուտը պետք է լինի արդյունաբերորեն կիրառելի (նաև օգտակարության իմաստով).
3. Գյուտը պետք է լինի նորույթ.
4. Գյուտը պետք է ունենա որոշակի գյուտարարական մակարդակ, այսինքն՝ լինի ոչ ակնհայտ:

Արտոնագրաունակ օբյեկտների ցանկը որոշվում է օրենքով և սովորաբար վերաբերում է տեխնիկայի հայտնի ոլորտներին: Այդ ոլորտներից դուրս են հանվել հետևյալ բաժինները.

1. Նոր նյութերի հայտնագործությունները, որոնք գոյություն ունեն բնության մեջ.
2. Գիտական տեսությունները և մաթեմատիկական մեթոդները.

3. Բույսերի և կենդանիների տեսակները.
4. Արտադրության կազմակերպման մեթոդները, խաղերի օրենքները.
5. Մարդկանց ու կենդանիների հիվանդության ախտորոշման և բուժման մեթոդները:

Որպեսզի գյուտը լինի արտոնագրաունակ, այն պետք է հնարավորություն ունենա օգտագործվել պրակտիկ նպատակներով, այսինքն՝ չի կարող ունենալ զուտ տեսական նշանակություն: Գյուտը համարվում է նոր, եթե այն կանխագուշակված չէ տեխնիկային նախորդ մակարդակով: Այդ մակարդակը որոշվում է գյուտի մասին եղած ինֆորմացիայով, ինչպես տվյալ երկրում, այնպես էլ՝ ամբողջ աշխարհում:

Ոչ ակնհայտության պահանջի հայտնաբերումը ամենաբարձրն է, երբ անց է կացվում ըստ էության փորձաքննություն: Այդ պահանջից բխում է, որ պահպանությունը չպետք է տրվի այն փաստին, ինչը հայտնի է տեխնիկայի նախորդ մակարդակից: Նուրույթը տեղի ունի այն դեպքում, եթե գյուտի և նախորդ մակարդակի միջև կա տարբերություն: Տարբերությունները գնահատելիս պետք է հաշվի առնել.

1. պրոբլեմը, ինչը պետք է լուծվի,
2. այդ պրոբլեմի լուծումը,
3. արդյունքը, ինչը երաշխավորված է այդ լուծման օգտագործմամբ:

#### ՕԳՏԱԿԱՐ ՍԱՐՔԵՐ

Որոշ երկրներում այս անվանումը տրվում է այն գյուտերին, որոնք վերաբերում են մեխանիկայի ոլորտին: Այդ իսկ պատճառով օգտակար սարքերը հաճախ ներկայացվում են որպես օգտակար օբյեկտներ, որոնք տարբերվում են գյուտերից այն առումով, որ.

1. տեխնոլոգիական լուծման պահանջվող մակարդակը ավելի ցածր է, քան այն, ինչը ներկայացվում է գյուտերի համար,
2. պահպանման առավելագույն ժամկետը ավելի կարճ է, քան գյուտերի համար նախատեսվածը:

#### ԱՐԴՅՈՒՆԱՔԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐ

Արդյունաբերական նմուշը կարելի է ներկայացնել որպես օգտակար սարքի արտաքին տեսքի ձևավորում: Քանի որ իրը պետք է հնարավորություն ունենա ենթարկվելու սերիական արդյունաբերական թողարկման (այս առումով էլ անվանումը՝ «արդյունաբերական նմուշ»), դրանց պահպանության ժամկետը կազմում է 5, 10 կամ 15 տարի:

Հիմնական պահանջը, որը ներկայացվում է արդյունաբերական նմուշներին, այն է, որ իրերի արտաքին տեսքը պետք է պիտանի լինի տեսողական ընկալման համար: Բազմաթիվ իրեր, որոնց կարող են վերաբերել արդյունաբերական նմուշները, նոր չեն և արտադրվում են բազմաթիվ արտադրողների կողմից (օրնակ՝ կոշիկ): Նշված դեպքերում պահպանման է ներկայացվում այդ իրերի արտաքին տեսքը:

Արդեն մի քանի դար է, ինչ արդյունաբերողները իրենց իրերի վրա տեղադրում են հատուկ նշաններ, որոնք թույլ են տալիս տարբերել դրանք մրցակիցների ապրանքներից: Ժամանակակից ապրանքային նշանները առաջին անգամ ծագել են 18-րդ դարում, քանի որ առաջին անգամ ծնվեցին օբյեկտներ, որոնք երաշխավորում էին առևտրի և արդյունաբերության ազատությունը: Ապրանքային նշանի օգտագործումը հետապնդում է մի քանի նպատակներ. ելնելով պոտենցիալ գնորդների նպատակներից՝ ապրանքային նշանը օգնում է որոշում ընդունել տվյալ ապրանքը գնելու կամ չգնելու հետ կապված: Նշված որոշման հիմքում դրված են ապրանքի սպասվելիք բնութագրերը՝ չափսը, քաշը, գույնը, հոտը, համը, աշխատանքի արդյունավետությունը և այլն: Ապրանքային նշանի մյուս ֆունկցիան այն է, որ արտադրող ֆիրման հնարավորություն է ստանում տարբերել իր ապրանքները նմանատիպ ապրանքներից, երբ այդ ապրանքները արդեն վաճառվում են խանութում: Ապրանքային նշանների երկրորդ ֆունկցիան է օգնել պետական մարմիններին, որոնք են կրում պատասխանատվություն ապրանքի որակի համար:

Ֆիրմային անվանումները ընդգրկում են անուններ, տնտեսվարող սուբյեկտներին տարբերելու համար՝ անկախ այդ սուբյեկտների կողմից արտադրվող ապրանքների անվանումներից: Այսպիսով, ֆիրմային անվանումը շատ թանկ ակտիվ է և սպառողների համար օգտակար ինֆորմացիայի լավ աղբյուր: Դրանց պահպանումը ծառայում է ինչպես արտադրողների, այնպես էլ սպառողների շահերին:

Աշխարհագրական ցուցումները իրենցից ներկայացնում են անվանումներ, արտահայտություններ կամ նշաններ, որոնք ցույց են տալիս, որ իրը կամ ծառայությունը ունի իր ծագումը երկրում, տարածաշրջանում կամ կոնկրետ աշխարհագրական վայրում:

Ծագման տեղի անվանումը երկրի, տարածաշրջանի կամ կոնկրետ տեղի անվանումն է, որը ծառայում է այն իրի նշանակման համար, որի որակային բնութագրերը բխում են այդ վայրի բնական կամ մարդկային գործոններից: Օրինակ՝ «Բորդո», «Շամպայն» գինիներ և այլն:

#### ՈՋ ԲԱՐԵԽԻՂՃ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ոչ բարեխիղճ մրցակցությունից պաշտպանությունը համարվում է արդյունաբերական սեփականության պահպանման համակարգի մի մասը: Ոչ բարեխիղճ մրցակցություն է համարվում յուրաքանչյուր քայլ, որը հակասում է ազնիվ ավանդույթներին: Մասնավորապես տարբերում են ոչ բարեխիղճ մրցակցության 12 տեսակներ.

1. մրցակցի գնորդներին կաշառք տալը,
2. արդյունաբերական լրտեսություն,
3. մրցակցի նոու հաու-ի բացահայտում և օգտագործում,
4. մրցակցի աշխատողներին արտադրության գաղտնիքները բացահայտելու դրդելը,
5. մրցակիցներին վախեցնելը,
6. մրցակիցների ապրանքների վաճառքի բոյկոտ,

7. «դեմպինգ», այսինքն՝ վաճառք ինքնարժեքից ցածր կիրառելը,
8. ապրանքի ոչ աղեկվատ ներկայացումը շուկայում, ինչը ստեժում է ապրանքի վաճառքի իրականությանը չհամապատասխանող բարենպաստ պայմաններ,
9. մրցակցի ապրանքային նշանի կրկնությունը,
10. մրցակցի խրախուսումը պայմանագրի խախտման նպատակով,
11. գովազդ, որտեղ ապրանքները համեմատվում են մրցակցի ապրանքների հետ,
12. օրենքների խախտում, որոնք թույլ կտան ստանալ առավելություն մրցակցի նկատմամբ:

**ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԴԵՓՈԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ**

Յուրաքանչյուր անձ, ով ներկայացրել է գյուտի, ապրանքային նշանի կամ արդյունաբերական նմուշի գրանցման հայտ, լինի այդ գրանցումը ազգային կամ միջազգային մակարդակով, ձգտում է պարզել արդյո՞ք իր ստեղծածը նորություն է, թե մեկ ուրիշը արդեն դարձել է դրա սեփականատերը: Այս հարցի պատասխանը ստանալու համար պետք է որոնումներ կատարել մեծածավալ ինֆորմացիոն բանկերում: ՄՍՀԿ 4 պայմանագրերի միջոցով ստեղծվել են դասակարգչային համակարգեր, որոնցում գյուտերին, ապրանքային նշաններին և արդյունաբերական նմուշներին վերաբերող ինֆորմացիան համակարգված է ինդեքսավորված դեկավարվող կառուցվածքների տեսքով, որոնք զգալիորեն հեշտացնում են որոնման գործընթացները: Տեխնիկայի անընդհատ զարգացման արդյունքում այդ դասակարգիչները պարբերաբար թարմացվում են: Դրանք ընդունվել են հետևյալ միջազգային համաձայնագրերի հիման վրա.

1. Ստրասբուրգի համաձայնագիրը միջազգային արտոնագրային դասակարգման մասին (1971 թ.):
2. Նիսի համաձայնագիրը նշանների գրանցման համար ապրանքների և ծառայությունների միջազգային դասակարգում հիմնելու մասին (1957 թ.):
3. Վիեննայի համաձայնագիրը նշանների արտահայտչական էլեմենտների միջազգային դասակարգման հիմնման մասին (1973 թ.):
4. Լոկառնայի համաձայնագիրը արդյունաբերական նմուշների միջազգային դասակարգման հիմնադրման մասին (1968 թ.):

Այժմ ծանոթանանք վերը նշված համաձայնագրերի հետ ավելի մանրամասնորեն:

*1. Միջազգային արտոնագրային դասակարգումը (ՄԱԴ)*

Երբ արտոնագրային վարչությունը ստանում է հայտ որևիցե գյուտի գրանցման համար, դրան տրվում է հերթական համար: Մյուս կողմից, հայտին տրվում են հատուկ նշաններ, որոնք թույլ են տալիս որոշել, թե արդյունաբերության, գյուղատնտեսության, բժշկության որ ճյուղին է վերաբերում տվյալ հայտը: Համաձայն ՄԱԴ-ի, որին 1996 թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ միացել էին 35 պետություններ, ամբողջ տեխնիկական բաժանվում է 8 բաժնի, 20 ենթաբաժնի, 118 դասի, 624 ենթադասի և 67000 ավելի խմբերի: Յուրաքանչյուրը այս բաժիններից, դասերից, ենթաբաժիններից, ենթադասերից, խմբերից ունի իր անվանումը: Այսօրվա դրությամբ ՄԱԴ-ը

օգտագործվում է ավելի քան 70 երկրներում և իր մեջ ընդգրկում է երկրագնդում գործող արտոնագրային փաստաթղթերի շուրջ 90%-ը:

## *2. Նիցցայի համաձայնագիրը*

Համաձայն այս համաձայնագրի՝ միջազգային դասակարգիչը իր մեջ ընդգրկում է ապրանքների 34 և ծառայությունների 8 դաս: Բերենք երկու օրինակ, որոնցից մեկը վերաբերում է ապրանքների դասին, իսկ մյուսը՝ ծառայությունների դասին:

Օրինակ 1. Դաս 14. Ազնիվ մետաղներ և դրանց ձուլվածքներ, սարքեր, որոնք ծածկված են այդ մետաղներով և ձուլվածքներով, թանկարժեք քարեր, ժամացույցներ:

Օրինակ 2. Դաս 35. Գովազդ. Մենեջմենթ բիզնեսի ոլորտում, վարչական գործունեություն բիզնեսի ոլորտում, գրասենյակային ծառայություն: Այս դասին մասնավորապես վերաբերում են.

1. ծառայություններ, որոնք մատուցում են առանձին անձերը կամ կազմակերպությունները, որոնց նպատակն է.

ա) առևտրային ձեռնարկությունների շահագործման և ղեկավարման գործընթացներում աջակցություն,

բ) ծառայություններ, որոնք մատուցում են գովազդային ձեռնարկությունները՝ լրատվության տարբեր աղբյուրների միջոցով ապահովելով սպառողների տեղեկացվածությունը՝ հնարավոր ծառայությունների և ապրանքների տեսակների մասին:

Այս դասին չեն վերաբերում այնպիսի ծառայություններ, ինչպիսիք են ինժեներատեխնիկական հաշվետվությունների, տարբեր տեսակների պլանների կազմումը և այլն:

Նշված համաձայնագրի անդամներն են ավելի քան 80 երկրներ: Համաձայնագրի համաձայն՝ ստեղծված դասակարգումը պարբերաբար թարմացվում է, քանի որ շատ ապրանքներ դուրս են մղվում շուկաներից, ծնվում են նորերը. որպես օրինակ կարելի է բերել արևային մարտկոցները (S 0590) կամ արևային տաքացուցիչները (S 0591), որոնք մտան այբբենական ցանկի մեջ այն բանից հետո, երբ հայտնաբերվեցին արևային էներգիայի օգտագործման նոր ուղիները:

## *3. Վիեննայի համաձայնագիրը*

Սովորաբար ապրանքային և սպասարկման նշանները իրենց մեջ պարունակում են տարբեր արտահայտչական էլեմենտներ, դասակարգիչը հնարավորություն է տալիս նույնացնել դրանք, որոնք բաղկացած են նույնանման էլեմենտներից: Դասակարգիչը բաղկացած է ենթախմբերից, որոնցում բաշխված են բոլոր արտահայտչական էլեմենտները:

## *4. Լոկառնայի համաձայնագիրը*

Բաղկացած է երեք մասից.

1. դասերի և ենթադասերի ցանկից. ընդամենը կա 31 դաս և 211 ենթադաս,
2. ապրանքների այբբենական ցանկ, որի մեջ ընդգրկված են արդյունաբերական նմուշները: Այս ցանկում ընդգրկված են շուրջ 6000 գրվածքներ,
3. պարզաբանող նյութեր:

ՄՍՀԿ սկսել է ստեղծել գլոբալ ինֆորմացիոն ցանց Ինտերնետի միջոցով, որը թույլ կտա ՄՍ ոլորտին վերաբերող ինֆորմացիայի պահպանումը և փոխանակումը բոլոր շահագրգռված կառավարական հիմնարկների և անդամ երկրների մասնավոր սեկտորի միջև: ՄՍ հիմնական առավելությունը ժամանակակից փուլում այն է, որ արդեն մշակվել է և ակտիվորեն օգտագործվում է իրավաբանական մեխանիզմը, որ հիմնվում է միջազգային նորմերի վրա և ապահովում է ձեռնարկության օրինական մենաշնորհը շուկայում իր ապրանքների նկատմամբ: Հենց դա է պատճառը, որ այն երկրներում, որտեղ գործում են կայուն տնտեսափրավական մեխանիզմներ գյուտերի իրացման նկատմամբ, արագ տեմպերով զարգանում է ինովացիոն բիզնեսը, որը բերում է գերշահույթներ: Այդ իսկ պատճառով առաջին պլան է մղվում ՄՍ էֆեկտիվ ղեկավարման պրոբլեմը: Սկսելով աշխատանքը արտոնագրային տվյալների բազայի հետ՝ անհրաժեշտ է ընտրել որոնման տեսակը, որը հնարավորություն կտա որոշել որոնվող փաստաթղթերի որակական կազմը, այսինքն կպարունակե՞ն արդյոք դրանք.

1. բոլոր տրված տերմինները,
2. այդ տերմինների մի մասը, կամ տերմիններ, որոնք մոտիկ են իրենց բովանդակային նշանակությամբ: Օրինակ, եթե որոնումը կատարվում է ըստ «սարք» բառի, համակարգիչը կարող է ընդլայնել որոնումը, ընգրկելով այնպիսի բառեր, ինչպիսիք են «սարքավորում», «մեխանիզմ» և այլն:
3. եթե օգտագործվում է որոնման տրամաբանական տեսակը, հաճախ օգտագործվում են այնպիսի տրամաբանական օպերատորներ, ինչպիսիք են OR-ը, AND-ը, NOT-ը. օրինակ՝ NOT օպերատորը օգտագործվում է որոշակի տերմին որոնումից հանելու նպատակով, AND-ը օգտագործվում է, եթե տեքստում միաժամանակ անհրաժեշտ է նշված երկու կամ ավելի տերմինների առկայությունը:

Որոնումը ավարտվում է գտած փաստաթղթերի ցուցակի տպագրումով:

#### 4. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

ԳՅՈՒՏԻ ԱՐՏՈՆԱԳԻՐ (ՆՈՐՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՏԱՐԱՐԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ, ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅՈՒՆ)

Արտոնագիրը մենաշնորհային իրավունք է գյուտի օգտագործման նկատմամբ: Գյուտարարին, իր գյուտը օգտագործելու համար արտոնագիր պետք չէ: Արտոնագրի առկայությունը հնարավորություն է տալիս սեփականատիրոջը դատական կարգով պահպանել իր իրավունքները տարբեր տեսակի ինստիտուտներից և համապատասխան դեպքերում պահանջել փոխհատուցում: Ազգային արտոնագիրը թույլ է տալիս տվյալ երկրում արտադրել և շահագործել այն գյուտը, որի համար տրվել է արտոնագիրը: Մեկ ուրիշ անձ կարող է ստանալ



թույլատվություն օգտվելու տվյալ գյուտից, եթե կնքվի լիցենզիոն պայմանագիր արտոնագրատիրոջ հետ:

Որպեսզի գյուտը լինի արտոնագրաունակ, այն պետք է ունենա նորության հատկանիշներ, գյուտարարական մակարդակ և արդյունաբերական կիրառելիություն:

Յուրաքանչյուր գյուտ պետք է լինի մի քայլ առաջ, այսինքն ունենա նոր, մինչ այդ անհայտ տեխնիկական մակարդակ՝ այս կամ այն ոլորտում:

Գյուտարարական մակարդակը ենթադրում է, որ մասնագետի համար գյուտը պարունակում է ժամանակակից տեխնիկայի մի այնպիսի մակարդակ, որը մինչ այդ հայտնի չէր:

Արդյունաբերական կիրառելիության տակ պետք է հասկանալ գյուտի օգտագործման գործնական հնարավորությունները:

Համաձայն ՀՀ «Արտոնագրերի մասին» օրենքի, չեն արտոնագրվում գիտական տեսությունները և մաթեմատիկական մեթոդները, ալգորիթմները և համակարգչային ծրագրերը, կենդանիների և բույսերի նոր տեսակները:

Գյուտի հայտը տրվում է արտոնագրային գերատեսչության և իր մեջ պարունակում է.

1. դիմում արտոնագիր ստանալու մասին,
2. գյուտի նկարագրությունը,
3. գծագրեր, որոնք օգնում են հասկանալ գյուտի էությունը,
4. ռեֆերատ, որում տրվում է գյուտի կարճ նկարագրությունը:

Գյուտի առաջնությունը որոշվում է ըստ հայտի գրանցման օրի: Համաձայն «կոնվենցիոն առաջնություն» հասկացողության Հայաստանի հայտատուն իրավունք ունի 12 ամսվա ընթացքում ներկայացնել Հայաստանում առաջնություն ստացած գյուտը Փարիզյան կոնվենցիայի անդամ երկրի ցանկացած արտոնագրային վարչություն:

#### ԳՅՈՒՏԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Գյուտի հայտի փորձաքննությունը ՀՀ բաղկացած է երկու փուլից: Նախ կատարվում է հայտի նախնական փորձաքննությունը, և եթե հայտը բավարարում է ներկայացված պահանջներին, ստացված գյուտի մասին տեղեկությունները տպագրվում են Հայարտոնագրի պաշտոնական տեղեկագրում: Եթե 4 ամսվա ընթացքում չի ստացվում ոչ մի առարկություն գյուտի վերաբերյալ, որոշում է ընդունվում տալ գյուտին ժամանակավոր իրավական պահպանություն 10 տարի ժամկետով: Այդ ժամկետի առաջին յոթ տարիների ընթացքում հայտատուի կամ յուրաքանչյուր շահագրգռված անձի պահանջով կարող է անցկացվել հայտի փորձաքննություն ըստ էության, և եթե գյուտը բավարարի արտոնագրաունակության բոլոր պահանջները, ընդունվում է որոշում՝ տալ արտոնագիր, որի ժամկետը կազմում է 20 տարի՝ սկսած հայտի ներկայացման օրից:

ԱՐՏՈՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

Համաձայն ՀՀ «Արտոնագրերի մասին» օրենքի կարելի է արտոնագրի նկատմամբ գործող իրավունքը լրիվ հանձնել մեկ այլ անձի (զիջման պայմանագիր) կամ տալ թույլտվություն օգտագործել արտոնագրված գյուտը (լիցենզիոն պայմանագիր):

Այդ պայմանագրերի գրանցումը պարտադիր կերպով պետք է կատարվի արտոնագրային գերատեսչությունում: Առանց գրանցման՝ պայմանագիրը ուժ չունի: Պայմանագիրը սկսում է գործել գրանցման պահից: Եթե տրվում է բաց լիցենզիա արտոնագրի տերը թույլ է տալիս օգտագործել իր գյուտը ցանկացած անձի:

ԳՅՈՒՏԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Արտոնագիրը կորցնում է իր ուժը, եթե այն չի օգտագործվում երեք տարվա ընթացքում: Արտոնագրի խախտում է գրանցվում այն դեպքում, եթե ենթադրվող խախտողը կազմակերպում է արտադրություն, վաճառք կամ գովազդ և անգոր է ապացուցել, որ այդ բոլորը կատարվել է առանց տվյալ գյուտի օգտագործման:

Արդյունաբերական սեփականության օգտագործման նկատմամբ ծագած վեճերը լուծվում են վարչական կամ դատական կարգով:

Արտոնագիրը վաղաժամկետ դադարեցնում է իր գործունեությունը, եթե.

1. ճանաչվել է անվավեր,
2. համաձայն արտոնագրի տիրոջ հայտարարության,
3. եթե ժամանակին չի վճարվել տուրքը արտոնագիրը ուժի մեջ պահելու համար:

Այն դեպքում, երբ հայտատուն կամ արտոնագրի տերը փոխում են հասցեն կամ անունը, վաճառվում են իրավունքները արտոնագրի նկատմամբ կամ դառնում լիցենզիոն պայմանագրի մաս, անհրաժեշտ է այդ փոփոխությունների մասին տեղյակ է պահել արտոնագրային վարչությանը:

ԱՐՏՈՆԱԳՐՈՒՄԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ

Եթե ՀՀ քաղաքացին կամ իրավաբանական անձը ցանկանում է արտոնագրել իր գյուտը արտասահմանում, նա պետք է ստանա Հայարտոնագրի թույլտվությունը: Եվրոպական երկրների մեծ մասը կապված են միմյանց հետ Եվրոպական արտոնագրային կոնվենցիայի միջոցով: Եվրոպական արտոնագիր ստանալու հայտը, որը ուղարկում է Եվրոպական արտոնագրային վարչություն (Մյունխեն կամ Հաագա) պարտադիր կերպով պետք է տարածվի 18 երկիր-անդամներից գոնե մեկի վրա:

Արտոնագրերի ստացումը, որոնք գործում են աշխարհի երկրների մեծ մասում, ապահովվում է համաձայն արտոնագրային կոոպերացիայի պայմանագրի, որում ընդգրկված են աշխարհի 84 երկրներ, այդ թվում Հայաստանը: Մեր երկիրը անդամակցում է նաև Եվրագիական արտոնագրային կազմակերպությանը, որի անդամներն են նախկին ԽՍՀՄ 9 երկրներ:

Հայաստանի հայտատուն ուղարկելով հայտը Մոսկվա՝ կարող է նշել այն երկրները, որոնց վրա նա ցանկանում է տարածել իր արտոնագիրը:

Եթե անհրաժեշտ է ստանալ պահպանություն այն երկրներում, որոնք անդամ չեն վերը նշված միջազգային պայմանագրերին, անհրաժեշտ է հայտեր ներկայացնել յուրաքանչյուր երկիր և ստանալ համապատասխան արտոնագրեր այդ երկրից:

#### ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

Ծրագրային ապահովվածությունը համակարգչային ծրագրերն ու այլ նյութեր են, որոնք մշակվել են համակարգչային աշխատանքների կազմակերպման համար: Համակարգչային ծրագրերի մշակումը բաղկացած է մի քանի փուլերից:

Մինչ ծրագրավորողը պետք է կառուցի ծրագիրը անհրաժեշտ է որոշել առկա խնդրի դրվածքը և ձևավորել այն տրամաբանական քայլերը, որոնք կազմում են ծրագրի հիմքը, այսինքն պետք է կառուցել խնդրի լուծման ալգորիթմը: Բայցևայնպես ոչ խնդրի դրվածքը, ոչ էլ դրա լուծման ալգորիթմը չեն համարվում պահպանվող օբյեկտներ:

ՄՍ օրենսդրության մեջ համակարգչային տեխնոլոգիաների հիմքում դրված են 3 կարևորագույն հարցեր.

1. Այն դեպքում, երբ համակարգչով մշակվող ինֆորմացիան ներկայացվում է որպես հեղինակային իրավունքով պահպանվող ստեղծագործություն, անհրաժեշտ է արդյոք դրա վերահսկողությունը հեղինակային իրավունք ունեցող անձի կողմից:
2. Այն դեպքում, երբ համակարգիչը օգտագործվում է ինֆորմացիայի մշակման համար և արդյունքում ծագում է ստեղծագործություն, որը ենթակա է հեղինակային պաշտպանվածության (օրինակ մշակվում են վիճակագրական թվեր, որոնց արդյունքում ծնվում է աղյուսակ), ո՞վ է այս դեպքում հեղինակը:
3. Պաշտպանվու՞մ են արդյոք այլ անձերի կողմից օգտագործվելուց այն ծրագրային միջոցները, որոնք ստեղծագործական աշխատանքի արդյունք են:

ՄՍՀԿ 1982թ.-ին տվել է վերոհիշյալ հարցերին հետևյալ պատասխանները.

1. Պահպանվող ստեղծագործության մուտքագրումը համակարգիչ փաստորեն իրենից ներկայացնում է այդ ստեղծագործության վերարտադրում:
2. Երբ պահպանվող ստեղծագործությունը դուրս է բերվում համակարգչից, այն պետք է պահպանվի համաձայն հեղինակային իրավունքի օրենքի՝ անկախ դուրս բերման ձևից, ինչը կարող է լինել.
  - ա) տպված թղթի վրա,
  - բ) ֆիքսված ինֆորմացիայի կրիչի վրա (դիսկետ, լազերային սկավառակ),
  - գ) փոխանցվող մեկ համակարգի տվյալների բազայից մյուս համակարգի տվյալների բազա,
  - դ) ստեղծագործության հասանելի դարձնելը ընդհանուր օգտագործման՝ աուդիո կամ վիդեո միջոցներով:

Տարբերում են համակարգչային ծրագրերի պահպանման 3 տեսակներ.

1. արտոնագրերի օգնությամբ,
2. հեղինակային իրավունքի օգնությամբ,
3. այն դրույթների օգնությամբ, որոնք մշակվել են արդյունաբերական գաղտնիքները պահպանելու համար:

Քանի որ արտոնագրերով սովորաբար պահպանվում են գյուտերը, որոշ երկրների օրենքներում, մասնավորապես ՀՀ «Արտոնագրերի մասին» օրենքում համակարգչային ծրագրերը հանված են պահպանությունից: Այդ իսկ պատճառով այդ երկրներում համակարգչային ծրագրերը պահպանվում են հեղինակային իրավունքի օրենքով:

ԻՆՏԵՐՆԱԿՆԱԿՆԱԿՆԵՐԻ ՏՈՊՈՒՈՒՄՆԵՐԻ (ԻՍՏ) ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԻՍՏ-ն մարդկային մտքի արդյունք է: Դրանք սովորաբար պահանջում են մեծ ծավալի ներդրումներ: Ժամանակի ընթացքում զգալիորեն փոքրացել են դրանց չափսերը և բարդացել կատարվող ֆունկցիաները: Դրանք օգտագործվում են ժամացույցներում, հեռուստացույցներում, հեռախոսներում, համակարգիչներում, բոլոր բարդ սարքավորումներում, որոնք օգտագործվում են տվյալների մշակման համար:

Նոր ԻՍՏ ստեղծումը պահանջում է մեծ ծավալների կապիտալ ներդրումներ: ԻՍՏ թողարկումը կատարվում է միկրոսխեմայի յուրաքանչյուր շերտի ֆոտո նկարի կիրառությամբ:

1989 թ. Վաշինգտոնում ընդունվել է ինտեգրալ միկրոսխեմաների նկատմամբ մտավոր սեփականության պայմանագիրը: Այնուհետև յուրաքանչյուր երկիր այդ պայմանագրի հիման վրա մշակել է համապատասխան օրենք: Համաձայն այդ օրենքների՝ միակ պահանջը, ինչ ներկայացնում է տոպոլոգիայի պահպանությունը, այն է, որ պետք է լինի յուրատեսակ և պետք է լինի ստեղծագործական աշխատանքի արդյունք:

Ի տարբերություն արտոնագրային պահպանության՝ այստեղ չի պահանջվում ոչ նորություն, ոչ էլ գյուտարարական մակարդակ:

Պայմանագիրը թույլ է տալիս յուրաքանչյուր երկրի ինքնուրույն որոշել, թե ինչպես են պահպանվելու ԻՍՏ իրավունքները. արտոնագրային, թե հեղինակային եղանակներով: Համաձայն գործող օրենքների՝ նախատեսվում է 10 տարվա պահպանություն՝ սկսած հայտի ներկայացման օրից:

**5. ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՆՇԱՆՆԵՐ, ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՆԵՐ**

Ապրանքային նշանը նշան է, բառ է կամ մի քանի բառեր, սիմվոլ է կամ բառերի և սիմվոլների զուգակցում, որոնք օգտագործվում են արտադրողի կամ վաճառողի ապրանքները այլ ֆիրմաների նույնատիպ ապրանքներից տարբերելու համար:

Ապրանքային նշանները կարող են լինել արտահայտչական, բառային, ծավալային և կոմբինացված: Ապրանքային նշանը կարող է արտահայտվել ձայնով, գույնով կամ գունային գուգակցմամբ:

Սպասարկման նշանը նշան է, որը օգտագործվում է մեկ անձի կամ կազմակերպության ծառայությունները մեկ ուրիշ անձի կամ կազմակերպության նույնատիպ ծառայություններից տարբերելու համար: Միայն օրենսդրությամբ գրանցված ապրանքային կամ սպասարկման նշանը թույլ է տալիս պահպանել մենաշնորհը դրա օգտագործման նկատմամբ:

Որպեսզի ապրանքային նշանը գրանցվի, այն պետք է բավարարի որոշակի պահանջներին, այսինքն լինի «պահպանաընդունակ»: Չի կարելի գրանցել նշանակումներ կամ սիմվոլներ, որոնց գոյությունը վերապահված է այս կամ այն երկրի օրենքներով: Չի թույլատրվում գրանցումը այնպիսի ապրանքային կամ սպասարկման նշանների, որոնք վերարտադրում են երկրում հայտնի գիտության, գրականության կամ արվեստի ստեղծագործություններ, առանց դրանց հեղինակների թույլտվության:

#### ՊԱՂԱՆՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Որպեսզի այս կամ այն նշանը գրանցվի որպես ապրանքային կամ սպասարկման նշան, անհրաժեշտ է, որ այն բավարարի պահպանունակության հետևյալ պահանջներին.

1. նշանի արտահայտչական մասը չպետք է գտնվի իրավական արգելանքի տակ,
2. այն չպետք է ընդգրկված լինի առկա գրանցման մատյանում կամ գտնվի փոձաքննության փուլում:

Ապրանքային նշանը համարվում է անկախ, եթե այն չի հանդիսանում.

1. ապրանքի բաղադրիչ մաս,
2. ապրանքի տեսքը կամ նկարագրությունը:

Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ կարող է գրանցել ապրանքային կամ սպասարկման նշանը:

Իրավական պահպանությունը կատարվում է այն պահից, երբ ապրանքային նշանը գրանցվում է արտոնագրային վարչությունում կամ եթե երկիրը անդամակցում է միջազգային պայմանագրերին, մասնավորապես արդյունաբերական սեփականության պահպանության Փարիզյան կոնվենցիային կամ ապրանքային նշանների միջազգային գրանցման Մադրիդյան համաձայնագրին:

#### ՊԱՆՏՆՆԵՐ ՏՐԿՈՂ ՀԱՅՏԵՐԻՆ

Յուրաքանչյուր ապրանքային նշան գրանցելու համար լրացվում է հատուկ կառուցվածքով բլանկ: Հայտը պետք է պարունակի հայտատուի տվյալները, հայտին կցվում է ապրանքային նշանի գրաֆիկական պատկերը և նկարագրությունը, որտեղ նշվում են գույները, որոնցով ներկված է նշանը: Հայտում պետք է նշված լինի ապրանքների և ծառայությունների

ցանկը, որոնց համար գրանցվում է ապրանքային կամ սպասարկման նշանը: Հայտը կարող է պարունակել ապրանքների և ծառայությունների մի քանի դասեր:

Ապրանքային նշանը գրանցելու համար ներկայացված հայտը ենթարկվում է ստուգման, ըստ դրանց համապատասխանության դրված պահանջներին և մասնավորապես անհրաժեշտ փաստաթղթերի առկայության:

Միությունները, ասոցիացիաները և այլ միավորումները կարող են գրանցել կոլեկտիվ ապրանքային նշան, որի օգտագործման իրավունքները չի կարելի հանձնել այլ անձերի:

Նախնական փորձաքննությունը կատարվում է հայտը ներկայացնելուց հետո մեկ ամսվա ընթացքում: Փորձաքննության արդյունքներով հայտը մերժվում է, կամ ընդունվում: Ապրանքային նշանի գրանցումը գործում է հայտը ներկայացնելու ամսաթվից տաս տարվա ընթացքում:

Գրանցման վերջին տարվա ընթացքում գրանցման ժամկետը կարելի է երկարացնել ևս 10 տարով: Փորձաքննության դրական որոշման համաձայն արտոնագրային վարչությունը համապատասխան տուրք գանձելուց հետո կատարում է գրանցում ապրանքային և սպասարկման նշանների գրանցամատյանում և երեք ամսվա ընթացքում հանձնում է տիրոջը համապատասխան վկայական:

Ապրանքային նշանի տերը ունի բացառիկ իրավունքներ նշանի օգտագործման նկատմամբ և կարող է.

1. լրիվ գիջել իր իրավունքները կամ,
2. տալ լիցենզիա ապրանքային նշանը օգտագործելու համար: Լիցենզիան պետք է գրանցվի արտոնագրային վարչությունում:

#### ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Ապրանքային նշանները պարտադիր կերպով պետք է օգտագործվեն ապրանքների կամ դրանց փաթեթավորման վրա: Օգտագործում է համարվում նշանի տեղադրումը գովազդներում, մամուլում:

Եթե ապրանքային նշանը հինգ տարի անընդմեջ չի օգտագործվել, ապա շահագրգիռ անձի հայտարարությամբ այն կարող է ճանաչվել անվավեր:

Անվավեր կարող է ճանաչվել այն նշանը, որը.

1. գրանցվել է օրենսդրական խախտումներով,
2. կեղծ է կամ կարող է մտցնել մոլորության մեջ,
3. չի բավարարում բարոյականության պահանջներին,
4. իր մեջ պարունակում է նշաններ, որոնք պահպանվում են միջազգային կոնվենցիաներով,
5. նման է նախորդ գրանցված ապրանքային նշաններին:

Եթե ապրանքային նշանի կողքին նշված է ® (անգլ. Registred) նշումը, դա նշանակում է, որ նշանը գրանցված է: Խախտումների հայտնաբերումը լիովին դրված է ապրանքային նշանի

տիրոջ վրա: Վերջինս կատարում է ծախսեր կապված նշանի գովազդի հետ: Գովազդը հետապնդում է երկու նպատակ.

1. ինֆորմացիայի տարածում նշանի մասին,
2. գովազդել ապրանքի գրավիչ հատկությունները: Որպես յուրաքանչյուր կապիտալ ակտիվ նշանը ենթարկվում է «մաշվածության» և ժամանակի ընթացքում պետք է «թարմացվի»: Նշանի մաշվելու պատճառներն են.
  1. ապրանքի որակի նվազումը,
  2. կոնսորցիակտ արտադրանքի ծագումը, որը ունի ավելի վատ որակ,
  3. ապրանքային նշանի գովազդային կամպանիայի դադարեցում,
  4. շուկայում նոր փոխարինող ապրանքի ի հայտ գալը, որն ունի ավելի լավ սպառողական հատկություններ և/կամ ավելի էժան է:Ապրանքային նշանի «վերանորոգումը» կայանում է նրանում, որ վերականգնվում է դրական վերաբերմունքը նշանի նկատմամբ:

#### ԱՐԴՅՈՒՆԱՔԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐ

Արդյունաբերական նմուշը (դիզայնը) ընդգրկված է «արդյունաբերական սեփականություն» հասկացողության մեջ: Այն գեղարվեստա-կոնստրուկտորական լուծում է, որով որոշվում է իրերի արտաքին տեսքը և դրանց էսթետիկական առանձնահատկությունները:

Գեղարվեստական նախագծումը նպատակ ունի ստեղծել օգտագործման մեջ հարմար, գեղեցիկ արտաքին տեսք ունեցող իրեր, որոնք բավարարում են ժամանակակից տեխնիկական և էսթետիկական պահանջներին:

Իրերի մշակումը արդյունաբերական նմուշի մակարդակով ունի մեծ կոմերցիոն նշանակություն, քանի որ որոշում է սպառողական պահանջարկը և նպաստում է ապրանքի հաջող իրացմանը:

Քանի որ նոր իրի մշակումը և ստեղծումը կապված է ֆինանսական ծախսերի հետ, մշակողը և ստեղծողը շահագրգռված են ապահովել արդյունաբերական նմուշի իրավական պաշտպանությունը: Այդպիսի պաշտպանությունը թույլ է տալիս փոխհատուցել իր մշակման, արտադրության և վաճառքի ծախսերը:

«Արդյունաբերական նմուշի պահպանությունը ապահովվում է «Արտոնագրերի մասին» օրենքով:

#### ԱՐԴՅՈՒՆԱՔԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇԻ ԱՐՏՈՆԱԳՐԱՈՒՄԿԱՎՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Արդյունաբերական նմուշին տրվում է իրավական պաշտպանություն, եթե այն նոր է, յուրօրինակ է և կարող է բազմաթիվ անգամ կրկնօրինակվել արդյունաբերական ձևերով:

Արդյունաբերական նմուշը կարող է իրենից ներկայացնել ծավալային արտադրանք, տարածքային պատկեր, որոնցով որոշվում է իրի արտաքին տեսքը: Իրի էրգոնոմիկ ցուցանիշներին են վերաբերում.

1. իրի սպասարկման աշխատանքների կատարման հարմար լինելը,
2. պահպանությունը վնասվածքներից իրի սպասարկման ժամանակ:

Երբ փորձում են հաստատել սարքավորումների, հաստոցների և նմանատիպ արդյունաբերական նմուշների էրգոնոմիկ հատկությունները, նկարագրում են դրանց աշխատանքի սկզբունքը: Հագուստը, զարդերը և թեթև արդյունաբերության այլ իրերը ընդունված է բնութագրել դրանց շահագործման դիրքերից:

#### ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇԻ ԱՐՏՈՆԱԳՐՈՒՄԸ

Արդյունաբերական նմուշի արտոնագրումը նման է գյուտերի և ապրանքային նշանների արտոնագրմանը: Հայտերը ներկայացվում են ազգային գործակալություն:

Արդյունաբերական նմուշի անվանումը պետք է համապատասխանի արդյունաբերական նմուշների միջազգային դասակարգմանը: Նկարագրությունը պետք հաջորդաբար բացահայտի.

1. նշանակությունը և օգտագործման ոլորտը,
2. նման օրինակները,
3. լուսանկարների ցանկը, որոնք ներկայացնում են ԱՆ,
4. հայտատրված ԱՆ էությունը
5. ԱՆ բազմակի վերարտադրության հնարավորությունը:

Փորձաքննությունը կատարվում է երկու փուլով՝ նախնական և փորձաքննություն ըստ էության: Արտոնագրի գործողության ժամկետը 10 տարի է, և տիրոջ իրավունքն է այն երկարացնելու հինգ տարով:

#### ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

Արտոնագրման պրոցեսը կապված է որոշակի ֆինանսական ծախսերի հետ: Արտոնագրման յուրաքանչյուր փուլում հայտատուն վճարում է որոշակի տուրքեր, որոնք ՀՀ-ում, համեմատած այլ երկրների հետ բավական ցածր են: Այսպես, գյուտի հայտը ներկայացնելու համար վճարվում է 20,000 դրամ, բայց «Տուրքերի մասին» օրենքով նախատեսված են զեղչեր: Եթե հայտատուն ներկայացնում է հայտը իր անունից, կամ որևիցե հիմնարկությունից, որտեղ աշխատում են մինչև 25 հոգի, տուրքը վճարվում է 75% զեղչով: Եթե աշխատողների թիվը չի գերազանցում 100 մարդ, տուրքը վճարվում է 50% զեղչով: Եվ միայն 100 հոգուց ավելի աշխատողների դեպքում տուրքը վճարվում է առանց զեղչի:

Բացի դրանից, գյուտերի արտոնագրերը ուժի մեջ պահելու համար գոյություն ունեն ամենամյա տուրքեր, որոնք արտոնագրատերը պարտադիր պետք է վճարի՝ սկսած երրորդ տարվանից, սկսած հայտի ներկայացման ամսաթվից՝ ՀՀ բյուջեն յուրաքանչյուր տարի համալրվում է որոշակի գումարներով, որոնք վճարվում են հայտատուների կողմից արտոնագրային վարչությունում իրավաբանական գործողություններ կատարելու կապակցությամբ: Այսպես, տասը տարիների ընթացքում բյուջեն համալրվել է շուրջ 1 մլրդ. 300 մլն. դրամով, մինչդեռ արտոնագրային վարչության գործունեությունը ապահովելու նպատակով



բյուջեից հատկացվել է ընդամենը 97 մլն. դրամ: Եթե հայտատուն ցանկանում է ստանալ միջազգային արտոնագիր, ապա պետք է վճարվեն միջազգային տուրքեր, որոնք անհամեմատ ավելի մեծ են, քան ազգային տուրքերը:

## 6. ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

### ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ

Հեղինակային իրավունքը տարածվում է գրականության, գիտության և արվեստի ստեղծագործությունների վրա՝ անկախ դրանց ներկայացման ձևից: Ստեղծագործության պահպանումը կախված չէ դրա որակից կամ արժեքից: Պահպանման օբյեկտներ կարող են լինել գրականության կամ երաժշտության ինչպես վատ, այնպես էլ լավ ստեղծագործություններ:

Երկրների մեծամասնությունը իրենց ազգային օրենսդրությունում նախատեսել են հեղինակային իրավունքով պահպանություն ներքոհիշյալ ստեղծագործությունների համար.

1. Գրական ստեղծագործություններ, անկախ դրանց նշանակության, ծավալի և ձևի,
2. Երաժշտական ստեղծագործություններ,
3. Կերպարվեստի ստեղծագործություններ (նկարներ, քանդակներ),
4. քարտեզներ և տեխնիկական գծագրեր,
5. լուսանկարչական արվեստի ստեղծագործություններ,
6. ծրագրեր ԷՀՄ համար:

Հեղինակային իրավունքի տերը կարող է կարգավորել իր ստեղծագործության օգտագործումը՝ ըստ իր հայեցողության: Նա ունի հետևյալ իրավունքները.

1. Վերարտադրության իրավունք, այսինքն կարող է արգելել երրորդ անձերին վերարտադրելու իր ստեղծագործությունը,
2. կատարման իրավունք, այսինքն նա պետք է տա թույլտվություն իր ստեղծագործությունը կատարելու համար,
3. ձայնագրության իրավունք, այն դեպքում, երբ երաժշտության և խոսքերի հեղինակները տարբեր են, անհրաժեշտ է ստանալ երկուսի թույլտվությունը,
4. էկրանացման իրավունք,
5. եթեր հաղորդելու իրավունք,
6. թարգմանության և վերամշակման իրավունք:

Տարբերում են հարակից իրավունքների երեք տարբերակներ.

1. Կատարողների իրավունքները իրենց կատարման նկատմամբ,
2. ֆոնոգրամա արտադրողների իրավունքները իրենց ֆոնոգրամաների վրա,
3. եթեր դուրս եկող հաղորդումներ կազմակերպող հիմնարկների իրավունքները ռադիո և հեռուստատեսային հաղորդումների վրա:

Հարց է առաջանում, թե որտեղից է ծագում անհրաժեշտությունը պահպանել հարակից իրավունքների օբյեկտներ ստեղծողների իրավունքները:

Ստեղծագործական աշխատողները ձգտում են նրան, որ իրենց ստեղծագործությունները գտնեն հնարավորինս լայն տարածում: Քանի որ հեղինակները հիմնականում ի վիճակի չեն ինքնուրույն հասնել այդպիսի արդյունքի, նրանք գտնում են արհեստավարժ կառավարիչի, որը կազմակերպում է հեղինակի մտադրությունների իրականացումը: Թատրոնը բեմադրում է պիեսը, երգիչը կատարում է երգը, հրատարակիչը տպագրում է գիրքը և այլն: Ղերասանները, երգիչները, հրատարակիչները կատարում են այդ բոլորը միայն իրենց բնորոշ ձևերով: Այստեղից էլ ծագում է հարակից իրավունքները պահպանելու անհրաժեշտությունը:

#### ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՄՔԻ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ

Որևիցե ստեղծագործության հեղինակը սովորաբար դառնում է հեղինակային իրավունքի տերը: Բայց և անյախ ազգային օրենսդրություններում նշվում են նաև դեպքեր, երբ որևէ ստեղծագործության հեղինակային իրավունքը պատկանում է գործարարին, այն դեպքում երբ աշխատանքը կատարվել է՝ ելնելով ծառայողական առաջադրանքից: Այստեղ հեղինակը ունի միայն ոչ գույքային իրավունք:

Ընդհանուր առմամբ պահպանվում են հեղինակի գաղափարների արտահայտման ձևերը, այլ ոչ թե գաղափարները. այսպես օրինակ, եթե հեղինակը տպագրել է իր հոդվածում իրեն պատկանող գաղափարները, թե ինչպես է կառուցել հեծանիվ, սա չի կարող խանգարել երրորդ կողմին կառուցել այդ հեծանիվը: Հեղինակային իրավունքը պահպանում է այդ հոդվածի կրկնապատկումը առանց հեղինակի թույլտվության: Ինչ վերաբերում է հեծանիվին, ապա այն կարող է պահպանվել այլ հիմքերի վրա, օրինակ արդյունաբերական սեփականության պահպանման օրենքներով: Ընդունված է, որ հեղինակային իրավունքը պահպանվում է մինչև հեղինակի մահը և դրանից հետո ևս 50 տարի:

#### ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՄՔԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Հեղինակային իրավունքի վրա տարածվում են աշխարհագրական սահմանափակումներ, այսինքն հեղինակային իրավունքի տերը պաշտպանվում է տվյալ երկրի օրենքով: Եթե նրա իրավունքը խախտվում է այլ երկրում, իրավատերը պետք է գործի այդ երկրի օրենքներով: Եթե երկու երկրներն էլ անդամակցում են նույն միջազգային պայմանագրին, ապա հարցի լուծումը պարզանում է: Որոշ դեպքերում թույլատրվում է օգտագործել որևիցե ստեղծագործություն առանց հեղինակի թույլտվության: Օրինակ, եթե ստեղծագործությունը կատարվում է անձնական նպատակներով կամ հղման ձևով: Այս դեպքում պարտադիր պետք է ամրագրել հղման աղբյուրը՝ նշելով նաև հեղինակին:

Որոշ երկրներում հեղինակային իրավունքով չեն պահպանվում այդ երկրների օրենքների և վարչական մարմինների որոշումների տեքստերը:

Եթե օգտագործվում է որևիցե ստեղծագործություն՝ առանց հեղինակի թույլտվության, դա անվանում են ծովահենություն (պիրատություն): Որպես կանոն՝ ծովահենությունը կատարվում է առևտրական շահ ձեռք բերելու նպատակով:

Ծովահենությունը ունի երկար պատմություն, բայց վերջին տարիներին այն կրում է համաշխարհային բնույթ, ինչը բացատրվում է այն հանգամանքով, որ օրեցօր ավելի մեծ տարածում են գտնում ռադիո և տեսագրանցումներ կոմպակտ սկավառակների, կինոժապավենների օգնությամբ:

Վերոհիշյալ պայմաններում անհամեմատելի են դառնում հեղինակի ծախսերը, որոնք նա կատարում է իր ստեղծագործությունը շուկայացնելու իմաստով և ծովահենի ծախսերը, ով միայն բազմացնում է ստեղծագործությունը և ներկայացնում վաճառքի: Անօրինական ձևով բազմացնելով և վաճառելով հեղինակի ստեղծագործությունները շահույթ ստանալու նպատակով՝ ծովահենները չեն վճարում ոչինչ հեղինակին և կատարողներին: Քանի որ ծովահենները գործում են թաքուն, իրենց գործունեությունից ոչինչ չի ստանում նաև պետությունը, այսինքն նվազում են նաև մուտքերը պետություն: Այդ իսկ պատճառով բոլոր երկրների օրենսդրություններում նախատեսված են դատական միջոցներ՝ ծովահենների դեմ պայքարելու համար:

## 7. ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

### ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵՐԵՔ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Բոլոր ակտիվները և կառուցվածքները, լինեն դրանք նյութական կամ ոչ նյութական, մարդկային գործունեության արդյունքն են: Մարդիկ ապահովում են իրենց կենսագործունեությունը, նյութական (օրինակ՝ մեքենաների գնում) և ոչ նյութական (զաղափարների զարգացում) միջոցների զարգացմամբ: Այնպիսի ոչ նյութական միջոցները, որոնք կառավարիչները ստեղծում են իրենց ինքնահաստատման համար. անվանում են «միջավայր»: Այսինքն՝ յուրաքանչյուր մասնագետի որակավորման աստիճանը, նույնպես ոչ նյութական ակտիվ է: Այսպիսով, ճիշտ կլինի արտահայտել կազմակերպության բալանսում ներքին կառուցվածքները, արտաքին կառուցվածքները և անձնակազմի իրազեկվածությունը, այլ կերպ ասած, ձեռնարկության աշխատակիցներին:

Արտաքին կառուցվածքը վերաբերում է մատակարարների և հաճախորդների միջև փոխհարաբերություններին. այն կապված է ձեռնարկության հեղինակության հետ, հաճախորդների կողմից ձեռնարկությանը վստահություն արտահայտելու մեջ:


Ներքին կառուցվածքը իր մեջ ընդգրկում է արտոնագրերը, սկզբունքները, մոդելները, համակարգչային և վարչական համակարգերը, ինչը յուրաքանչյուր կազմակերպության պարտադիր մասն է: Այստեղ խոսքը գնում է այդ ակտիվների իրավաբանական պահպանության մասին:

Անձնակազմի կոմպետենտությունը բնութագրվում է նրա հնարավորությամբ գտնելու արդյունավետ լուծումներ իրավիճակների լայն դիապազոնում:

ՀԱՄԱՄԱՏՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՄԵՋ

Այս երեք բաղադրիչները անկախ չեն միմյանցից: Դրանց փոխկապվածությունը ցույց է տրվում հետևյալ գծագրով.


Ոչ նյութական ակտիվների ղեկավարում



Այս ակտիվների արդյունավետ ղեկավարման համար նախնական պետք է կատարել հետևյալը.

1. մեծացնել յուրաքանչյուր ակտիվը՝ ակտիվի հետ աշխատելու հաշվին,
2. մեծացնել յուրաքանչյուր ակտիվը՝ ակտիվների փոխներառման և փախազդեցության հաշվին:

## Ակտիվներ և հոսքեր



Ակտիվների հետ աշխատանքներից է նաև ակտիվների համատեղ օգտագործումը և դրանց այնպիսի զարգացումը, որը թույլ է տալիս ստեղծել ակտիվ, ինչը երաշխավորում է ամենամեծ շահույթ ստանալը: Անհատական իրազեկության ակտիվի ղեկավարումը նշանակում է ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք օպտիմալ են ստեղծագործելու, սովորելու և գիտելիքները կուտակելու համար: Այդպիսի ակտիվները բնորոշ են այն կազմակերպությունների համար, որոնք զբաղված են մարդկային ռեսուրսներ պատրաստելով:

### ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԸ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Յուրաքանչյուր ֆիրմայի անձնակազմ միշտ պետք է մտածի իրենց մշտական հաճախորդների մասին այն առումով, թե ինչ կարելի է ստանալ նրանցից, բացի սպասվող եկամուտներից: Եթե այդ հարաբերությունները ճիշտ են կառուցվում, ապա կարելի է ստանալ հաճախորդների որոշակի թարմ գաղափարներ: Որոշ հաճախորդներ, գոհ լինելով տվյալ ֆիրմայի հետ ստեղծած հարաբերություններից, սկսում են գովաբանել դրանց գործունեությունը: Բերենք օրինակ. հանրահայտ «Մակկինգի» ֆիրմայի գործունեությունից, որը աշխատելով

կառավարման ոլորտում, ղեկավարում է իր ոչ նյութական ակտիվները: Հարց է ծագում, թե ինչպես է այդ ֆիրման ապահովում փոխգործունեությունը այդ ակտիվների միջև:

Առաջին հերթին ֆիրման աշխատանքի է ընդունում երիտասարդ, բարձրագույն կրթություն ունեցող անձանց: Ընտրության ժամանակ ստուգվում են այդ երիտասարդների ինովացիոն ունակությունները: Այնուհետև նոր ընդունված աշխատակիցները սկսում են աշխատել փորձառու աշխատողների հետ, ինչը նպաստում է ֆիրմայի միասնականության բարձրացմանը, քանի որ ավելի փորձառու աշխատողները ազդում են նորեկների վրա՝ փոխանցելով նրանց հասցեական գիտելիքներ: Աշխատակիցներին ներշնչվում է այն միտքը, որ նրանք դարձել են ֆիրմայի մի մասնիկը: Ֆիրմայի մասնագետներից յուրաքանչյուրը հեռանկարում հնարավորություն ունի դառնալու ֆիրմայի ղեկավարների գործընկեր:

1996 թ. ամերիկյան «Ինտել» ֆիրման հայտարարեց, որ նրա ակտիվները արժեն 26 մլն. դոլար: Միևնույն ժամանակ նրա ակտիվների շուկայական արժեքը առ 01.01.1996թ. կազմում էր 110 մլն. դոլար, այսինքն՝ ակտիվների 1 դոլարը ուներ 6 դոլարի չափով շուկայական գին: Այս իրավիճակը բացատրվում էր ոչ նյութական ակտիվների բարձր եկամտաբերությամբ կամ դրա մտավոր սեփականությունով, որը 1997թ. գնահատվել էր մոտ 93 մլն. դոլար: Այսինքն՝ եթե որևիցե մի այլ ֆիրմա որոշեր գնել «Ինտել» ֆիրման, ապա այդ 93 մլն. դոլարը կփոխանցվեր իրեն որպես «գուղվիլ»:

Վերադառնալով «Մակկինգի» ֆիրմայի գործունեությանը՝ նշենք, որ աշխատելով բարձր հեղինակություն ունեցող այլ ֆիրմաների հետ, նա հնարավորություններ ունի հրավիրել այդ ֆիրմաների լավագույն մասնագետներին. այսինքն ֆիրմայում նկատվում է կադրերի անընդհատ թարմացում, ինչը ազդում է եկամուտների բարձրացման վրա:

#### ՄՍ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

##### *Արդյունաբերական սեփականության կառավարում*

Կազմակերպչական կառուցվածքները, որոնք անհրաժեշտ է ստեղծել յուրաքանչյուր երկրում կառավարության մակարդակով, որպեսզի գործեն ԱՍ պահպանության օրենքները, կարելի է բաժանել երեք խմբերի.

1. մարմիններ, որոնք պետական ապարատի ինչ-որ մասն են կազմում. այսինքն՝ ԱՍ գործակալությունը և այն նախարարությունը, որը պատասխանատվություն է կրում այդ ոլորտում քաղաքականության առումով,
2. պետական ապարատից դուրս գտնվող մարմիններ, որոնք պետք է գտնվեն պետական հսկողության տակ, օրինակ արտոնագրային հավատարմատարների գործակալություն,
3. հատուկ կառուցվածքներ դատական մարմիններում:

#### ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Արտոնագրային վարչությունը փաստորեն պետական հիմնարկ է: Վարչության մակարդակը պետական ապարատում կախված է տվյալ երկրի կառավարության

կազմակերպչական կառուցվածքից: ՀՀ նշված վարչությունը առևտրի և տնտեսական զարգացման նախարարության կազմում ունի առանձին ստորաբաժանման կարգավիճակ: Գործակալության աշխատողները պետական ծառայողներ են: Գործակալությունը կարող է կազմակերպվել նաև որպես անկախ մարմին, կազմակերպել աշխատակազմի ընտրություն, ուսուցում, տնօրինել տուրքերը իր անձնական կարիքների համար:

Գործակալությունում, բացի ղեկավարությունից, կան ստորաբաժանումներ, որոնք զբաղվում են.

ա) Արտոնագրային փորձաքննությամբ.

Այս ստորաբաժանումը պատասխանատվություն է կրում այնպիսի ֆունկցիաների համար, որոնք վերաբերում են գյուտերի և օգտակար սարքերի հայտերի փորձաքննության և արտոնագրեր տալու գործընթացներին:

բ) ապրանքային նշանների և արդյունաբերական նմուշների փորձաքննություն.

Այս ստորաբաժանումը պատասխանատվություն է կրում այնպիսի ֆունկցիաների համար, որոնք վերաբերում են ապրանքային նշանների գրանցման հայտերի, ինչպես նաև արդյունաբերական նմուշների հայտերի փորձաքննություններին և պահպանագրեր հանձնելուն:

գ) օժանդակ ծառայություններ.

Այս ծառայությունները ստեղծվում են վերը նշված հիմնական ուղղություններին օգնելու նպատակով: Այստեղ կատարվում են հետևյալ աշխատանքները.

- Ստանում են հայտերը և ստուգում դրանց համապատասխանությունը հայտի ձևակերպման պահանջներին,
- պաշտոնական տեղեկագրերում տպագրում են տվյալներ արտոնագրված գյուտերի, արդյունաբերական նմուշների, օգտակար սարքերի, գրանցված ապրանքային նշանների մասին,
- տպագրում են տարեկան հաշվետվություններ,
- կրում են լիցենզիոն պայմանագրերը գրանցամատյաններում գրանցելու իրավունքներ,
- լսում են բողոքարկման ներկայացված դիմումները,
- մասնակից են տարբեր տեսակի գործընթացների, որոնք կապված են գործունեության ավտոմատացման և համակարգիչների ներդրման ու սպասարկման հետ:

#### ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ՀԱՎԱՏԱՐՄԱՏԱՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Արտոնագրային հավատարմատարերը կատարում են ներքոհիշյալ հիմնական ֆունկցիաները: Նախ առանձին գյուտարարներին, ձեռնարկատերերին և արտասահմանցի հաճախորդներին տալիս են`

- երաշխավորություններ սկզբնական փուլում` թույլատրելով նրանց իրավունքները,
- կատարում են այդ իրավունքների ձեռքբերման փուլում համապատասխան ծառայություններ և աշխատանքներ,

- կատարում են ներկայացուցչական գործողություններ, երբ ստեղծվում են կոնֆլիկտային իրավիճակներ այդ իրավունքների ձեռքբերման կամ պահպանման փուլում:

Արտոնագրային հավատարմատարը իրավունք ունի տալու խորհուրդներ և երաշխավորություններ՝ երեք տեսակի հաճախորդների.

1. Անհատ գյուտարարներին,
2. արտադրողներին, որոնք աշխատում են փոքր, միջին և խոշոր արդյունաբերական ձեռնարկություններում,
3. արտասահմանցի հաճախորդներին:

ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Քանի որ հեղինակը կամ հեղինակային իրավունքի տերերը սովորաբար իրավունք ունեն թույլ տալ կամ արգելել օրենքով պահպանված իրենց ստեղծագործությունների կատարումը, նրանք ստեղծում են հասարակական կազմակերպություններ, որոնք հետևում են այդ գործընթացների իրագործմանը: Սա բացատրվում է նրանով, որ ժամանակակից պայմաններում հեղինակը ի վիճակի չէ հետևել փոխատուցում ստանալու առումով, թե որտեղ և ինչ քանակներով են կատարվել, բազմացվել և վաճառքի ներկայացվել իր ստեղծագործությունները: Այդ իսկ պատճառով ստեղծվում են հասարակական կազմակերպություններ, որոնք սովորաբար առևտրային են: Վերջիններիս կողմից հավաքված գումարները բաշխվում են հեղինակների միջև՝ հաշվի առնելով նաև կազմակերպության կատարած ծախսերը:

Առանց վերոհիշյալ կառույցի օգնության, հեղինակը ի վիճակի չէ ինքնուրույն վերահսկել իր ստեղծագործության կատարումը ինչպես իր երկրում, այնպես էլ արտասահմանում: Օրինակ, եթե որևիցե երկրում գործում են շուրջ 500 ռադիոհաղորդիչներ, որոնք օրվա ընթացքում եթեր են բաց թողնում մի քանի ժամ երաժշտություն, ապա կոմպոզիտորները ի վիճակի չեն թույլ չտալու օգտագործել իրենց ստեղծագործությունները: Այս նպատակով ստեղծվում են կապեր՝ երաժշտություն արտադրողների և սպառողների միջև: Նշվածը իրականացվում է, այսպես կոչված, «կոլեկտիվ ղեկավարման մարմինների» օգնությամբ, որոնք տալիս են միասնական թույլտվություն: Նշված գործողության իրավական ձևը որոշվում է տվյալ երկրի քաղաքացիական կոդեքսով և հեղինակային իրավունքի ազգային օրենքով: Սովորաբար հեղինակները հանձնում են իրենց իրավունքները նաև ապագա երաժշտական ստեղծագործությունների վրա և դրանով անվտանգ են դարձնում երրորդ կազմի ճնշումները:

Կոլեկտիվ ղեկավարման կազմակերպությունը իր հերթին կնքում է պայմանագրեր՝ նույնատիպ արտասահմանյան կազմակերպությունների հետ: Սովորաբար հեղինակները ստանում են եկամուտների 10%-ը:

Որպեսզի հավաքված գումարները բաշխվեն ճիշտ, օգտագործողները պետք է ներկայացնեն հաշվապահական հաշվետվություններ՝ նշելով կատարված ստեղծագործությունները և կատարման թիվը: Կոլեկտիվ ղեկավարման կազմակերպությունը



կարող է ստուգել ներկայացված հաշվետվությունները՝ նախորոք կազմակերպելով հաղորդումների ծայնագրություն:

## **8. ՄՍՕԿՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ**

Ինչպես արդեն նշվել է, ՄՍՕ սեփականության հատուկ տեսակ է, որը ինքնին արժեք չունի, բայց միևնույն ժամանակ իրավունքը դրա նկատմամբ դրամական արտահայտությամբ գնահատվում է շատ բարձր: Տնտեսագիտության տեսակետից ՄՍՕ իրենից ներկայացնում է ոչ նյութական ակտիվ, որի օգնությամբ կարելի է թարմացնել տեխնոլոգիան ու արտադրանքի տեսականին ու կատարել խորքային փոփոխություններ արդյունաբերական արտադրությունում: Ոչ նյութական ակտիվները, կտրված նյութականից և ֆինանսականից, գործարար հաջողության ներուժ են: Այդ երեք բաղադրիչների համակցությունն է ձեռնարկության տնտեսական գործունեության հիմքը: ՄՍՕ գնահատումը անհրաժեշտ է ոչ միայն դրա վրա սեփականության իրավունքի փոխանցման ժամանակ. ՄՍՕ առևտրային պոտենցիալը շատ բարձր է նաև այլ կիրառությունների ժամանակ, որոնցից են՝ կանոնադրական կապիտալի մեջ մտցնելը, գրավ դնելը կամ վստահական կառավարման դեպքերը: Յուրաքանչյուր դեպքում ՄՍՕ անհրաժեշտ է գնահատել: Կան ոչ նյութական ակտիվների կազմում գտնվող ՄՍՕ արժեքի գնահատման բազմաթիվ մեթոդներ, որոնք համաձայնեցված են գույքի գնահատման միջազգային ստանդարտներին (ԳՄՍ): Գոյություն ունեն չորս ստանդարտներ, որոնք պարունակում են գույքի, այդ թվում մտավոր սեփականության գնահատման տարբեր մեթոդական ցուցումներ:

Գնահատման նպատակները հիմնականում կապված են ֆինանսական հաշվետվության հետ կամ ՄՍՕ քաղաքացիական շրջանառության մեջ ներմուծման հետ: Զուգահեռաբար սեփականության իրավունք ՄՍՕ վրա՝ այսինքն չարտահայտելով այն իր բալանսում, ձեռնարկությունը չի կարող տնօրինել իրավունքները առևտրական նպատակներով:

Ֆինանսական հաշվետվությունը կազմելիս, կախված դրված նպատակներից, որոշում են բալանսային, վերականգնողական կամ մնացորդային ՄՍՕ արժեքը:

ՄՍՕ բալանսային արժեքը որոշվում է ըստ փաստացի ծախսերի, որոնք կատարվել են ՄՍՕ ձեռքբերման կամ ստեղծման համար և նրա այն վիճակին հասցնելու համար, որում նա կարող է օգտագործվել պլանավորված նպատակներով: Վերականգնված արժեքը, հաշվետվության մեջ արտահայտված ՄՍՕ արժեքն է, որը վերագնահատվել է օրենսդրությամբ նախատեսված դեպքերում: ՄՍՕ բալանսային արժեքը, հանած կուտակված մաշվածությունը, փաստորեն իրենից ներկայացնում է մնացորդային արժեքը:

Եթե ՄՍՕ մտցվում է քաղաքացիական շրջանառության մեջ, օգտագործվում են գնահատման նպատակների մի քանի տարբերակներ. դրանք են՝

- ՄՍՕ արժեքը, որպես լիցենզիոն վարձատրություն, ուղղակի դրամային վճարի տեսքով (ռոյալտի, պաուշալ վճարում, հոնարար), անուղղակի կամ ոչ դրամային վարձատրության տեսքով (դիվիդենդներ, շուկայի ինֆորմացիա, մրցակիցների մասին ինֆորմացիա և այլն),
- սպառողական արժեք, որը ունի կոնկրետ ՄՍՕ կոնկրետ օգտագործողի համար,
- մասնագիտացված ՄՍՕ արժեքը, որը նախատեսված չէ բաց շուկայում վաճառելու համար,
- ՄՍՕ ներդրումային արժեքը, որը որոշվում է կոնկրետ ներդրողի համար,
- ՄՍՕ լուծարքային արժեքը, որը համապատասխանում է այն դրամական գումարին, որը իրականում կարող է ստացվել սեփականության վաճառքից՝ կոնկրետ ժամկետում,
- արժեքը սահմանափակ շուկայի պայմաններում, երբ ՄՍՕ շուկայի յուրահատուկ պայմանները, մարքեթինգային հետազոտությունների բացակայությունը և այլ նմանատիպ պատճառները ընթացիկ պահին ներգրավում են քիչ քանակությամբ պոտենցիալ հաճախորդների:

#### ԳՆԱՀԱՏՄԱՆ ԴԱՍԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

Շուկայական արժեքը, որպես ՄՍՕ գնահատման բազա, իրենից ներկայացնում է այն դրամական մեծությունը, որը կարելի է ստանալ այն ՄՍՕ համար, եթե այն գնահատման օրը բաց շուկայում դուրս հանվի վաճառքի: Նշված արժեքը դիտում են երեք դասական մոտեցումների դիրքերից՝ ծախսային, եկամտային և շուկայական:

#### *Ծախսային մոտեցում*

Ծախսային մոտեցումը հիմնվում է ներդրողի կողմից ՄՍՕ ձեռքբերման հնարավորության վրա և ելնում է այն տեսանկյունից, որ գնորդը չի վճարի օբյեկտի համար ավելի շատ գումար, այն գումարից, ինչով նա կարող է ձեռք բերել նույնատիպ նշանակություն և որակ ունեցող օբյեկտ: Մոտեցումը հիմնված է այն ծախսերի հաշվարկի վրա, որոնք անհրաժեշտ են ՄՍՕ վերարտադրության կամ դրա փոխարինման համար մաշվածության տարբերությամբ: Հաշվարկները կատարելիս օգտագործում են հետևյալ մեթոդները.

- Սկզբնական ծախսերի որոշման մեթոդ,
- արժեքի տեղակալման մեթոդ,
- արժեքի վերականգնման մեթոդ:

Երբ օգտագործվում է **սկզբնական ծախսերի որոշման մեթոդը** կատարվում են հետևյալ աշխատանքները՝

- Հայտնաբերվում են պլանավորված նպատակներով և տնտեսավարման սուբյեկտի հաշվապահական հաշվետվության մեջ արտացոլված բոլոր փաստացի ծախսերը, որոնք կապված են ՄՍՕ ստեղծման, ձեռքբերման և օգտագործման վիճակին հասցնելու հետ,
- հաշվարկային տարվան են բերում տարբեր ժամանակների արժեքային գնահատականները,

- որոշում են ՄՍՕ բարոյական մաշվածության մեծությունը,
- որոշում են ՄՍՕ արժեքը որպես տարբերություն՝ բերված ծախսերի մեծության և մաշվածության միջև:

Ընդհանուր դեպքում ծախսերի կազմի մեջ ընդգրկվում են՝

ա) Գիտահետազոտական և փորձակոնստրուկտորային (ԳՀՓԿ) աշխատանքների իրականացման ծախսերը՝

- տեսական հետազոտությունների, պրոբլեմների մշակման, հատուկ գրականության ուսումնասիրման, արտոնագրային և տեղեկատվական որոնման ծախսերը,
- գիտական փորձերի անցկացման, վիճակագրական տվյալների հավաքման և դրանց մշակման ծախսերը,
- ԳՀՓԿ արդյունքների ամփոփման, հաշվետվությունների կազմման ծախսերը,
- գիտամեթոդական կամ գիտագործնական բնույթի կողմնակի կազմակերպությունների ծառայությունների ծախսերը:

բ) տեխնիկական փաստաթղթերի մշակման ծախսերը՝

- տեխնիկական նախագծի կատարման ծախսերը,
- հաշվարկների կատարման և նախագծահաշվարկային բնույթի ծառայությունների վճարման ծախսերը,
- դիզայնի համար կատարված ծախսերը:

գ) փորձնական նմուշների պատրաստման ծախսերը՝

- փորձնական նմուշի պատրաստման ծախսերը,
- փորձաքննությունների անցկացման և որակի ստուգման նպատակով կատարված ծախսերը:

դ) ԳՀՓԿ սպասարկման և ձևակերպման ծախսերը՝

- պահպանական փաստաթղթերի ձևակերպման, արտոնագրման և ուժի մեջ պահպանման ծախսերը,
- խորհրդատվական բնույթի կողմնակի կազմակերպությունների ծառայությունների ծախսերը,
- մարքեթինգի ծախսերը,
- տվյալ օբյեկտի ստեղծման և ներդրման հետ կապված գործուղումների և այլ ծախսերը:

ե) օբյեկտը գործողության մեջ դնելու ծախսերը՝

- ձեռնարկության արտադրական ղեկավարման գործունեության մեջ օբյեկտի ներդրման հետ կապված ծախսերը,
- օբյեկտի առևտրային իրացման հետ կապված և այլ ծախսեր՝ կախված գնահատվող ՄՍՕ առանձնահատկություններից:

**Արժեքի փոխարինման մեթոդի** օգտագործման ժամանակ օգտագործում են փոխարինման սկզբունքը, որը հիմնվում է նրա վրա, որ ՄՍՕ արժեքը որոշվում է այն գնով, որը պետք է վճարել նույնատիպ օգտակարության կամ նույնատիպ սպառողական արժեք ունեցող ակտիվի գնման ժամանակ: Այս դեպքում կատարվում են հետևյալ աշխատանքները.

- Հետազոտում են շուկան և հայտնաբերում համանման օգտակարություն ունեցող կամ համանման սպառողական արժեք ունեցող ակտիվների շրջանը և որոշում են նրանց արժեքը,
- բերում են տարբեր ժամանակների արժեքային գնահատականները հաշվարկային տարվա համեմատությամբ,
- որոշում են ՄՍՕ արժեքը:

**Արժեքի վերականգնման մեթոդի** օգտագործման ժամանակ ՄՍՕ արժեքը որոշում են որպես այն ծախսերի գումար, որոնք անհրաժեշտ են դրա իսկական պատճենի ստեղծման համար: Այս դեպքում կատարվում են ներքոհիշյալ աշխատանքները.

- Հայտնաբերում են բոլոր փաստացի ծախսերը, որոնք կարող են կապված լինել նախանշված նպատակով ՄՍՕ ստեղծման և օգտագործման պատրաստի վիճակի հասցնելու համար,
- գնահատման թվականով որոշում են հումքի, նյութերի, էներգակիրների, կոմպլեկտավորող իրերի գները, համապատասխան որակավորում ունեցող բանվորական ուժի միջձյուղային արժեքի մասին ինֆորմացիան և այլն,
- որոշում են ՄՍՕ արժեքը՝ որպես կանխատեսվող ծախսերի ընդհանուր մեծություն:

Ծախսային մոտեցումը հիմնվում է ՄՍՕ ձեռքբերման գործում ներդրողի հնարավորությունների ուսումնասիրման վրա և ելնում է նրանից, որ գնորդը, խելամիտ գտնվելով, չի վճարի օբյեկտի համար ավելի մեծ գումար, քան իրենից կպահանջվի ըստ նշանակության և որակի նույնատիպ օբյեկտի ձեռքբերման դեպքում, տեսանելի ժամանակամիջոցում՝ առանց էական ուշացումների: Այս մոտեցումը կարող է հանգեցնել օբյեկտիվ արդյունքների, եթե հնարավորություն կա ստույգ գնահատելու նույնատիպ օբյեկտի ստեղծման և մաշվածության ծախսերի մեծությունը շուկայում՝ առաջարկի և պահանջարկի հարաբերական հավասարակշռություն պարտադիր պայմաններում:

#### *Եկամտային մոտեցում*

Եկամտային մոտեցումը հիմնվում է քաղաքացիական շրջանառության մեջ մտցված ՄՍՕ ֆունկցիոնալ հատկությունների (ֆիզիկական, տեխնիկատնտեսական, բժշկական և այլն) և դրանց հետ կապված ապագա եկամուտների միջև պատճառական կապերի որոշման վրա, այսպես կոչված սպասման սկզբունքի:

Ընդհանուր դեպքում եկամուտը, որը ստացվել է ՄՍՕ օգտագործման արդյունքում, արտահայտվում է՝

ա) ՄՍՕ օգտագործման, ՄՍՕ նկատմամբ իրավունքի իրացումից ստացված դրամամուտքի մեծացմամբ,

բ) արտադրանքի, աշխատանքների, ծառայությունների իրացումից ստացված դրամամուտքի մեծացմամբ, որին հասել են ի հաշիվ.

- թողարկվող արտադրանքի տեսականու ընդլայնման,
- սպառման շուկաների ընդլայնման շնորհիվ ապրանքի արտադրության ծավալների ընդլայնման,
- արտադրանքի որակի, աշխատանքների, ծառայությունների որակի բարձրացման հիման վրա գների բարձրացման:

գ) արտադրության և արտադրանքի իրացման ծավալների պահպանության դեպքում ձեռնարկության շահույթի աճով, որը ստացվել է ի հաշիվ.

- արտադրանքի գնի կառուցվածքի փոփոխության, որը կարող է ստացվել արտադրական ռեսուրսների տնտեսման, արտադրական նորմերի կրճատման, արտադրական պրոցեսից բանվորական ուժի դուրսբերման հաշվին,
- տնտեսական կորուստների կրճատման:

դ) զուտ շահույթի տնտեսման հաշվին արտադրության զարգացման համար կապիտալ ներդրումների կրճատումով այն դեպքում, երբ մշակումը գնելն ավելի էժան է, քան սեփական ձեռնարկությունում դրա ստեղծման ֆինանսավորումը,

ե) այլ իրացումներից և գործունեության եկամուտներով՝ արտադրական ֆոնդերի, այդ թվում տարածքների ազատման հաշվին, որոնք կարող են լրացուցիչ ծանրաբեռնվել և բերել լրացուցիչ եկամուտ,

զ) չիրացված եկամուտներով՝ ֆինանսական ներդրումներից մուտքերի աճի հաշվին, որոնք արվել են ֆինանսականազավարման բնույթի օգտագործվող նոու-հաուսների հիման վրա,

է) երկարաժամկետ ժամանակամիջոցում ձեռնարկության ընդհանուր եկամտով՝ հնացող տեխնոլոգիայի փոխարեն՝ կենսական ցիկլի սկզբնական փուլերում գտնվել տեխնոլոգիայի ներդրման հաշվին: Այս դեպքում հնարավոր է եկամտի սկզբնական նվազում՝ առկա տարբերակի համեմատությամբ, ինչի պատճառով կանխատեսումային հաշվարկները անհրաժեշտ է կատարել կենսական ցիկլի առավել հնարավոր ժամկետների համար:

Եկամտային մոտեցումով ՄՍՕ արժեքը գնահատելիս իրականացնում են հետևյալ աշխատանքերը.

- ՄՍՕ ուսումնասիրությունը եկամուտ ստանալու առավել հնարավոր ուղիների տեսակետից,
- քաղաքացիական շրջանառության մեջ ՄՍՕ մտցնելու շուկայի հետազոտումը,
- համեմատվող օբյեկտների համար ընթացիկ շուկայական պայմանների վերլուծության հիման վրա պոտենցիալ եկամուտների կանխատեսումը՝ հաշվի առնելով տնտեսական եկամտի որոշման տարբերակները,
- կանխատեսվող շահույթի փոխարկումը կապիտալի՝ կապիտալացում, որը իր հերթին բաժանվում է ուղղակիի և եկամտայինի: Ուղղակի կապիտալացման վերլուծության

Ժամանակ որոշվում է եկամտի նշանակությունը մեկ ժամանակահատվածի համար (այսինքն՝ գնահատման թվականի նկատմամբ մեկ ժամանակային միջակայք առաջ) և բաժանվում է համապատասխան աճման կոպարի՝ կապիտալացման կոպարի վրա: Եկամտային կապիտալացման վերլուծության ժամանակ որոշվում է կանխատեսված նշանակությունը ապագայում, ընդ որում տարբեր ժամանակային արժեքային գնահատականները բերվում են հաշվարկային տարվա՝ դիսկոնտի կոպարի օգնությամբ,

- ՄՍՕ բարոյական մաշվածության (հնացման) մեծության որոշումը:

Եկամտային մոտեցումը նախատեսում է, որ այս կամ այն ՄՍՕ ձեռքբերման համար ոչ ոք չի ներդնի ավելի շատ գումարներ, եթե նույն եկամուտը կարելի է ստանալ այլ ձևով նույն ժամանակաընթացքի համար: Այս մոտեցումը կարող է հանգեցնել օբյեկտիվ արդյունքների, եթե կա ՄՍՕ օգտագործումից և կապիտալացման կոպարներից (դիսկոնտավորումից) ստացված եկամուտները գնահատելու հնարավորություն:

### *Շուկայական մոտեցում*

Շուկայական մոտեցումը հիմնված է ակտիվների՝ նույնատիպ և նույն ֆունկցիաները կատարողներից ՄՍՕ ընտրության հնարավորության վրա: Ընդ որում, մոտավորապես նույն նշանակությունը և օգտակարությունը ունեցող մի քանի ակտիվներից գնորդները պետք է հնարավորություն ունենան ընտրելու այն, որը բավարարում է նրանց ըստ որակային հատկանիշների, ներառյալ ֆունկցիոնալ հատկությունները, ընդունելի արժեքը, ծառայության ժամկետի տևողությունը, ակտիվի պաշտպանվածությունը և այլ բնութագրերը: Բացի դրանից, իրավատերը պետք է ունենա իր համար ամենանախընտրելի գնորդներն ընտրելու հնարավորություն և կարողանա նախընտրությունը տալ նրան, ով ավելի շատ կվճարի և նրան, որի հետ հնարավոր է հեռանկարային համագործակցություն:

Շուկայական մոտեցումը իրականացվում է հետևյալ մեթոդներով՝

- վաճառքի համեմատական վերլուծության մեթոդով,
- մտավոր սեփականության շուկայի մեթոդով (ռոյալտի/ռենտայից ազատման մեթոդով):

**Վաճառքի համեմատական վերլուծության** մեթոդը հիմնված է արդյունավետ գործող շուկայի սկզբունքի վրա, որտեղ աշխույժ վաճառվում և գնվում են նույնատիպ ակտիվներ, որոնք ընդունում են անկախ անհատական նշանակություններ: Այն նախատեսում է զուգադրել նախատեսված գործարքով ՄՍՕ արժեքի գնահատականը արդեն կայացած համանման գործարքի հետ:

Շուկայի միասին ինֆորմացիայի պակասության կամ ինֆորմացիայի պակաս ստույգության պայմաններում ՄՍՕ արժեքային գնահատականի փոխարեն ելքային տվյալները կարող են ներկայացվել ցուցանիշների խմբի տեսքով:

Մտավոր սեփականության շուկայի մեթոդը (ռոյալտի/ռենտայի ազատման մեթոդը) հիմնվում է այն ենթադրության վրա, որ իրավատիրոջ կողմից օգտագործվող ՄՍՕ իրեն չի պատկանում:

Ընդ որում հաշվի է առնվում, որ հասույթի մի մասը, որը նա պետք է վճարեր ՄՍՕ տիրոջը վարձատրության տեսքով, իրականում մնում է իր մոտ և դառնում է տվյալ ՄՍՕ ստեղծած լրացուցիչ շահույթը:

ՄՍՕ արժեքի գնահատման շուկայական մոտեցման կիրառության ժամանակ իրականացվում են հետևյալ աշխատանքները՝

- շուկայի հետազոտություն՝ գնահատվող օբյեկտին համանման օբյեկտների վաճառքի առաջարկությունների, կատարված գործարքների, գնանշման մասին ինֆորմացիայի հավաքման նպատակով,
- ինֆորմացիայի ընտրություն՝ նրա ստույգությունը բարձրացնելու և այն հանգամանքի հաստատման նպատակով, որ գործարքները կատարվել են ազատ շուկայական պայմաններում,
- ցուցանիշների ցանկի սահմանումը, որոնցով կատարվում է ՄՍՕ-ների համեմատությունը և օբյեկտների տարբերակիչ առանձնահատկությունների ազդեցության աստիճանի որոշումը դրանց արժեքի վրա,
- տվյալ ճյուղի համար ռոյալտիի միջին կոպարների որոշումը,
- տարբեր ժամանակների արժեքային գնահատականների բերումը հաշվարկային տարվան,
- պոտենցիալ եկամուտների կանխատեսումը, որոնք հիմնվում են երրորդ անձին հիպոտետիկ ռոյալտիից կամ ռենտային վճարումից ազատվելու վրա, ՄՍՕ օգտագործման իրավունքի կամ գնահատվող ՄՍՕ իրավունքի փոխարեն:

Շուկայական արժեքից տարբերվող գնահատման բազաների օգտագործման ժամանակ ՄՍՕ արժեքի գնահատումը պետք է կատարվի՝ հաշվի առնելով ՄՍՕ նեղ մասնագիտական օգտագործումը և համապատասխան գործողությունները, որոնք դրված են արժեքի որոշման հիմքում:

Շուկայական արժեքից տարբեր գնահատման տվյալներն օգտագործելիս իրականացվում են հետևյալ աշխատանքները.

- ՄՍՕ սպառողների շուկայի հետազոտում,
- ՄՍՕ հետ կապված բոլոր հատուկ պայմանների և սահմանափակումների հետազոտում,
- ՄՍՕ ուսումնասիրում կոնկրետ սպառողի համար եկամուտ ստանալու հնարավորության տեսակետից,
- կանխատեսվող շահույթի փոխարկումը կապիտալի,
- ՄՍՕ բորսայական մաշվածքի մեծության որոշումը:

**ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՐՅԵԿՏՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ**

**9. ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒԿԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ**

ՄՍ ԱՐԺԵՔԻ ԿՐԱ ԱԶՂՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐ

Տարբերում են ՄՍ առևտրական իրականացման երկու ուղիներ:

1. Օգտագործումը սեփական արտադրությունում:
2. Իրավունքներ գիջելը (վաճառքը) կամ արտոնագրեր տալը շահագրգիռ ֆիզիկական կամ իրավաբանական անձերին՝ լիցենզիոն պայմանագրերի հիման վրա:

Շատ տարածված է այն, որ գյուտարարները ընտրում են երկրորդ կետը, ինչը հետևանք է «ոչ լավ կյանքի»: Եվ իրոք, տնտեսապես ավելի շահավետ է չբաշխել շահույթը՝ թողնելով այն արտոնագրատիրոջ տնօրինության տակ: Ցավոք, ոչ բոլոր արտոնագրատերերն են գտնում ֆինանսական միջոցներ իրենց գյուտի կիրառությամբ արտադրություն կազմակերպելու նպատակով: Բայց և այնպես, դա միակ պատճառը չէ ՄՍ կիրառության բարդության առումով: Շատ հաճախ ինքնարժեքի մասը արտադրանքի գնի մեջ չափազանց բարձր է, քանի որ թանկ է աշխատավարձ և էներգետիկ ռեսուրսների վարձը: Ոչ շահութաբերության պատճառը կարող է լինել շուկաների հեռու գտնվելը, այսինքն՝ տրանսպորտային ծախսերը, բարձր արտահանման և ներմուծման տուրքերը, ներքին շուկայի հետամնացությունը: Պատկերացնենք այնպիսի իրավիճակ, երբ նախատեսվող արտադրությունից սպասվում է բարձր շահութաբերություն: Կան առաջարկություններ պոտենցիալ ներմուծողներից, բայց պարզվում է, որ իրենք իրենց երկրներում չեն կարողանում թույլտվություն ստանալ արտադրանքը ներկրելու համար: Մյուս կողմից, ներքին շուկան գերհագեցված է և առանց արտահանման, նոր արտադրության կազմակերպումը կորցնում է իր նպատակահարմարությունը:

Անհրաժեշտ է մշակել համապատասխան արտոնագրային քաղաքականություն: Եթե ստացվում է շահութաբեր առաջարկություն լիցենզիա գնողի կողմից, ապա սկսվում է նոր փուլ, երբ հաշվարկվում են արտադրության կազմակերպման տարբերակներ՝ ելնելով սպասվող վաճառքի արդյունքներից:

Ենթադրենք որևիցե հայ գյուտարար ստացել է արտոնագիր կիսահաղորդիչի բյուրեղ աճեցնող սարքի համար: Քանի որ բանկային վարկերը ՀՀ-ում շատ թանկ են, նա կատարում է մարքեթինգային հետազոտություններ և պարզում, որ Չինաստանում կատարվում են նմանատիպ հետազոտություններ և որ այդ երկրի պայմաններում արտադրության կազմակերպումը չափազանց շահութաբեր է: Նույն հետազոտությունների արդյունքում պարզվում է, որ եվրոպական շուկան մոտակա 6-8 տարիների ընթացքում այդ ապրանքի նկատմամբ ունի մեծ պահանջարկ, այսինքն, եթե արտոնագրատերը կազմակերպեր սեփական արտադրություն, նա հաջողություն կունենար եվրոպական շուկայում: Այդ իսկ պատճառով նա



որոշում է չվաճառել իր արտոնագիրը, կնքել լիցենզիոն պայմանագիր՝ արտոնագրով ստեղծվող տեխնոլոգիայի ժամանակավոր օգտագործման համար Չինաստանի շուկայի որոշակի սեգմենտում, իսկ լիցենզիայի վաճառքից ստացված գումարները օգտագործել վարկեր ստանալու և սեփական արտադրություն կազմակերպելու համար:

#### ՄՍ ԿՈՄԵՐՑԻՈՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Տեխնոլոգիաների հանձնումը և ձեռքբերումը առևտրական հիմքերի վրա, այսինքն արտոնագրված գյուտի հիման վրա բացառիկ իրավունքների առք ու վաճառքը կատարվում է որոշակի իրավաբանական գործաձևերի հիման վրա:

Այդ գործաձևերը թույլ են տալիս ստեղծել իրավաբանական փոխհարաբերություններ արտոնագրատիրոջ (հանձնող կողմ) և ֆիզիկական կամ իրավաբանական անձերի միջև (ընդունող կողմ), որոնք ձեռք են բերում այդ իրավունքները: Այդ հարաբերությունները ըստ իրենց բնույթի պայմանագրային են, այսինքն տեխնոլոգիան հանձնող կողմը համաձայնվում է, իսկ ընդունող կողմը պատրաստ է ընդունել տվյալ իրավունքը:

Տարբերում են երեք իրավաբանական ձև, որոնց համաձայն կատարվում է այդ պրոցեսը:

#### *1. Վաճառքի իրավունքի հանձնում*

Այս դեպքում արտոնագրատերը վաճառում է իր բացառիկ իրավունքը արտոնագրված գյուտի նկատմամբ՝ առանց ժամկետային սահմանափակումների և այլ պայմանների: Իրավաբանական ակտը, որի միջոցով արտոնագրատերը հանձնում է իր իրավունքները այլ անձի, ֆիքսվում է գրավոր ձևով, այսպես կոչված, «արտոնագրային իրավունքների փոխանցման ակտում»: Փոխանցումից հետո արտոնագրատերը կորցնում է իր իրավունքները, իսկ ստացող կողմը ձեռք է բերում բացառիկ իրավունքներ:

#### *2. Լիցենզիոն պայմանագիր*

Այս դեպքում արտոնագրված գյուտի տերը թույլ է տալիս այլ ֆիզիկական կամ իրավաբանական անձին կատարել որոշակի երկրում և սահմանված ժամանակահատվածում մեկ կամ ավելի գործողություններ, որոնց վրա գյուտի տերը ունի բացառիկ իրավունքներ: Այսպիսի թույլտվության հանձնումը կոչվում է լիցենզավորում, իսկ փաստաթուղթը՝ լիցենզիոն պայմանագիր: Արտոնագրատերը անվանվում է «լիցենզիատ», իսկ ֆիզիկական կամ իրավաբանական անձը, որը ստանում է թույլտվություն՝ «լիցենզիար»: Լիցենզիաները սովորաբար տրվում են որոշակի պայմաններով: Այդ պայմաններից մեկն այն է, որ լիցենզիարը խոստանում է վճարել լիցենզիատին որոշակի գումար, որոշակի ժամանակահատվածում: Այդ գումարի չափը կախված է արտոնագրված գյուտի օգտագործման աստիճանից: Կարող է նշվել նաև այն աշխարհագրական տարածքը, որտեղ լիցենզիատը կարող է վաճառել իր ապրանքը:

#### *3. «Նուու-հաու» պայմանագիր*

Տեխնոլոգիայի փոխանցման երրորդ ձևը վերաբերում է «նոու-հաու»-ին: Բացի պայմանագրային ձևից, «նոու-հաու» փոխանցվում է նաև նյութական տեսքով (փաստաթղթեր, լուսանկարներ, պերֆորացիոններ, միկրոֆիլմեր): «Նոու-հաու»-ն կարող է փոխանցվել ոչ նյութական ձևով, օրինակ՝ ընդունող կողմի աշխատակազմին որոշ գիտելիքների փոխանցմամբ: «Նոու-հաու»-ի փոխանցման պայմանագրում նշվում է գումարը, որը ընդունող կողմը պարտավորվում է տալ հանձնող կողմին:

ՄՏԱԿՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒՅՅԱՆ ԱՐԺԵՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Միացյալ Նահանգներում գնահատման նպատակներն են.

1. Հաշվառման դնելը,
2. հարկադրումը,
3. տրանսֆերտը (սեփականատիրոջ փոփոխումը),
4. դատական պրակտիկան:

Բոլոր այլ դեպքերը ընդգրկվում են այս չորս նպատակների մեջ:

Համաձայն ՀՀ կառավարությանն առընթեր արտոնագրային վարչությունում մշակված «Մտավոր սեփականության օբյեկտների գնահատում» Հայաստանի ստանդարտի նախագծի՝ ՄՍՕ արժեքի տնտեսական հասկացությունը արտահայտում է այն օգուտը, որը ունի տվյալ ՄՍՕ իրավատերը դրա գնահատման պահին: ՄՍՕ արժեքը տվյալ ՄՍՕ գնահատման արդյունքն է՝ դրամային արտահայտությամբ, ժամանակի ֆիքսված պահին և համաձայնեցված գնահատման նպատակներից ընտրված արժեքի որոշման մեթոդին: Ընդհանուր դեպքում ՄՍՕ արժեքի գնահատման նպատակներն են.

1. ՄՍՕ արժեքի ներառումը տնտեսավարման սուբյեկտների կանոնադրական կապիտալի (ֆոնդի) մեջ,
2. ոչ նյութական ակտիվների հաշվապահական հաշվառման ենթարկելը,
3. ՄՍՕ-ի նկատմամբ իրավունքի առք ու վաճառքը (զիջելը),
4. ՄՍՕ օգտագործման լիցենզիայի առք ու վաճառքը,
5. ՄՍՕ ստեղծումը,
6. պետական սեփականության ապապետականացումը և սեփականաշնորհումը,
7. ՄՍՕ ունեցող ձեռնարկության լուծարումը,
8. ՄՍՕ գրավ դնելը,
9. ՄՍՕ ապահովագրումը,
10. ՄՍՕ բաժանումը, ժառանգումը, նվիրատվությունը կամ առանց փոխանցման հանձնումը,
11. ՄՍՕ-ի նկատմամբ գույքային իրավունքների մասի որոշումը,
12. ՄՍՕ մրցույթների, աճուրդների և սակարկության մեկնարկային գնի որոշումը,
13. հարկերի, տուրքերի և գանձման շահերի հաշվարկը,
14. գույքային վեճերի լուծումը,
15. վնասի փոխհատուցումը,

16. ձեռնարկության արժեքի գնահատումը,
17. ներդրման նախագծերի փորձաքննությունը:

ՄՍՕ արժեքի գնահատման ամենատարածված նպատակները բաժանվում են երկու հիմնական խմբերի.

1. ՄՍՕ արժեքի գնահատման նպատակներ, որոնք կապված են ֆինանսական հաշվետվության հետ,
2. ՄՍՕ արժեքի գնահատման նպատակներ, որոնք կապված են ՄՍՕ օգտագործման հետ:

#### ՄՍՕ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Ձեռներեցությունը այն երկրներում, որոնք ունեն զարգացած շուկայական տնտեսություն, ընդունված է ուսումնասիրել նրա դասական կամ ինովացիոն մոդելի պատկանելության դիրքերից: Ինովացիոն մոդելի հիմքում դրված է նորարարությունը: Այս դեպքում առաջին պլան է մղվում արտադրանքի փոխանակելիությունը, սպառողների ապագա պահանջմունքերը բավարարելու հնարավորությունը, կողմնորոշումը նորարարությունների ներդրումների վրա:

Կան մի քանի ուղղություններ ձեռնարկության մտավոր ռեսուրսները ոչ նյութական ակտիվներ դարձնելու գործում:

#### ՄՍՕ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԵՋ

Երբ ստեղծվում է նոր ձեռնարկություն, ձեռնարկատերերին շատ ձեռնտու է ընդգրկել ՄՍ կանոնադրական կապիտալում, այսինքն դրա օգտագործման իրավունքը: Այդ իրավունքը ձևակերպվում է համապատասխան լիցենզիոն պայմանագրով: Երբ բոլոր բացառիկ իրավունքները, որոնք տրվում են արտոնագրով, փախանցվում են արտոնագրատերերի կողմից այլ ֆիզիկական կամ իրավաբանական անձի, նշանակում է որ տեղի է ունեցել իրավունքների զիջում: «Լիցենզիա» բառը նշանակում է «իրավունք», «թույլտվություն»: ՄՍՕ լիցենզիա տալը առևտրային գործարք է, որը ձևակերպվում է լիցենզիոն պայմանագրի միջոցով: Տարբերում են արտոնագրային, ոչ արտոնագրային և հիբրիդ լիցենզիաներ: Ոչ արտոնագրային լիցենզիաները սովորաբար կոչվում են «Պայմանագրեր նոու-հաու-ի մասին»: Հանձնման ենթական կարող են լինել արտոնագրային պաշտպանություն չունեցող գիտելիքներ, արտադրության գաղտնիքներ: Հիբրիդային լիցենզիաները այն լիցենզիաներն են, որոնք կնքվել են արտոնագրային հայտի նկատմամբ:

#### ԳՆՈՒՄ-ՎԱՃԱՈՔ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՄԻՋՈՑՈՎ

Լիցենզիոն պայմանագիր կնքող կողմերի վերջնական նպատակն է տեխնոլոգիայի և դրա օգտագործման իրավունքը այս կամ այն արտադրության հանձնելը: Կարող է որպես

նպատակ նշվել արտադրվող ապրանքի իրացումը: Լիցենզիայի պայմանագիրը բաղկացած է հետևյալ բաժիններից:

1. **Պայմանագրի առարկան.** Այս բաժնում որոշվում է լիցենզիայի առարկան, տարածքային սահմանները, իրավունքների շրջանակները և դրանք հանձնելու պայմանները, ՄՍՕ ձեռնարկությունում օգտագործելու համար տեխնիկական և այլ օգնության տեսակները և ծավալները: Ձեռք բերելով բացառիկ լիցենզիա՝ գործարարը, որպես օրենք, իր վրա վերցնում է պարտավորություններ, ապահովել արտադրանքի վերապահված ծավալը:
2. **Տեխնիկական փաստաթղթայնություն.** Այս բաժնում ուշադրություն է դարձվում փաստաթղթերի լեզվի, նրանց փոխանցման տեղի և ժամանակի վրա:
3. **Երաշխավորություններ.** Տարբերում են երկու տեսակի երաշխավորություններ. պարտադիր, որոնք բխում են օրենքից և կամավոր, որոնք իրենց վրա են վերցնում պայմանավորվող կողմերը:

Լիցենզիարը երաշխավորում է լիցենզիատին, որ արտադրության ընթացքում կապահովվեն նախատեսված ցուցանիշները, եթե վերջինս իր հերթին ապահովի լիցենզիատի կողմից տրված փաստաթղթերում նշված տեխնիկա տնտեսական պահանջները:

#### ԱՆՀԱՏՈՒՅՑ ՓՈԽԱՆՑՈՒՄ

Ինչպես հայտնի է, նախկին ԽՍՀՄ-ում գիտատեխնիկական նվաճումների օգտագործումը անվճար էր: Կար պետական մենաշնորհ արտոնագրերի նկատմամբ, որը թույլ չեր տալիս կազմակերպել ներքին լիցենզիայի առևտուր երկրի տարածքում: Այսօր ՄՍ անհատույց փոխանցումը առկա է միջազգային կազմակերպությունների պրակտիկայում, որոնք այդ ձևով օգնում են զարգացող երկրներին:

#### ՎԱՐՉԱՏՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

Կողմերի բանակցությունների ժամանակ, երբ պատրաստվում է պայմանագրի նախագիծը, կարևորագույն հարցերից մեկը ՄՍՕ օգտագործման վարձատրման չափի որոշումն է: Վաճառողը կատարում է արժեքի գնահատում՝ հաշվի առնելով այլընտրանքային տեխնոլոգիաների առկայությունը, արտադրական հզորությունները և գնող կողմի շահութաբերությունը:

Տարբերում են երեք տեսակի վարձատրություն.

1. Լիցենզիատի կողմից իրացված արտադրանքի արժեքից տոկոսային հատկացման բազայի վրա (ռոյալտի),
2. միանվագ (պաուշալ) վարձատրություն, որը կախված չէ առևտրական արդյունքներից և տրվում է պայմանագիրը գործելու առաջին փուլերում մեկ կամ մի քանի փուլերով,
3. կոմբինացված տարբերակ, որի դեպքում որոշակի գումար վարձատրվում է միանվագ, իսկ մնացած մասը՝ որպես ռոյալտի:

## 10. ՄՏԱԿՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԻՄՔԵՐԸ

ՄՏԱԿՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ  
ՍԱՀՄԱՆԱՓՎԱԿՈՒՄՆԵՐԸ

Մտավոր սեփականության գնահատումը իրականացվում է հետևյալ դեպքերում`

- Պետական կամ ինքնակառավարվող մտավոր սեփականության հիման վրա ձեռնարկությունների (տնտեսական ընկերակցությունների) ստեղծում,
- մտավոր սեփականության պետական կամ ինքնակառավարվող բաժնեմաս ունեցող պետական, կոմունալ ձեռնարկությունների և տնտեսական ընկերակցությունների վերակազմավորում, սնանկացում, լուծարում,
- տնտեսական ընկերակցությունների մասնակիցների կամ սահմանադիրների ներդրումների արժեքի որոշում, եթե ստեղծվող տնտեսական ընկերակցության մեջ ընդգրկվում է մտավոր սեփականությունը, կամ եթե այդպիսի ընկերակցությունից դուրս է գալիս մասնակիցը կամ սահմանադիրը,
- մտավոր սեփականության սեփականաշնորհում կամ այլ օտարում.
- հաշվապահական հաշվառման նպատակներով հիմնական ֆոնդերի վերագնահատում,
- մտավոր սեփականության գրավադրում,
- օրենսդրությամբ սահմանված դեպքերում վնասի և կորստի չափորոշում,
- դատարանի որոշմամբ հասարակության շահերը պաշտպանելու անհրաժեշտություն:

Գնահատման գործունեության սուբյեկտների` տնտեսվարող սուբյեկտների կողմից չի թույլատրվում իրականացնել մտավոր սեփականության գնահատում հետևյալ դեպքերում`

- եթե մտավոր սեփականությունը պատկանում է այդ սուբյեկտներին կամ դրանց կազմում աշխատող գնահատողներին,
- եթե գնահատող անձը բարեկամական կապեր ունի ֆիզիկական անձանց կամ իրավաբանական անձանց ղեկավարի հետ:

ՄՏԱԿՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈՂԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Մտավոր սեփականության գնահատման մեթոդական կարգավորումը իրականացվում է մտավոր սեփականության գնահատման վերաբերյալ նորմատիվ իրավական ակտերին, մտավոր սեփականության գնահատման ստանդարտներին, մեթոդական և այլ նորմատիվ իրավական ակտերին համապատասխան, որոնք մշակվել են` ելնելով ստանդարտների

կանոնակարգերի պահանջներից և հաստատված են պետության կողմից լիազորված մարմնի կողմից:

Մտավոր սեփականության գնահատման նորմատիվ իրավական ակտերի մշակումն իրականացվում է գնահատման միջազգային ստանդարտների հիման վրա:

Մտավոր սեփականության արժեքի (գնի) որոշման հարցերը կարգավորող նորմատիվ իրավական ակտերը չպետք է հակասեն մտավոր սեփականության գնահատման ստանդարտներին: Գնահատման ստանդարտները պետք է պարունակեն հասկացությունների և տերմինների սահմանումներ, այդ թվում՝ շուկայական արժեքի հասկացությունը, գնահատման սկզբունքներ, մեթոդական մոտեցումներ և մտավոր սեփականության գնահատման իրականացման առանձնահատկություններ՝ կախված գնահատման նպատակներից, մտավոր սեփականության գնահատման հաշվետվության բովանդակության նկատմամբ պահանջներ և հաշվետվության գրախոսման կարգը:

Մտավոր սեփականության գնահատման ստանդարտներում սահմանվում են գնահատող անձի կողմից մտավոր սեփականության արժեքի նկատմամբ մեթոդական մոտեցումների օգտագործման պայմանները և մտավոր սեփականության արժեքի շուկայական տեսակների օգտագործման նկատմամբ սահմանափակումները: Ընդ որում, եթե գործող օրենսդրությամբ կամ նորմատիվ իրավական ակտերով, մտավոր սեփականության գնահատման պայմանագրով, դատարանի վճռով չի որոշվել արժեքի տեսակը, որն անհրաժեշտ է որոշել գնահատման արդյունքում, որոշվում է շուկայական արժեքը: Եթե շուկայական արժեքը անհնար է որոշել, ապա մտավոր սեփականությունը գնահատելիս գնահատող անձը ինքն է որոշում արժեքի տեսակը:

Մտավոր սեփականության արժեքի գնահատման ստանդարտները պարտադիր են գնահատման գործունեության սուբյեկտների համար՝ նրանց կողմից մտավոր սեփականության գնահատումն իրականացնելիս:

Համատեղ տնտեսական գործունեություն իրականացնելու դեպքում մտավոր սեփականության գնահատումը, որը ներդրվում է տնտեսավարման օտարերկրյա սուբյեկտների կողմից, իրականացվում է մտավոր սեփականության գնահատման նորմատիվ իրավական ակտերի համաձայն:

ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԻՄՔԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Մտավոր սեփականության գնահատումն իրականացվում է գնահատման գործունեության սուբյեկտի՝ տնտեսական գործունեության սուբյեկտի և գնահատման պատվիրատուի միջև պայմանագրի հիման վրա:

Մտավոր սեփականության գնահատում իրականացնելիս պայմանագիրը կնքվում է գրավոր ձևով և կարող է լինել երկողմ կամ բազմակողմ: Բազմակողմ պայմանագրի կնքման դեպքում, բացի գնահատման պատվիրատուից, որպես պայմանադիր կողմ կարող է հանդես

գալ վճարողը, եթե գնահատման գործունեության սուբյեկտի ծառայությունների վճարումը կատարում է այլ անձ, այլ ոչ թե պատվիրատուն:

Գնահատման պատվիրատուները պարտավոր են ապահովել գնահատման ենթակա մտավոր սեփականությանը ծանոթանալու և գնահատվող մտավոր սեփականության մասին անհրաժեշտ և ստույգ տեղեկատվություն ստանալու հնարավորությունը:

Մտավոր սեփականության գնահատման պայմանագրի կողմերը (պատվիրատու, վճարող) ունեն գնահատման գործունեության սուբյեկտի՝ տնտեսվարման սուբյեկտի ազատ ընտրության իրավունք:

Մտավոր սեփականության գնահատման պայմանագրի էական կետերն են՝

- Գնահատման ենթակա մտավոր սեփականության որոշումը.
- գնահատման նպատակը.
- մտավոր սեփականության արժեքի տեսակը, որն անհրաժեշտ է որոշել.
- գնահատման թվականը.
- մտավոր սեփականության գնահատման աշխատանքների կատարման ժամկետը.
- աշխատանքների վճարման չափը և կարգը.
- պայմանագրի կողմերի իրավունքները և պարտավորությունները.
- գնահատման արդյունքների, նրա կատարման ժամանակ ստացված տեղեկատվության գաղտնիության ապահովման պայմանները.
- կողմերի պատասխանատվությունը պայմանագիրը չկատարելու կամ պայմանագրի պահանջները ոչ պատշաճ ձևով կատարելու համար.
- գնահատումն իրականացնելու և պատվիրատուի կողմից նրա արդյունքներն ընդունելու ժամանակ առաջացած վեճերի լուծման կարգը:

Մտավոր սեփականության գնահատման հաշվետվությունը փաստաթուղթ է, որը պարունակում է եզրակացություններ՝ գնահատվող մտավոր սեփականության արժեքի մասին, և հաստատում է գնահատման գործունեության սուբյեկտի՝ տնտեսվարման սուբյեկտի կողմից մտավոր սեփականության գնահատման ընթացակարգի կատարումը՝ պայմանագրի համաձայն: Հաշվետվությունը ստորագրվում է գնահատող անձանց կողմից, որոնք անմիջականորեն կատարել են մտավոր սեփականության գնահատումը, և վավերացվում է գնահատման գործունեության սուբյեկտի ղեկավարի կնիքով և ստորագրությամբ:

Մտավոր սեփականության գնահատման հաշվետվությանը ներկայացվող պահանջները, դրանց ձևակերպման և գրախոսման կարգը որոշվում են մտավոր սեփականության գնահատման սնդարտներով: Մտավոր սեփականության գնահատման հաշվետվությունը պետք է պարունակի կատարված գործողությանների բովանդակությունն ու էությունը բացահայտող բաժիններ, ինչպես նաև մտավոր սեփականության գնահատման համար օգտագործված նորմատիվ իրավական բազան:

Մտավոր սեփականության գնահատման ակտը փաստաթուղթ է, որը պարունակում է գնահատվող մտավոր սեփականության արժեքի մասին եզրակացություններ և հաստատում է գնահատման գործունեության սուբյեկտի՝ պետական իշխանության կամ տեղական

ինքնակառավարման մարմնի կողմից մտավոր սեփականության գնահատման գործընթացի ինքնուրույն կատարումը: Եթե մտավոր սեփականության գնահատման ընթացակարգով մտավոր սեփականության գնահատման ակտը կազմելու համար նախատեսված է գնահատման գործունեության սուբյեկտի՝ տնտեսվարման սուբյեկտի կողմից մտավոր սեփականության լրիվ կամ մասնակի գնահատում, մտավոր սեփականության գնահատման հաշվետվությունը կցվում է մտավոր սեփականության գնահատման ակտին: Մտավոր սեփականության գնահատման ակտը պետք է հաստատվի պետական իշխանության մարմնի կամ պետական ինքնակառավարման մարմնի կողմից:

#### ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

ՄՍ տարբեր օբյեկտների նկատմամբ իրավունքների արժեքի գնահատումը կատարվում է համաշխարհային պրակտիկայում լայն տարածում գտած ներքոհիշյալ երեք մոտեցումներով.

1. ծախսային
2. համեմատական
3. եկամտային

Այս մոտեցումներից յուրաքանչյուրը ունի իր մեթոդները:

#### ԾԱԽՍԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄ

Համաձայն այս մոտեցման ակտիվի արժեքը գնահատվում է ըստ ծախսերի, որոնք անհրաժեշտ են դրա վերարտադրության կամ փոխանակման համար, հանած ուղղումները ակտիվի հաշվարկված մաշեցման վրա: Եթե նյութական ակտիվներին բնորոշ է ֆիզիկական մաշվածքը, ֆունկցիոնալ և տնտեսական ծերացումը, ապա ոչ նյութական ակտիվներին բնորոշ է ժամանակային և բարոյական մաշվածությունը: Առաջինի տակ պետք է հասկանալ ակտիվի լրիվ մաշվածության ժամկետը, ինչը որոշվում է ձեռնարկության հաշվապահությունում:

Բարոյական մաշվածությունը կապված է նոր, ավելի առաջատար ոչ նյութական ակտիվների ի հայտ գալու հետ, որոնք կատարում են որոշակի իրերի արտադրության նույն ֆունկցիան: Երբ արտոնագիրը ենթարկվում է բարոյական մաշվածության, ընկնում է ստացվելիք շահույթը:

Սովորաբար ծախսային մոտեցումը օգտագործվում է այն ոչ նյութական ակտիվների գնահատման համար, որոնք չեն ձևավորելու ապագա եկամուտներ և ընթացիկ պահին շահույթ չեն ապահովում: Սովորաբար այդ ակտիվները ունեն սոցիալական նշանակություն (էկոլոգիա, տիեզերք և այլն):

#### **ա) Սկզբնական ծախսերի որոշման մեթոդ**

Ակտիվի արժեքը, որը որոշվում է այս մեթոդով, կազմվում է պատմագրական սկզբունքով, քանի որ առաջին հերթին հիմնվում է փաստացի կատարված ծախսերի վրա, որոնք դուրս են բերվում վերջին տարիների ձեռնարկության հաշվապահական



հաշվետվությունից: Ընդ որում, ուշադրություն է դարձվում երկու բաղադրիչների վրա՝ ակտիվի մեծության և ստեղծման պահի: Անհրաժեշտության դեպքում նախօրոք կատարված ծախսերը ինդեքսավորվում են՝ հաշվի առնելով վաղեմության ժամկետը:

**բ) Արժեքի փոխարինման մեթոդ**

Այս մեթոդի շրջանակներում կիրառվում է փոխարինման սկզբունքը, ինչը ամրագրում է, որ սեփականության առավելագույն արժեքը կորոշվի այն մինիմալ գնով, որը պետք է վճարել համանման օգտակարություն ունեցող կամ համանման սպառողական արժեքով ակտիվ գնելու համար: Այդ արժեքը կոչվում է նոր ակտիվի արժեք, որն ունի նույնատիպ ֆունկցիոնալ հնարավորություններ և օգտագործման տարբերակներ, բայց ոչ պարտադիր արտաքին տեսք:

**գ) Արժեքի վերականգնման մեթոդ**

Ակտիվի վերականգնման արժեքը որոշվում է որպես ծախսերի գումար, որոնք անհրաժեշտ են գնահատվող ակտիվի նոր, իրական պատճենի ստեղծման համար: Այդ ծախսերը պետք է հիմնվեն հումքի, նյութերի, էներգակրիչների ընթացիկ գների վրա, և համապատասխան որակավորում ունեցող աշխատողների միջին ճյուղային վարձատրության վրա: Արժեքի վերականգնման մեթոդը ամենաընդունելին է, երբ պետք է հաշվարկել բացառիկ ոչ նյութական ակտիվների արժեքը: Այս մեթոդը առավել ընդունելի է, երբ հաշվարկվում է եզակի բնույթ կրող ոչ նյութական ակտիվի արժեքը:

**ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄ**

Համեմատական մեթոդները օգտագործվում են միայն այն դեպքում, երբ գնորդը հնարավորություն ունի ընտրելու այդ ակտիվը նմանատիպ, նույն գործառույթը կատարող ակտիվներից: Սովորաբար այդ ակտիվները վերաբերում են հեղինակային իրավունքի դասին պատկանող ակտիվներին:

**ա) Համեմատական վաճառքի մեթոդ**

Մեթոդի էությունը ոչ նյութական ակտիվների շուկայական արժեքները փնտրելու մեջ է, որոնք համեմատելի են գնահատվող օբյեկտի հետ՝ ըստ իրենց նշանակության և օգտակարության: Այս մեթոդը ենթադրում է նախատեսվող գործարքի համեմատումը արդեն կատարված գործարքի հիմնական տնտեսական ցուցանիշների հետ: Սովորաբար դա կապիտալի շրջանառությունն է կամ գյուտի, ապրանքային նշանի օգտագործումից ստացվող զուտ շահույթը:

**բ) Ռոյալտիից ազատվելու մեթոդ**

Այս մեթոդի հիմքում արվում է ենթադրություն, որ ՄՍ, որը օգտագործվում է տվյալ ձեռնարկությունում, չի պատկանում իրավատիրոջը, այսինքն՝ ձեռնարկությունը ազատված է

նրան փոխհատուցում վճարելուց: Ստեղծվում է լրացուցիչ շահույթ, որով որոշվում է գնահատվող ակտիվի շուկայական արժեքը:

#### ԵԿԱՄՏԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄ

Այս մոտեցման մեթոդաբանական հիմնվում է ոչ նյութական ակտիվի ֆիզիկական, տեխնիկա տնտեսական հատկությունների և ապագա եկամուտների կապերի հայտնաբերման մեջ: Դրա համար օգտագործում են դիսկոնտավորման և կապիտալացման մեթոդները:

#### ա) Դիսկոնտավորման մեթոդը

Այս մեթոդի հիմքում դրված է հետևյալ ֆինանսական օրենքը. այսօրվա դոլարը ավելի թանկ է, քան վաղվա: Հարաբերությունը ակտիվի ընթացիկ և ապագա արժեքների միջև նկարագրվում է ապագա դրամային հոսքերում՝ զեղչի աճի բանաձևով, բարդ տոկոսների մեթոդով: Այս մեթոդում օգտագործվում է մեկ այլ ֆինանսական օրենք. առանց ռիսկի գործոնի ԱՄՆ դոլարը ավելի թանկ է, քան ռիսկի գործոնի առկայությամբ: Այդ իսկ պատճառով ոչ ռիսկային կապիտալ ներդրումների դիսկոնտավորման դրույքը մինիմալ է, իսկ բարդ ռիսկ ունեցող կապիտալ ներդրումների համար՝ մաքսիմալ:

Ոչ նյութական ակտիվների կյանքի պարբերաշրջանը բաժանվում է երկու հատվածների՝ կանխատեսվող (մոտ 3-10 տարի) և հետկանխատեսվող, որը ձգտում է անսահմանության: Ակտիվի արժեքը որոշվում է կանխատեսվող և հետկանխատեսվող ժամանակահատվածների դրամական հոսքերի ընթացիկ արժեքների գումարի միջոցով:

#### բ) Եկամուտների կապիտալացման մեթոդներ

Կապիտալացման տակ սովորաբար հասկացվում է որևիցե գույքից եկամուտների փոխանցումը դրա արժեքի մեջ: Տարբերում են ուղղակի կապիտալացման և ըստ վերադարձելիության նորմի կապիտալացման մեթոդներ: Առաջին մեթոդը հիմնականում օգտագործվում է մնացորդային արժեքի հաշվարկի համար և այն ակտիվների գնահատման համար, որոնց կյանքի տևողությունը սահմանափակ չէ: Այդ մեթոդի էությունը նրանում է, որ ա) հայտնաբերվում են զուտ եկամտի չափերը և աղբյուրները, բ) որոշվում է կապիտալացման դրույքը և գ) որոշվում է ակտիվի արժեքը որպես քանորդ զուտ եկամտի բաժանումից՝ կապիտալացման դրույքի վրա:

### 11. ՄՏԱԿՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԻՄԱՍՏԱԿՈՐՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

#### ՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Այս գնահատման մեթոդը օգտագործվում է այն դեպքում, երբ ծագում է անհրաժեշտություն ընտրել նույնատիպ գյուտերից ամենաարդյունավետը՝ հետագա

արդյունաբերական օգտագործման համար: Դրա համար օգտագործվում է իմաստավորության ցուցանիշ հասկացությունը, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$P = \frac{P_0 B_h}{3} \quad (1)$$

որտեղ՝

$P_0$  - գյուտի օգտակարությունը հաջողության դեպքում,

$B_h$  – հաջողության հավանականությունը,

3 - գյուտի իրականացման համար անհրաժեշտ ծախսերը:

Վերը բերված բանաձևի օգտագործման համար բոլոր բաղադրիչները պետք է արտահայտել հարաբերական մեծությունների օգնությամբ:

Ելնելով գյուտի նպատակներից կազմվում է աղյուսակ, որի ձախ մասում հորիզոնական դուրս են գրվում բոլոր տեխնիկատնտեսական ցուցանիշները, որոնք կարող են բարելավվել տվյալ գյուտի ներդրման դեպքում: Աղյուսակի վերևի մասում ուղղահայաց տողով նշվում են բոլոր այն պահպանող փաստաթղթերը, որոնք ենթարկվել են վերլուծության՝ վերը նշված նպատակները հայտնաբերելու համար: Աղյուսակի ներքին վանդակներում «+» նշանով ամրագրվում են համապատասխան գյուտերով նպատակների հասնելու դեպքերը:

Յուրաքանչյուր նպատակի կշռային գործակիցները որոշվում են հետևյալ բանաձևի օգնությամբ:

$$K_i = \frac{N_i}{\sum N_i} \quad (2)$$

որտեղ՝

$N_i$  – համապատասխան նպատակին վերաբերող «+» նշանների քանակն է,

$\sum N_i$  - աղյուսակում ներկայացված «+» նշանների ընդհանուր քանակն է:

Գյուտի օգտակարությունը հաջողության դեպքում ( $P_0$ ) որոշվում է այն նպատակների կշռային գործակիցների գումարից, որոնք իրականացվում են այդ գյուտի օգտագործումից:

Հաջողության հավանականությունը գյուտի օգտագործման ժամանակ ( $B_h$ ) կախված է գնահատման պահին դրա մշակվածության աստիճանից: Գրականության մեջ խորհուրդ է տրվում օգտագործել չորս մակարդակներ.

$B_h = 0.25$ , եթե չկա ոչ մի տեղեկություն գյուտի օգտագործման մասին: Հավանականության այս ստորին սահմանը ընտրվել է ելնելով այն փաստից, որ միայն գյուտերի 25% գտնում են իրենց օգտագործումը:

$B_h = 0.5$  այն դեպքում, երբ առկա են տեղեկություններ փորձնական ստուգումների մասին, որոնք հաստատում են գյուտի նպատակները:

$B_n = 0.75$  այն դեպքում, երբ գրականության մեջ տպագրված են կոնկրետ տեխնիկատնտեսական ցուցանիշներ, որոնք ստացվել են գյուտի ներդրման ժամանակ:

$B_n = 1.0$  համապատասխանում է այն դեպքին, երբ կան տեղեկություններ տվյալ գյուտով սերիական արտադրության մասին:

Գյուտի իրականացման համար անհրաժեշտ ծախսերը (3) որոշվում են այն ենթադրությամբ, որ կա համեմատության համար բազային օբյեկտ, որը գտել է լայն տարածում համաշխարհային պրակտիկայում այն ժամանակահատվածի համար, որը նախորդել է արտոնագրային հետազոտությունների անցկացմանը:

$$3 = \frac{K_n}{K_6} \quad (3)$$

որտեղ  $K_n$  – այն ֆունկցիոնալ բաղադրիչների քանակն է, որոնք կազմում են գյուտի օբյեկտի կառուցվածքը,  $K_6$  - այն ֆունկցիոնալ բաղադրիչների քանակն է, որոնք կազմում են բազային օբյեկտի կառուցվածքը:

Քանի որ բոլոր բաղադրիչները (1) բանաձևում հարաբերական մեծություններ են և տատանվում են 0-1 միջակայքում, ապա (P) մեծությունը նույնպես կտատանվի այդ սահմաններում: Դա թույլ է տալիս նույնատիպ գյուտերից ընտրել ապագա ներդրման համար այն գյուտը, որի ցուցանիշը ավելի մոտ է 1-ին:

### Օրինակ

Հայարտոնագիրը տվել է արտոնագրեր «Գևորգ-Գրիմ» գիտա-ինվեստիցիոն ձեռնարկություններում մշակված հինգ օգտակար սարքերի համար, որոնք ունենալով մեկ ընդհանուր բաղադրիչ, միմյանցից տարբերվում են իրենց ֆունկցիոնալ նշանակություններով: Աղյուսակ 1-ում բերված են այդ սարքավորումների տեխնիկատնտեսական ցուցանիշները.

N	Տեխնիկա-տնտեսական ցուցանիշները	Օգտակար սարքերի անվանումները				
		Մանրէագերծման պահարան «Արեգ 307»	Ծավալային ախտահանիչ «Արեգ 308»	Դյուրակիր մանրէագերծիչ «Արեգ 309»	Միկրոֆիլտրերի վերականգնիչ «Արեգ 312»	Ջրի ախտահանիչ «Արեգ 313»
1	Ստերիլիզացիոն բաժնի ծավալը (լ.)	170		6		5, 15, 50
2	Մանրէագերծման ենթարկվելու տարածքների ծավալը, (մ <sup>3</sup> )		0.5 – 1.5			
3	Ախտահանման ենթարկվող տարածքների ծավալը, (մ <sup>3</sup> )		10-150			
4	Մշակման տևողությունը, (ժամ)	0.5, 1, 2	0.5, 1, 2	1	10 ֆիլտր 1 ժամում	0.5, 1, 2
5	Սպառման հզորությունը, (վտ.)	50	100	220 վտ. ցանցից – 7 12 վտ. ցանցից – 10	400	20, 70, 200
6	Արտաքին չափերը, (մ.)		0.15x0.2x0.55		0.48x0.52x1.1	
7	Չլիցքավորված սարքի քաշը, (կգ.)			3.5		

Հաջորդ քայլում, օգտագործելով վերը նշված սարքերի գովազդային պրոսպեկտները, դուրս են գրվում այն նպատակները, որոնք հետապնդել են գյուտարարները այդ սարքերը մշակելիս: Դրանք բերված են N2 աղյուսակում, ինչը իրենից ներկայացնում էրկչափանի մատրիցա, որի ձախ կողմում նշված են այն տեխնիկատնտեսական ցուցանիշները, որոնց բարելավմանը ձգտում էին սարքավորումներ մշակողները: Հորիզոնական տողերի և ուղղագիծ սյուների հատման վանդակներում (+) նշանը դրվում է այն դեպքում, երբ ստացվում է սպասվող արդյունքը:

N	Օգտակար սարքերի նպատակները	Սարքերի անվանումները					Գովազդային տեղեկագրերի քանակը, որտեղ նշված է տվյալ նպատակը
		«Արեգ 307»	«Արեգ 308»	«Արեգ 309»	«Արեգ 312»	«Արեգ 313»	
1	Արդյունավետության բարձրացում	+	+	+	+	+	5
2	Շահավետության բարձրացում	+	+	+		+	4
3	Էկոլոգիական բարելավումներ	+	+	+	+	+	5
4	Ջերմային ազդեցության բացառություն	+		+		+	3
5	Քիմիական ազդեցության բացառություն	+		+		+	3
6	Նպատակները						
	ա) բժշկական սարքերի մշակում	+		+			2
	բ) տարածքների ախտահանում		+				1
	գ) ոչ դուրեկան հոտերի վերացում		+				1
	դ) բարձր շարժականություն			+			1
	ե) մանրէագերծող հատկությունների վերականգնում				+		1
զ) խմելու ջրի մաքրում					+	1	
7	Ընդամենը	6	5	7	3	6	27

Ինչպես երևում է աղյուսակ 2-ից, տարբեր նշանակություն ունեցող օգտակար սարքերը կարող են ապահովել նույն նպատակները: Յուրաքանչյուր նպատակի կշռային գործակիցը որոշվում է (2) բանաձևի միջոցով: Հաշվարկված թվերը բերված են աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3

N	Օգտակար սարքերի նպատակները	Նշանակումը	Գործակիցի մեծությունը
1	Արդյունավետության բարձրացում	$K_1$	0.185
2	Շահավետության բարձրացում	$K_2$	0.148
3	Էկոլոգիական բարելավումներ	$K_3$	0.185
4	Ջերմային ազդեցության բացառություն	$K_4$	0.11
5	Քիմիական ազդեցության բացառություն	$K_5$	0.11
6	Բժշկական սարքերի մշակում	$K_{6ա}$	0.07
7	Տարածքների ախտահանում	$K_{6բ}$	0.037
8	Ոչ դուրեկան հոտերի վերացում	$K_{6գ}$	0.037
9	Բարձր շարժականություն	$K_{6դ}$	0.037
10	Մանր՝ ազերժող հատկությունների վերականգնում	$K_{6ե}$	0.037
11	Խմելու ջրի մաքրում	$K_{6զ}$	0.037

Օրինակ, կշռային գործակիցը առաջին նպատակի համար (արդյունավետության բարձրացում) հավասար է 0.185 ( $K_1=5/27$ ), երկրորդ նպատակի համար՝ 0.148 և այլն:

Երբ հաշվարկվում են կշռային գործակիցները յուրաքանչյուր նպատակի համար, ենթադրվում է, որ որքան հաճախ տվյալ նպատակը նշվում է գովազդային տեղեկագրում, այնքան ավելի է այդ սարքը բավարարում իրական պահանջներին: Յուրաքանչյուր սարքի օգտակարությունը արդյունաբերական արտադրության դեպքում որոշվում է որպես կշռային գործակիցների գումար այն նպատակների համար, որոնց համար ստեղծվել է տվյալ սարքը: Օրինակ՝ «Արեգ 312» դեպքում միանգամից ապահովվում են երեք նպատակներ՝  $K_1$ ,  $K_3$ ,  $K_{6ե}$ : Հետևապես, այդ սարքի օգտակարությունը կլինի՝

$$P_{\text{օգ}} = \sum K = K_1 + K_2 + K_{6ե} = 0.407$$

Աղյուսակ 4-ում բերված են հաշվարկների արդյունքները, որոնք ստացվել են բոլոր հինգ սարքերի համար:

Աղյուսակ 4

N	Օգտակար սարքի անվանումը	Օգտագործվող կշռային գործակիցները	Օգտակարությունը
1	«Արեգ 307»	$K_1+K_2+K_3+K_4+K_5+K_{6ա}$	0.808
2	«Արեգ 308»	$K_1+K_2+K_3+K_{6բ}+K_{6գ}$	0.592
3	«Արեգ 309»	$K_1+K_2+K_3+K_4+K_5+K_{6ա}+K_{6բ}$	0.845
4	«Արեգ 312»	$K_1+K_2+K_{6ե}$	0.407
5	«Արեգ 313»	$K_1+K_2+K_3+K_4+K_5+K_{6զ}$	0.775

Ինչպես տեսնում ենք, ամենամեծ օգտակարությունը «Արեգ 309» սարքինն է:

Ինչ վերաբերում է հաջողության գործակցին  $B_n$ , ինչը արտահայտում է հաջողության հավանականությունը արդյունաբերական կիրառության ժամանակ, ապա ընտրվել է  $B_n=0.75$ , քանի որ բոլոր 5 սարքերը անցել են փորձնական նմուշների պատրաստման փուլը և պատրաստ են սերիական արտադրության:

Ինչ վերաբերում է նախագծի իրագործման համար սպասվող ծախսերին, ապա դրանք որոշվել են հարաբերական մեծության սկզբունքով: «Արեգ 307»-ի համար ընտրվել է Ռուսաստանում արտադրվող նմանատիպ սարքավորումը՝ «CO-5», որի արժեքը տատանվում է 1950-2300 ԱՄՆ դոլարի սահմաններում, իսկ «Արեգ 308»-ի նախատիպ ընտրվել է CB0891.2(YCB-2) սարքավորումը, որի արժեքն է 1488 ԱՄՆ դոլար: Մնացած երեք սարքավորումների համար նախատիպեր չեն գտնվել:

«Արեգ 307»-ն ունի 7 ֆունկցիոնալ բաղադրիչներ, իսկ դրան նման «CO-5»-ը՝ 11: Այս դեպքում, համաձայն (3) բանաձևով կատարված հաշվարկների, «Արեգ 307» սարքի նախագիծը իրականացնելու համար պահանջվող ծախսերը կազմում են՝  $3_{\text{Արեգ } 307} = 7/11=0.636$  հարաբերական միավոր: Նման ձևով՝  $3_{\text{Արեգ } 308} = 7/8=0.875$ : Այս երկու սարքերի իմաստավորության ցուցանիշները կազմում են՝

$$3_{\text{Արեգ } 307} = \frac{0.808 \times 0.75}{0.636} = 0.953$$

$$3_{\text{Արեգ } 308} = \frac{0.592 \times 0.75}{0.875} = 0.158$$

Այսպիսով, սահմանափակ կապիտալ ներդրումների դեպքում նախընտրությունը պետք է տրվի «Արեգ 307» սարքին, որը և պետք է երաշխավորվի սերիական արտադրության համար:

## 12. ՄՍԱԿՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԾԱԽՍԱՅԻՆ ՄՈՏԵՑՄԱՆ ՄԵԹՈՂՆԵՐՈՎ

ՄՍ գնահատման մեթոդները պետք է հիմնվեն գնահատման միջազգային ստանդարտների վրա (MCO1-4, 1994 թ. և նոր խմբագրությամբ MCO-2001), որոնց հիման վրա ծախսային մոտեցումը երաշխավորվում է կիրառել այն ՄՍ օբյեկտների գնահատման ժամանակ, որոնք ստեղծվել են ձեռնարկությունում կամ վերջինիս պատվերով (երբ ֆինանսավորումը կատարել է ձեռնարկությունը), կամ եթե իրավունքները սեփականության նկատմամբ արդեն ձեռք է բերվել, և օբյեկտի արժեքը պետք է հաշվապահական փաստաթղթերում ամրագրվի որպես ոչ նյութական ակտիվ:

Ըստ ձեռնարկության պատվերի ստեղծված կամ ձեռք բերված ՄՍ արժեքի գնահատումը

Ինչպես ներկայացվեց վերոհիշյալում, գնահատումը կատարվում է ըստ ծախսային մեթոդի և որոշվում է հետևյալ բանաձևով.

$$C_n = C_1 + C_2 + C_3 + C_4 \quad (1)$$

որտեղ՝

$C_1$  – ՄՍՕ բերված ծախսերն են և որոշվում են ամբողջական (հետազոտումներից մինչև հաշվետվություն) գիտահետազոտական աշխատանքների վրա փաստացի կատարված ծախսերի և բոլոր փուլերի տեխնիկական փաստաթղթերի մշակման ծախսերի հանրագումարով: Գիտահետազոտական աշխատանքների հետ կապված ծախսերը ընդգրկում են որոնողական աշխատանքների (այդ թվում խնդրի նախնական մշակման, մարքեթինգի և այլն), տնտեսական հետազոտությունների, փորձաքննությունների անցկացման, հաշվետվություններ կազմելու և այլ ծախսեր,

$C_2$  – ՄՍՕ իրավական պահպանության ծախսեր (արտոնագրի ստացման փաստաթղթերի ձևակերպման, փորձաքննության անցկացման տուրքերի վճարման, արտոնագիրը ուժի մեջ պահելու և այլն),

$C_3$  – մարքեթինգային հետազոտությունների իրականացման ծախսերն են,

$C_4$  – ՄՍՕ արդյունաբերական կիրառության և շուկայացման փուլերին հասցման ծախսերը:

Ծախսերը անհրաժեշտ է ներկայացնել հաշվարկային տարվա դրությամբ (դիսկոնտավորել), որի գործակիցը որոշվում է հետևյալ բանաձևի կիրառությամբ.

$$\alpha_t = (1 + E)^{t_p - t} \quad (2)$$

Այն դեպքում, երբ  $t > t_p$ , (2) բանաձևը ձևափոխվում է.

$$\alpha_t = \frac{1}{(1 + E)^{t_p - t}} \quad (3)$$

որտեղ՝

$E$  - դիսկոնտավորման գործակիցն է և հավասար է գնահատումը իրականացնելուց անմիջապես առաջ տեղաբաշխված պետական կարճաժամկետ պարտատոմսերի միջին կշռված եկամտաբերությանը,

$t_p$  – հաշվարկային տարին է,

$t$  - այն տարին, երբ արժեքային գնահատականը բերվում է հաշվարկային տարվան:

(2) բանաձևը օգտագործվում է այն դեպքում, երբ ընթացիկ ժամանակաշրջանը նախորդում է հաշվարկային տարվան, իսկ (3) բանաձևը՝ հակառակ դեպքում:

Տարբեր ժամկետների համար արժեքային գնահատականի դիսկոնտավորման գործակիցները,  $E=0.15$  դեպքի համար, բերված են աղյուսակ 1-ում:

Ոչ նյութական ակտիվների արժեքը ( $C_6$ ) որոշվում է հետևյալ բանաձևի միջոցով.

$$C_6 = C_4 + C_5 \quad (4)$$

որտեղ  $C_5$  – ՄՍՕ ձեռքբերման ծախսերն են:



Հաշվարկային տարվան նախորդող տարիների քանակը	α <sub>t</sub>	Հաշվարկային տարվան հաջորդող տարիների քանակը	α <sub>t</sub>
20	16,3665	0	1,0000
19	14,2318	1	0,8696
18	12,3755	2	0,7561
17	10,7613	3	0,6575
16	9,3576	4	0,5718
15	8,1371	5	0,4972
14	7,0757	6	0,4323
13	6,1528	7	0,3759
12	5,3503	8	0,3269
11	4,6524	9	0,2843
10	4,0456	10	0,2472
9	3,5179	11	0,2149
8	3,0590	12	0,1869
7	2,6600	13	0,1625
6	2,3131	14	0,1413
5	2,0114	15	0,1229
4	1,7490	16	0,1069
3	1,5209	17	0,0929
2	1,3225	18	0,0808
1	1,1500	19	0,0703
0	1,0000	20	0,0611

Օրինակ 1 (պայմանական թվերով).

**Ձեռնարկությունում ստեղծված ՄՍՕ արժեքի որոշումը (ծախսային մոտեցում):**

Ելակետային տվյալներ.

ՄՍՕ անվանումը՝ օգտակար մողել «Փազային մանրէազերծիչ պահարան», պահպանված է N 14 (A 61L 2/20) ՀՀ արտոնագրով, որը տրվել է «Գևորգ-Գրիմ» գիտաներդրումային ձեռնարկության աշխատակիցներին (ք. Երևան):

Մշակման սկիզբը՝ 01.01.1995թ.

Մշակման ավարտը՝ 1997թ. դեկտեմբեր

Մշակման փուլերը՝ պատրաստվել են հետևյալ տեսակի սարքավորումների փորձնական նմուշներ.

- Մանրէազերծիչ պահարան «Արեգ - 307»
- Ծավալային ախտահանիչ «Արեգ - 308»
- Դյուրակիր մանրէազերծիչ «Արեգ - 309»
- «Արեգ - 312» միկրոֆիլտրերի վերականգնման սարք
- Ախտահանիչ ջրի համար «Արեգ - 313»:

Ծախսերը ըստ տարիների բերված են աղյուսակ 2-ում:

Ծախսերի տեսակները, պ.մ.	Տարիները		
	1995	1996	1997
ԳՀԱ կատարման ծախսեր	1000	2000	3000
Իրավական պահպանության ծախսեր	0	300	500
Մարքեթինգային հետազոտության ծախսեր	0	200	500
ՄՍՕ յուրացման համար պատրաստ դարձնելու ծախսեր	1000	5000	6000
Ընդամենը	2000	7500	10000

29.10.2002թ. տեղաբաշխված պետական կարճաժամկետ բաժնետոմսերի միջին կշռված եկամտաբերությունը – 15 % (E)

Գնահատման օրը՝ 1 դեկտեմբերի 2002թ.

ՄՍՕ արժեքի գնահատումը կատարվում է (1) բանաձևով.

ԳՀԱ կատարման բերված ծախսերը՝

$$C_1 = 1000 \times 2,6600 + 2000 \times 2,3131 + 3000 \times 2,0114 = 13320,40 \text{ պ.մ.}$$

Իրական պահպանության բերված ծախսերը՝

$$C_2 = 300 \times 2,3131 + 500 \times 2,0114 = 1699,63 \text{ պ.մ.}$$

Մարքեթինգային հետազոտությունների համար բերված ծախսերը՝

$$C_3 = 200 \times 2,3131 + 500 \times 2,0114 = 1468,32 \text{ պ.մ.}$$

ՄՍՕ յուրացման պատրաստ դարձնելու ծախսերը՝

$$C_4 = 1000 \times 2,6600 + 5000 \times 2,3131 + 6000 \times 2,0114 = 26293,90 \text{ պ.մ.}$$

Ձեռնարկությունում ստեղծված ՄՍՕ արժեքը կազմել է՝

$$C_n = C_1 + C_2 + C_3 + C_4 = 13320,40 + 1699,63 + 1468,32 + 26293,90 = 41082,62 \text{ պ.մ.}$$

Օրինակ 2.

### Ոչ նյութական ակտիվի արժեքի որոշումը

«Գևորգ-Գրիմ» ձեռնարկությունը (ք.Երևան) օգտագործման իրավունքի հանձնման պայմանագրի համաձայն, որը կնքվել է 2000թ. դեկտեմբերին, ձեռք է բերել նոու-հաու «Լրացումներ գազային մանրէագերծիչ պահարանի արտադրության տեխնոլոգիային»: Պայմանագիրը ենթադրում է նոու-հաուի հեղինակներին պատշաճ վճար 10000 պ.մ. չափով: Վճարումը կատարվելու է հետևյալ ձևով. 3000 պ.մ. 2000թ. դեկտեմբերին, 3000 պ.մ. 2001թ. դեկտեմբերին, 2000 պ.մ. 2002թ. դեկտեմբերին, 2000 պ.մ. 2003թ. դեկտեմբերին:

ՄՍՕ յուրացման նախապատրաստման հասցնելու համար անհրաժեշտ է 2000 պ.մ. 2002թ. դեկտեմբերին:

Պետական կարճաժամկետ բաժնետոմսերի միջին կշռված եկամտաբերությունը, որոնք տեղաբախշվել են 29.10.2002թ. – 15 % (E):

Գնահատման օրը՝ 1 դեկտեմբերի 2002թ.

Ոչ նյութական ակտիվների արժեքի որոշումը կատարվում է (4) բանաձևով:

ՄՍՕ յուրացնելուն պատրաստ դարձնելու ծախսերը

$$C_4 = 2000 \times 1,000 = 2000 \text{ պ.մ.}$$

ՄՍՕ ձեռքբերման համար բերված ծախսերը

$$C_5 = 3000 \times 1,3225 + 3000 \times 1,1500 + 2000 \times 1,000 + 2000 \times 0,8696 = 11156,70 \text{ պ.մ.}$$

$$C_6 = C_4 + C_5 = 2000 + 11156,70 = 13156,70 \text{ պ.մ.}$$

### 13. ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ԱՄՏԱՅԻՆ ՄՈՏԵՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐՈՎ

Եկամտային մոտեցումը երաշխավորվում է կիրառել այն դեպքում, երբ իրավատերը իրավունքները լրիվ հանձնում է (զիջում է) ձեռնարկությանը:

Եթե ՄՍՕ օգտագործումը ենթադրում է նոր ապրանքի արտադրություն կամ եթե ՄՍ պլանավորվում է օգտագործել նոր ձեռնարկությունում, ապա օգտագործվում է գնահատման մեթոդ, որը հիմնված է ՄՍ օգտագործումից ստացված զուտ եկամուտի վրա:

Ջուտ տարեկան եկամուտը ՄՍՕ օգտագործումից (գյուտ, օգտակար սարք, արտադրական նմուշ, նոու-հաու) նոր արտադրություն կազմակերպման ժամանակ որոշվում է հետևյալ բանաձևով.

$$PV_i = \sum_{j=1}^m V_{ij} (z_{ij} - c_{ij}) \quad (1)$$

որտեղ,

$PV_i$  - զուտ եկամուտն է, որը ստացվել է ՄՍ օգտագործումից  $i$ -րդ տարում, պ.մ.,

$V_{ij}$  – ՄՍՕ միջոցով արտադրված  $j$ -րդ ապրանքի իրացման ծավալն է  $i$ -րդ տարում, պ.մ.,

$Z_{ij}$  – ՄՍՕ միջոցով արտադրված  $j$ -րդ ապրանքի գինը  $i$ -րդ տարում, պ. մ.,

$C_{ij}$  - ՄՍՕ միջոցով արտադրված  $j$ -րդ ապրանքի ծախսերն են  $i$ -րդ տարում,

$m$  - ՄՍՕ միջոցով արտադրված ապրանքների անվանումների ընդհանուր քանակը:

ՄՍՕ արժեքը որոշվում է դիսկոնտավորման միջոցով և ՄՍՕ կիրառության ժամկետում զուտ դրամական եկամուտների զումարի և ՄՍՕ արդյունաբերական կիրառելիության ապահովման հետ կապված տարբերությամբ:

$$C_7 = R \times K_1 \times K_2 \sum_{i=1}^n \frac{PV_i}{(1 + E)^i} - C_4 \quad (2)$$

որտեղ,

$C_7$  – ՄՍՕ արժեքն է, պ.մ.,

$R$  – ռիսկի գործակիցն է, որտեղ հաշվի են առնված ՄՍՕ յուրացման աստիճանը և մրցակից ապրանքների առկայությունը շուկայում: Որոշվում է էքսպերտային ձևով և տատանվում է 0.7 – 1 միջակայքում,

$K_1$  – ՄՍՕ տեխնիկատնտեսական արժեքականության գործակիցն է, որի թվային արժեքները որոշվում են փորձնական ճանապարհով:

$K_1 = 1.3$  - Գյուտ (օգտակար մոդել) (որպես կանոն, խոշոր կամ առաջնային), ԳՀԱ, ՏՓ, նոու–հաու, որի հիման վրա հնարավոր է ստեղծել համանմանների հետ համեմատած ավելի բարձր տեխնիկատնտեսական ցուցանիշներ ունեցող նոր արտադրանք (տեխնոլոգիական պրոցես): Ապրանքային նշանի համար՝ 10 տարուց ավելի օգտագործում, սպառողների մոտ համաշխարհային համբավի ձեռքբերում: Արդյունաբերական նմուշի համար՝ համակարգչային օբյեկտների (հաստոցների, ավտոմեքենաների, լրակազմ կահույքի, ինքնաթիռների սրահի և այլն) գեղարվեստական, գեղարվեստակոնստրուկտորական մշակումներ:

$K_1 = 1.2$  - Գյուտ (օգտակար մոդել) ԳՀԱ, ՏՓ, նոու-հաու, որի օգտագործումը ապահովում է արտադրանքի (տեխնոլոգիական պրոցեսի) որակական նոր հիմնական տեխնիկատնտեսական

ցուցանիշների ստանալը: Ապրանքային նշանի համար՝ 5 տարուց ավելի օգտագործում, սպառողների մոտ մեծ համբավի առաջացում: Արդյունաբերական նմուշի համար՝ իրի գեղարվեստական, գեղարվեստակոնստրուկտորական մշակումը՝ հիմնական ձևավորող մասերի փոփոխելի կառուցվածքների և ծավալապլաստիկ լուծումների հորինվածքով (լվացքի և կարի մեքենաներ, հեռուստացույցներ, կոշկեղեն և այլն):

$K_1 = 1.1$  - Գյուտ (օգտակար մոդել) ԳՀԱ, ՏՓ, նոու-հաու, որի օգտագործումը ապահովում է հայտնի արտադրանքի (տեխնոլոգիայի) հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշների բարելավում: Ապրանքային նշանի համար՝ 5 տարուց ավելի օգտագործումը և սպառողի մոտ ապրանքն արտադրողի նկատմամբ կայուն զուգորդության առկայություն: Արդյունաբերական նմուշի համար՝ իրերի ըստ կազմի և ձևի պարզ բաղադրիչների (ամանեղեն, խաղալիքներ, լուսակալներ, ձեռքի գործիքներ և այլն) գեղարվեստական, գեղարվեստակոնստրուկտորական մշակումներ:

$K_1 = 1.05$  - Գյուտ (օգտակար մոդել) ԳՀԱ, ՏՓ, նոու-հաու, որի օգտագործումը ապահովում է կոնկրետ արտադրանքի (տեխնոլոգիական պրոցեսի) չբնորոշող տեխնիկատնտեսական ցուցանիշների բարելավում: Ապրանքային նշանի համար՝ 3 տարուց ոչ պակաս օգտագործման պայման: Արդյունաբերական նմուշի համար՝ առանձին, պարզ ձև ունեցող իր (սեղան, աթոռ, բազմոց, գուլպեղեն, ձեռնոցներ և այլն) գեղարվեստական, գեղարվեստակոնստրուկտորական մշակում:

$K_1 = 1.0$  - Գյուտ (օգտակար մոդել) ԳՀԱ, ՏՓ, նոու-հաու, որոնք ուղղված են հայտնի տեխնիկայի (տեխնոլոգիայի) հիմնական ցուցանիշների մակարդակի պահպանմանն ու երկրորդական ցուցանիշների բարելավմանը: Ապրանքային նշանի համար՝ օգտագործումը 1 տարվա ընթացքում: Արդյունաբերական նմուշի համար՝ իրի առանձին բաղադրիչների (ոչ բարդ նկարի էսքիզը, առանձին ձևագոյացնող մասեր, երեսի վահանակներ և այլն) գեղարվեստական, գեղարվեստակոնստրուկտորական մշակումներ:

$K_2$  – տրված պահպանական փաստաթղթի տեսակը որոշող գործակիցն է (միայն գյուտերի և օգտակար մոդելների համար): Եթե տրված է հիմնական արտոնագիր, ապա  $K_2=1$ , եթե ժամանակավոր՝  $K_2=0.7$ , նոու-հաուների, ԳՀԱ, ՏՓ համար՝ 0.7,

$n$  – ՄՍՕ օգտակար օգտագործման ժամկետն է (եթե անհնար է որոշել՝ մինչև 10 տարի), բայց ոչ ավելի, քան մինչև ՄՍՕ իրավակալ պահպանության ժամկետի ավարտը, տարի:

Եթե ՄՍՕ օգտագործումը չի ենթադրում նոր ապրանքի արտադրություն, բայց բարելավում է տեխնոլոգիան, ապա օգտագործվում է արժեքի գնահատման մեթոդ, որը հիմնվում է ՄՍՕ օգտագործմամբ շահույթի և առանց նրա օգտագործման շահույթի կանխատեսումային տարբերության արժեքի վրա

$$\Delta\Pi_i = \Pi_i^* - \Pi_i \tag{3}$$

որտեղ

$\Pi_i^*$  –  $i$ -տարում ՄՍՕ օգտագործումից ստացված շահույթն է, պ.մ.,  
 $\Pi_i$  - շահույթն է՝ առանց ՄՍՕ օգտագործման  $i$ -տարում, պ.մ.:

ՄՍՕ արժեքը որոշվում է զեղչման և ՄՍՕ օգտագործման ժամկետում շահույթի առավելությունների գումարման մջջոցով՝ հանած բերված ծախսերը, որոնք անհրաժեշտ են ՄՍՕ արդյունաբերական օգտագործմանը պատրաստ դարձնելու համար.

$$C_8 = R \times K_1 \times K_2 \sum_{i=1}^n \frac{\Delta \Pi_i}{(1 + E)^i} - C_4 \quad (4)$$

որտեղ  $C_8$  –ը ՄՍՕ արժեքն է, պ.մ.:

Օրինակ 1.

**ՄՍՕ արժեքի որոշումը իրավատիրոջից ձեռնարկությանը ՄՍՕ նկատմամբ իրավունքների լրիվ զիջման (հանձնման) դեպքում**

ՄՍՕ օգտակար մոդել «Գազային մանրէագերծիչ պահարան» հիման վրա, որը պահպանված է ՀՀ արտոնագրով N 14 (A 61 L 2/20) պլանավորվում է հետևյալ տեսակի սարքավորումների նոր արտադրություն՝

- Մանրէագերծիչ պահարան «Արեգ - 307»
- Ծավալային ախտահանիչ «Արեգ - 308»
- Դյուրակիր մանրէագերծիչ «Արեգ - 309»
- «Արեգ - 312» միկրոֆիլտրների վերականգնման սարք
- Ախտահանիչ ջրի համար «Արեգ - 313»

ՄՍՕ պատկանում են ֆիզիկական անձանց՝ «Գևորգ-Գրիմ» գիտամերդրումային ձեռնարկության աշխատողներին:

Անհրաժեշտ է որոշել ՄՍՕ արժեքը իրավունքը իրավատիրոջից ձեռնարկությանը լրիվ հանձնելու դեպքում:

ՄՍՕ արժեքի հաշվարկը կատարվում է (2) բանաձևի հիման վրա:

Մարքեթինգային հետազոտությունները ցույց տվեցին, որ ՄՍՕ օգտագործումը կարելի է իրագործել 10 տարվա ընթացքում ( $n = 10$ )՝ սկսած 2003թ. հունվարից: Առկա են նաև իրացման ծավալների կանխատեսված քանակները, արտադրանքի գինը և նրա արտադրության ծախսերը:

Գնահատման օրը՝ 1 դեկտեմբերի 2002թ.

29.10.2002թ. տեղաբախշված պետական կարճաժամկետ բաժնետոմսերի միջին կշռված եկամտաբերությունը՝ 15 % (E):

Ելակետային տվյալներն ըստ արտադրանքի իրացման ծավալի, նրա գնի և արտադրության ծախսերի բերված են համապատասխանաբար աղյուսակներ 1, 2, 3-ում:

Աղյուսակ 1

ՄՍՕ օգտագործման տարին	Արտադրանքի իրացման ծավալը, $V_{ij}$ , հատ				
	Արտադրանքի անվանումը, j				
	Արեգ 307	Արեգ 308	Արեգ 309	Արեգ 312	Արեգ 313
2003	$V_{1,1}= 500$	$V_{1,2}= 300$	$V_{1,3}= 350$	$V_{1,4}= 25$	$V_{1,5}= 500$
2004	$V_{2,1}=700$	$V_{2,2}= 350$	$V_{2,3}= 400$	$V_{2,4}=30$	$V_{2,5}= 500$
2005	$V_{3,1}=1000$	$V_{3,2}= 400$	$V_{3,3}= 500$	$V_{3,4}=35$	$V_{3,5}= 500$
2006	$V_{4,1}=1000$	$V_{4,2}= 500$	$V_{4,3}= 500$	$V_{4,4}=40$	$V_{4,5}= 500$
2007	$V_{5,1}=1000$	$V_{5,2}= 500$	$V_{5,3}= 500$	$V_{5,4}=40$	$V_{5,5}= 500$
2008	$V_{6,1}=1000$	$V_{6,2}= 500$	$V_{6,3}= 500$	$V_{6,4}=40$	$V_{6,5}= 500$
2009	$V_{7,1}=900$	$V_{7,2}= 500$	$V_{7,3}= 500$	$V_{7,4}=40$	$V_{7,5}= 500$

2010	$V_{8,1}=900$	$V_{8,2}= 500$	$V_{8,3}= 500$	$V_{8,4}=40$	$V_{8,5}= 500$
2011	$V_{9,1}=800$	$V_{9,2}= 400$	$V_{9,3}= 500$	$V_{9,4}=40$	$V_{9,5}= 500$
2012	$V_{10,1}=700$	$V_{10,2}= 400$	$V_{10,3}= 500$	$V_{10,4}=40$	$V_{10,5}= 500$

Աղյուսակ 2

Արտադրանքի իրացման զինը,  $Z_{ij}$ , պ.մ.

ՄՍՕ օգտագործման տարին, i	Արտադրանքի անվանումը, j				
	Արեգ 307	Արեգ 308	Արեգ 309	Արեգ 312	Արեգ 313
2003	$Z_{1,1}= 200$	$Z_{1,2}= 140$	$Z_{1,3}= 200$	$Z_{1,4}= 500$	$Z_{1,5}= 140$
2004	$Z_{2,1}= 205$	$Z_{2,2}=140$	$Z_{2,3}=200$	$Z_{2,4}= 500$	$Z_{2,5}= 145$
2005	$Z_{3,1}= 210$	$Z_{3,2}=150$	$Z_{3,3}=200$	$Z_{3,4}= 500$	$Z_{3,5}= 150$
2006	$Z_{4,1}= 215$	$Z_{4,2}=150$	$Z_{4,3}=200$	$Z_{4,4}= 500$	$Z_{4,5}= 150$
2007	$Z_{5,1}= 220$	$Z_{5,2}=150$	$Z_{5,3}=200$	$Z_{5,4}= 500$	$Z_{5,5}= 150$
2008	$Z_{6,1}= 225$	$Z_{6,2}=150$	$Z_{6,3}=200$	$Z_{6,4}= 500$	$Z_{6,5}= 150$
2009	$Z_{7,1}= 230$	$Z_{7,2}=150$	$Z_{7,3}=200$	$Z_{7,4}= 500$	$Z_{7,5}= 150$
2010	$Z_{8,1}= 235$	$Z_{8,2}=150$	$Z_{8,3}=200$	$Z_{8,4}= 500$	$Z_{8,5}= 145$
2011	$Z_{9,1}= 240$	$Z_{9,2}=150$	$Z_{9,3}=200$	$Z_{9,4}= 500$	$Z_{9,5}= 140$
2012	$Z_{10,1}= 245$	$Z_{10,2}=150$	$Z_{10,3}=200$	$Z_{10,4}= 500$	$Z_{10,5}= 135$

Աղյուսակ 3

Արտադրանքի արտադրության ծախսերը,  $C_{ij}$ , պ.մ.

ՄՍՕ օգտագործման տարին, i	Արտադրանքի անվանումը, j				
	Արեգ 307	Արեգ 308	Արեգ 309	Արեգ 312	Արեգ 313
2003	$c_{1,1}= 160$	$c_{1,2}= 125$	$c_{1,3}= 180$	$c_{1,4}= 420$	$c_{1,5}=120$
2004	$c_{2,1}= 160$	$c_{2,2}= 120$	$c_{2,3}= 170$	$c_{2,4}= 410$	$c_{2,5}=120$
2005	$c_{3,1}= 155$	$c_{3,2}= 120$	$c_{3,3}= 160$	$c_{3,4}= 410$	$c_{3,5}=120$
2006	$c_{4,1}= 150$	$c_{4,2}= 120$	$c_{4,3}= 150$	$c_{4,4}= 400$	$c_{4,5}=120$
2007	$c_{5,1}= 150$	$c_{5,2}= 120$	$c_{5,3}= 150$	$c_{5,4}= 400$	$c_{5,5}=120$
2008	$c_{6,1}= 150$	$c_{6,2}= 120$	$c_{6,3}= 150$	$c_{6,4}= 400$	$c_{6,5}=120$
2009	$c_{7,1}= 150$	$c_{7,2}= 120$	$c_{7,3}= 150$	$c_{7,4}= 400$	$c_{7,5}=120$
2010	$c_{8,1}= 150$	$c_{8,2}= 120$	$c_{8,3}= 150$	$c_{8,4}= 400$	$c_{8,5}=120$
2011	$c_{9,1}= 150$	$c_{9,2}= 120$	$c_{9,3}= 150$	$c_{9,4}= 400$	$c_{9,5}=120$
2012	$c_{10,1}= 150$	$c_{10,2}= 120$	$c_{10,3}= 150$	$c_{10,4}= 400$	$c_{10,5}=120$

ՄՍՕ արդյունաբերական օգտագործման համար պատրաստ դարձնելու համար անհրաժեշտ է 2002թ. դեկտեմբերին ծախսել 30000 պ.մ.

$$C_4 = 30000 \times 1,000 = 30000 \text{ պ.մ.}$$

(1) բանաձևի հիման վրա հաշվարկվում է տարեկան զուտ եկամուտը ՄՍՕ օգտագործման յուրաքանչյուր տարվա համար: Հաշվարկների արդյունքները բերված են աղյուսակ 4 –ում:

Աղյուսակ 4

Մաքուր տարեկան եկամուտը,  $PV_i$ , պ.մ.

ՄՍՕ օգտագործման տարին, i	Արտադրանքի անվանումը, j					Ընդհանուր զուտ տարեկան դրամական հոսքը, $PV_i$
	Արեգ 307	Արեգ 308	Արեգ 309	Արեգ 312	Արեգ 313	
2003	$PV_{1,1}=20000$	$PV_{1,2}=4500$	$PV_{1,3}=7000$	$PV_{1,4}=2000$	$PV_{1,5}=10000$	$PV_1=43500$
2004	$PV_{2,1}=31500$	$PV_{2,2}=7000$	$PV_{2,3}=12000$	$PV_{2,4}=2700$	$PV_{2,5}=12500$	$PV_2=65700$
2005	$PV_{3,1}=55000$	$PV_{3,2}=12000$	$PV_{3,3}=20000$	$PV_{3,4}=3150$	$PV_{3,5}=15000$	$PV_3=105150$
2006	$PV_{4,1}=65000$	$PV_{4,2}=15000$	$PV_{4,3}=25000$	$PV_{4,4}=4000$	$PV_{4,5}=15000$	$PV_4=124000$
2007	$PV_{5,1}=70000$	$PV_{5,2}=15000$	$PV_{5,3}=25000$	$PV_{5,4}=4000$	$PV_{5,5}=15000$	$PV_5=129000$
2008	$PV_{6,1}=75000$	$PV_{6,2}=15000$	$PV_{6,3}=25000$	$PV_{6,4}=4000$	$PV_{6,5}=15000$	$PV_6=134000$
2009	$PV_{7,1}=72000$	$PV_{7,2}=15000$	$PV_{7,3}=25000$	$PV_{7,4}=4000$	$PV_{7,5}=15000$	$PV_7=131000$
2010	$PV_{8,1}=76500$	$PV_{8,2}=15000$	$PV_{8,3}=25000$	$PV_{8,4}=4000$	$PV_{8,5}=12500$	$PV_8=133000$
2011	$PV_{9,1}=72000$	$PV_{9,2}=12000$	$PV_{9,3}=25000$	$PV_{9,4}=4000$	$PV_{9,5}=10000$	$PV_9=123000$
2012	$PV_{10,1}=66500$	$PV_{10,2}=12000$	$PV_{10,3}=25000$	$PV_{10,4}=4000$	$PV_{10,5}=7500$	$PV_{10}=115000$

Տարածամկետ արժեքային գնահատականների հաշվարկը կատարվում է արդեն մեզ ծանոթ հետևյալ բանաձևով:

$$\alpha_t = \frac{1}{(1 + E)^{t_p - t}} \quad (5)$$

Հաշվարկների արդյունքները բերված են աղյուսակ 5 –ում:

Աղյուսակ 5

ՄՍՕ օգտագործման տարին, i	Ընդհանուր զուտ տարեկան եկամուտը, PV <sub>i</sub> , պ.մ.	α <sub>t</sub>	Ընդհանուր զուտ բերված տարեկան եկամուտը
2003	PV <sub>1</sub> =43500	α <sub>1</sub> =0,8696	37826,09
2004	PV <sub>2</sub> =65700	α <sub>2</sub> =0,7561	49678,64
2005	PV <sub>3</sub> =105150	α <sub>3</sub> =0,6575	69137,83
2006	PV <sub>4</sub> =124000	α <sub>4</sub> =0,5718	70897,4
2007	PV <sub>5</sub> =129000	α <sub>5</sub> =0,4972	64135,8
2008	PV <sub>6</sub> =134000	α <sub>6</sub> =0,4323	57931,9
2009	PV <sub>7</sub> =131000	α <sub>7</sub> =0,3759	49247,75
2010	PV <sub>8</sub> =133000	α <sub>8</sub> =0,3269	43477,94
2011	PV <sub>9</sub> =123000	α <sub>9</sub> =0,2843	34964,28
2012	PV <sub>10</sub> =115000	α <sub>10</sub> =0,2472	28426,24
Ընդամենը			505723,86

K<sub>1</sub> գործակիցը որոշվում է ըստ վերը բերված սանդղակի. K<sub>1</sub>=1.2:

Քանի որ օգտակար մոդելին տրված է հիմնական արտոնագիր, ապա K<sub>2</sub>=1:

Քանի որ նորարարության յուրացման համար անհրաժեշտ են համեմատաբար քիչ ծախսեր և ոչ երկարատև ժամանակաշրջան (ամիս), և արտադրանքը նոր է, ապա R=0.9:

Այսպիսով, ՄՍՕ արժեքը իրավատիրոջից ձեռնարկությանը իրավունքների լրիվ հանձնման դեպքում կազմել է.

$$C_7 = R \times K_1 \times K_2 \sum_{i=1}^n \frac{PV_i}{(1 + E)^i} - C_4 = 0,9 \times 1,2 \times 1 \times 505723,86 - 30000 = 516181,76 \text{ պ.մ.}$$

#### Օրինակ 2. ՄՍՕ-նոու-հաուի արժեքի որոշումը

ՄՍՕ պատկանում է ֆիզիկական անձանց՝ «Գևորգ-Գրիմ» գիտաներդրումային ձեռնարկության աշխատողներին:

Անհրաժեշտ է որոշել իրավատիրոջից ձեռնարկությանը ՄՍՕ իրավունքների լրիվ հանձնման արժեքը:

«Արեգ 307 զագային մանրէագերծիչ պահարանի արտադրության տեխնոլոգիայի բարելավումը» նոու-հաուի օգտագործումը թույլ կտա 10 % կրճատել ծախսերը Արեգ 307 մանրէագերծիչի արտադրության վրա, առանց որակի վատացման:

Գնահատման օրը՝ 1 դեկտեմբերի 2002թ.:

29.10.2002թ. տեղաբաշխված պետական կարճաժամկետ բաժնետոմսերի միջին կշռված եկամտաբերությունը՝ 15 % (E):

ՄՍՕ արժեքի հաշվարկը կատարվում է (4) բանաձևի օգնությամբ:

ՄՍՕ օգտագործումից շահույթի և նրա չօգտագործումից շահույթի տարբերության նշանակությունը հաշվարկվում է (3) բանաձևով: Հաշվարկների արդյունքները բերված են աղյուսակ 6–ում:

Աղյուսակ 6

ՄՍՕ օգտագործման տարին, i	Շահույթը առանց ՄՍՕ օգտագործման Π <sub>i</sub> պ.մ.	Շահույթը ՄՍՕ օգտագործման դեպքում Γ <sub>i</sub> պ.մ.	Տարբերությունը շահույթի մեջ Δ Π <sub>i</sub> պ.մ.
2003	Π <sub>1</sub> =20000	Γ <sub>1</sub> =28000	Δ Π <sub>1</sub> =8000
2004	Π <sub>2</sub> =31500	Γ <sub>1</sub> =42700	Δ Π <sub>2</sub> =11200
2005	Π <sub>3</sub> =55000	Γ <sub>1</sub> =70500	Δ Π <sub>3</sub> =15500
2006	Π <sub>4</sub> =65000	Γ <sub>1</sub> =80000	Δ Π <sub>4</sub> =15000
2007	Π <sub>5</sub> =70000	Γ <sub>1</sub> =85000	Δ Π <sub>5</sub> =15000
2008	Π <sub>6</sub> =75000	Γ <sub>1</sub> =90000	Δ Π <sub>6</sub> =15000
2009	Π <sub>7</sub> =72000	Γ <sub>1</sub> =85500	Δ Π <sub>7</sub> =13500
2010	Π <sub>8</sub> =76500	Γ <sub>1</sub> =90000	Δ Π <sub>8</sub> =13500
2011	Π <sub>9</sub> =72000	Γ <sub>1</sub> =84000	Δ Π <sub>9</sub> =12000
2012	Π <sub>10</sub> =66500	Γ <sub>1</sub> =77000	Δ Π <sub>10</sub> =10500

ՄՍՕ արդյունաբերական օգտագործման հասցնելու ծախսերը հավասար են 5000 պ.մ., որոնք անհրաժեշտ է կատարել 2002թ. դեկտեմբերին.

$$C_4 = 5000 \times 1,000 = 5000 \text{ պ.մ.}$$

Տարբերաժամկետ արժեքային գնահատականների հաշվարկը կատարվում է ըստ (3) բանաձևի:

Հաշվարկների արդյունքները բերված են աղյուսակ 7–ում:

Աղյուսակ 7

ՄՍՕ օգտագործման տարին, i	Տարբերությունը շահույթի մեջ Δ Π <sub>i</sub> պ.մ.	α <sub>t</sub>	Բերված ընդհանուր զուտ տարեկան դրամական հոսքը, պ.մ.
2003	Δ Π <sub>1</sub> =8000	α <sub>1</sub> =0,8696	6956,8
2004	Δ Π <sub>2</sub> =11200	α <sub>2</sub> =0,7561	8468,32
2005	Δ Π <sub>3</sub> =15500	α <sub>3</sub> =0,6575	10191,25
2006	Δ Π <sub>4</sub> =15000	α <sub>4</sub> =0,5718	8577
2007	Δ Π <sub>5</sub> =15000	α <sub>5</sub> =0,4972	7458
2008	Δ Π <sub>6</sub> =15000	α <sub>6</sub> =0,4323	6484,5
2009	Δ Π <sub>7</sub> =13500	α <sub>7</sub> =0,3759	5074,65
2010	Δ Π <sub>8</sub> =13500	α <sub>8</sub> =0,3269	4413,15
2011	Δ Π <sub>9</sub> =12000	α <sub>9</sub> =0,2843	3411,6
2012	Δ Π <sub>10</sub> =10500	α <sub>10</sub> =0,2472	2595,6
Ընդամենը			63630,87

K<sub>1</sub> գործակիցը որոշվում է ըստ վերը ներկայացված սանդղակի. K<sub>1</sub> =1.1:

Քանի որ ՄՍՕ հանդիսանում է նոու-հաու, ապա K<sub>2</sub>=0.7:

Քանի որ նորարարության յուրացման համար անհրաժեշտ են համեմատաբար քիչ ծախսեր և ժամանակի ոչ մեծ տևողության (ամիս) և այդ դեպքում արտադրանքը համարվում է նոր, ապա K=0.9:

Այսպիսով, տեխնոլոգիայի բարելավումից արժեքը կազմել է

$$C_8 = R \times K_1 \times K_2 \sum_{i=1}^n \frac{\Delta \Pi_i}{(1 + E)^i} - C_4 = 0,9 \times 1,1 \times 0,7 \times 63630,87 - 5000 = 44096,19 \text{ պ.մ.}$$

5000պ.մ.=39096,19պ.մ.



**14. ՄՏԱԿՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՄՈՏԵՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐՈՎ**

Համեմատական մոտեցումը երաշխավորվում է կիրառել, երբ իրավունքները ՄՍՕ նկատմամբ հանձնվում են ըստ լիցենզիոն պայմանագրի, որում նախատեսվում է ռոյալտիի վճարում:

ԼՋՏԵՆՁԻՈՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ՄՍՕ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՄՔԻ ԱՐԺՔԻ ՈՐՈՇՄԱՆ ԿԱՐԳԸ,  
ՈՐԸ ԵՆԹԱԴՐՈՒՄ Է ՈՌՅԱՆՏԻ ԿԱՐՈՒՄ

Եթե լիցենզային պայմանագիրը ենթադրում է վճարվող ռոյալտիի որոշումը որպես արտադրանքի իրացումից ստացված հասույթի մաս, ապա ՄՍՕ օգտագործման իրավունքի արժեքի հաշվարկը կատարվում է տվյալ բնագավառի տեխնիկայի համար ռոյալտիի միջին դրույքների որոշմամբ, որոնք բերված են աղյուսակ 1-ում:

$$R_i = \sum_{j=1}^m V_{ij} z_{ij} P_i / 100 \quad (1)$$

որտեղ

R<sub>i</sub> –ն հասույթի մասն է, որը վճարվում է ՄՍՕ օգտագործման իրավունքի համար (ռոյալտիի չափը) ՄՍՕ օգտագործման i -տարում, պ.մ.,

P<sub>i</sub> –ն i –րդ տարում տեխնիկայի տվյալ ոլորտի համար ՄՍՕ օգտագործումից ռոյալտիի ստանդարտ դրույքն է, % :

ՄՍՕ օգտագործման իրավունքի արժեքի հաշվարկը որոշվում է որպես կանխատեսումային գեղջատոկոսված ռոյալտիի գումար՝ հանած ՄՍՕ արդյունաբերական օգտագործման համար պատրաստ դարձնելու անհրաժեշտ բերված ծախսերը:

**Ռոյալտիի միջին վիճակագրական դրույքը**

1. Ռոյալտիի ստանդարտ դրույքներն ըստ արդյունաբերության ճյուղերի

Աղյուսակ 1

Արդյունաբերության ճյուղ	Ռոյալտիի դրույք %
Էլեկտրոնային արդյունաբերություն	4-10
Էլեկտրատեխնիկական արդյունաբերություն	1-5
Քիմիական արդյունաբերություն	1,5
Ղեղազործական արդյունաբերություն	2-5
Հաստոցաշինական արդյունաբերություն	4,5-7,5
Ավտոմոբիլային արդյունաբերություն	1-3
Ավիացիոն արդյունաբերություն	6-10
Մետաղագործական արդյունաբերություն	5-8
Տեքստիլ արդյունաբերություն	3-6
Երկարաժամկետ օգտագործման սպառողական ապրանքների արտադրություն	5
Մասսայական պահանջարկ ունեցող կարճաժամկետ օգտագործմամբ սպառողական ապրանքների արտադրություն	0,2-1,5

2. Ուղյալտիի ստանդարտ դրույքներն ըստ իրերի ցուցակի

N n/n	Իրերի տեսակը	Ուղյալտիի դրույքը %
1	2	3
1.	Ամբարձիչ տրանսպորտային սարքավորումներ	5
2.	Ձուլող սարքավորումներ	1,5-2,0
3.	Սարքավորումներ ցեմենտի գործարանների համար	3-5
4.	Սարքավորումներ մետալուրգիական արդյունաբերության համար	4-6
5.	Սարքավորումներ քիմիական արդյունաբերության համար	3-5
6.	Սարքավորումներ սննդի արդյունաբերության համար	4
7.	Սարքավորումներ ջրի մաքրման համար	5
8.	Սառնարանային սարքավորումներ	2-4
9.	Տաքացնող համակարգեր	4-6
10.	Վառարաններ	4-6
11.	Կաթսաներ	3-5
12.	Օդի լավորակիչներ	3-4
13.	Փականներ, կափույրներ	3-6
14.	Կաթսայական սարքավորումներ	5
15.	Ճնշակներ, պոմպեր	5-7
16.	Արդյունաբերական նշանակության շարժիչներ	4-5
17.	Մակերևույթների մշակման սարքավորումներ	6-7
18.	Մետաղական կոնստրուկցիաներ	2-4
19.	Սարքավորումներ տեքստիլ արդյունաբերության համար	3-5
20.	Պոլիգրաֆիական սարքավորումներ	4
21.	Էլեկտրատեխնիկական սարքավորումներ	4-7
22.	Ռելե-սարքավորումներ	4-6
23.	Ազդանշանային սարքավորումներ	1-1,5
24.	Էլեկտրական վերահսկող-շարժիչ սարքեր	3-5
25.	Էլեկտրոնային սարքավորումներ	4-8
26.	Կիսահաղորդիչներ	1-2
27.	Ռադիոլամպեր	3-4
28.	Կուտակիչներ	3-4
29.	Էլեկտրամալուխներ	2-4
30.	Վերելակներ	4-5
31.	Մետաղամշակող հաստոցներ	4-6
32.	Գործիքներ, սարքավորումներ	5-7
33.	Ձողման սարքավորումներ	5-6
34.	Շարժակներ	5
35.	Նոտո-կինո ապրանքներ	3-5
36.	Բժշկական սարքավորումներ և սարքեր	4-7
37.	Չափող սարքեր	5-7
38.	Գրասենյակային սարքավորումներ	3
39.	Ավտոշարժիչներ եվ մասեր դրանց համար	2-4
40.	Ավտոպահեստամասեր	2-3
41.	Քարշիչներ	1-2

42.	Հեծանիվներ	3-5
43.	Երկաթուղային սարքավորումներ	3-5
44.	Գյուղատնտեսական մեքենաներ	2-5
45.	Երկաթակուռ իրեր	2-3
46.	Ձեռքի գործիքներ	3
47.	Ածելիներ, դանակներ	1-2
48.	Մետաղյա կահույք	3
49.	Կիսաֆաբրիկատներ	1,5-2
50.	Ձուլվածք	3-5
51.	Շինարարական մեքենաներ	3-5
52.	Պարարտանյութ	1,5-2
53.	Պարարտանյութ-քիմիկատներ	1
54.	Ներկիչներ	3
55.	Անուշահոտ նյութեր	3
56.	Օրգանական քիմիայի արտադրանք	2-4
57.	Դեղագործական ապրանքներ	2-4
58.	Իրեր կաուչուկից	3-3,5
59.	Իրեր ապակուց	2-4
60.	Ներկեր	2-3
61.	Սոսինձ	2-3
62.	Ֆոտոապրանքներ, քիմեակտիվներ	1-3
63.	Հանքային յուղեր	2-3
64.	Տեքստիլ թելեր	2-3
65.	Հագուստ կարելու կտորներ	3
66.	Կտորեղեն արդյունաբերական նպատակների համար	3-4
67.	Տրիկոտաժ, սպիտակեղեն	2-4
68.	Կոշիկեղեն	1-2,5
69.	Կաշի	3
70.	Փայտե կահույք	2-3
71.	Թուղթ	1-2
72.	Թղթից և ստվարաթղթից փաթեթներ	2-3
73.	Պատճենաթուղթ	1-2
74.	Գրքեր, տպագիր նյութեր, խաղեր (առանց հեղինակային իրավունքի)	3-6
75.	Խպորտային ապրանքներ	1-3
76.	Օծանելիք	2-5
77.	Սկավառակներ	2-5
78.	Իրեր պլաստմասսայից	3
79.	Նավեր, նավային սարքավորումներ	3-5
80.	Շինանյութեր	2-4
81.	Ինքնաթիռներ, ռազմամթերք	5-10
82.	Պարենային ապրանքներ	1-2
83.	Անասնակեր	2-3
84.	Թելեր	2-5
85.	Սառցարանային սարքավորումներ արդյունաբերական նպատակների համար	4-6

**Շահույթը՝ որպես ռոյալտիի բազայի օգտագործման դեպքում ռոյալտիի ստանդարտ  
դրույք է հանդիսանում 25-30 % -ը**

$$C_{10} = \sum_{i=1}^k \frac{R_i}{(1+E)^i} - C_4 \quad (2)$$

որտեղ

$C_{10}$  –ը ՄՍՕ օգտագործման իրավունքի արժեքն է,

$K$  –ն լիցենզային պայմանագրի գործողության ժամկետը:

Եթե լիցենզային պայմանագիրը ենթադրում է վճարվող ռոյալտիի որոշումը որպես շահույթի մաս, ապա ՄՍՕ օգտագործման իրավունքի արժեքը որոշվում է ռոյալտիի ստանդարտ չափի հիման վրա (աղյուսակ 1):

$$R'_i = \sum_{j=1}^m V_{ij} (z_{ij} - c_{ij}) P'_i / 100 = \sum_{j=1}^m P V_{ij} P'_i / 100 \quad (3)$$

որտեղ

$R'_i$  –ն  $i$  –րդ տարում ՄՍՕ օգտագործման իրավունքի համար վճարվող շահույթի մասն է (ռոյալտիի չափը), պ.մ.,

$P'_i$  –ն շահույթից որպես տոկոս հաշվարկվող ՄՍՕ  $i$ –րդ տարում օգտագործման ռոյալտիի ստանդարտ չափն է, %-ով:

ՄՍՕ օգտագործման իրավունքի արժեքի հաշվարկը որոշվում է որպես կանխատեսումային զեղչատոկոսված ռոյալտիի վճարումների գումար՝ հանած ՄՍՕ մինչև արդյունաբերական օգտագործման համար պատրաստ դարձնելու անհրաժեշտ բերված ծախսերը:

$$C_{11} = \sum_{i=1}^k \frac{R'_i}{(1+E)^i} - C_4 \quad (4)$$

### Օրինակ 1

ՄՍՕ օգտագործման իրավունքի արժեքի որոշում, որը ձեռք է բերվել լիցենզային պայմանագրով և ենթադրում է ռոյալտիի վճարում՝ ՄՍՕ օգտագործումով արտադրված արտադրանքի իրացման հասույթից ելնելով:

Պայմանագրի գործողության ժամկետը՝ 10 տարի:

«Օգտակար մոդել «Գազային մանրէագերծիչ պահարան» № 14 (A61L/20) ՀՀ արտոնագրով պահպանված ՄՍՕ արտոնագրատերերի և «Գևորգ-Գրիմ» ձեռնարկության միջև կնքվում է լիցենզային պայմանագիր, որը ենթադրում է իրացված արտադրանքի ծավալից հաշվարկված ռոյալտիի վճարում:

Գնահատման օրը՝ 1 դեկտեմբերի 2002թ.:

29.10.2002թ. տեղաբաշխված պետական կարճաժամկետ բաժնետոմսերի միջին կշռված եկամտաբերությունը՝ 15 % (E):

Ռոյալտիի վճարման չափը որոշվում է ըստ (1) բանաձևի: Հաշվարկների արդյունքները բերված են աղյուսակ 2-ում:

Ռոյալտիի դրույքաչափը որոշվում է աղյուսակ 1-ից: Քանի որ սարքավորումների ցանկը, որը արտադրվելու է լիցենզիայով, հիմնականում բաղկացած է բժշկական սարքավորումներից և գործիքներից, ապա ռոյալտիի դրույքը գտնվում է 4% - 7%-ի սահմաններում: Հաշվարկների համար ընդունվում է  $p_i = \text{const} = 5,5\%$ :

Տարածամկետ արժեքային գնահատականների հաշվարկը կատարվել է հետևյալ բանաձևով:

$$\alpha_t = \frac{1}{(1 + E)^{t_p - t}} \quad (5)$$

Հաշվարկների արդյունքները բերված են աղյուսակ 3-ում:

ՄՍՕ արդյունաբերական օգտագործման պատրաստ դարձնելու համար անհրաժեշտ է ծախսել 30000 պ.մ. 2002թ. դեկտեմբերին:

$$C_4 = 30000 \times 1.000 = 30000 \text{ պ.մ.}$$

### Ռոյալտիի չափի հաշվարկը

Աղյուսակ 2

ՄՍՕ օգտագործման տարին, i	Արտադրանքի անվանումը, j										Ռոյալտիի չափը R <sub>i</sub> , պ.մ.
	Արեգ 307		Արեգ 308		Արեգ 309		Արեգ 312		Արեգ 313		
	V <sub>i1</sub>	Z <sub>i1</sub>	V <sub>i2</sub>	Z <sub>i2</sub>	V <sub>i3</sub>	Z <sub>i3</sub>	V <sub>i4</sub>	Z <sub>i4</sub>	V <sub>i5</sub>	Z <sub>i5</sub>	
2003	V <sub>11</sub> = 500	Z <sub>11</sub> = 200	V <sub>12</sub> = 300	Z <sub>12</sub> = 140	V <sub>13</sub> = 350	Z <sub>13</sub> = 200	V <sub>14</sub> = 25	Z <sub>14</sub> = 500	V <sub>15</sub> = 500	Z <sub>15</sub> = 140	R <sub>1</sub> =16197,5
2004	V <sub>21</sub> =700	Z <sub>21</sub> = 205	V <sub>22</sub> = 350	Z <sub>22</sub> =140	V <sub>23</sub> = 400	Z <sub>23</sub> =200	V <sub>24</sub> =30	Z <sub>24</sub> = 500	V <sub>25</sub> = 500	Z <sub>25</sub> = 145	R <sub>2</sub> =19800
2005	V <sub>31</sub> =1000	Z <sub>31</sub> = 210	V <sub>32</sub> = 400	Z <sub>32</sub> =150	V <sub>33</sub> = 500	Z <sub>33</sub> =200	V <sub>34</sub> =35	Z <sub>34</sub> = 500	V <sub>35</sub> = 500	Z <sub>35</sub> = 150	R <sub>3</sub> =25437,5
2006	V <sub>41</sub> =1000	Z <sub>41</sub> = 215	V <sub>42</sub> = 500	Z <sub>42</sub> =150	V <sub>43</sub> = 500	Z <sub>43</sub> =200	V <sub>44</sub> =40	Z <sub>44</sub> = 500	V <sub>45</sub> = 500	Z <sub>45</sub> = 150	R <sub>4</sub> =26675
2007	V <sub>51</sub> =1000	Z <sub>51</sub> = 220	V <sub>52</sub> = 500	Z <sub>52</sub> =150	V <sub>53</sub> = 500	Z <sub>53</sub> =200	V <sub>54</sub> =40	Z <sub>54</sub> = 500	V <sub>55</sub> = 500	Z <sub>55</sub> = 150	R <sub>5</sub> =26950
2008	V <sub>61</sub> =1000	Z <sub>61</sub> = 225	V <sub>62</sub> = 500	Z <sub>62</sub> =150	V <sub>63</sub> = 500	Z <sub>63</sub> =200	V <sub>64</sub> =40	Z <sub>64</sub> = 500	V <sub>65</sub> = 500	Z <sub>65</sub> = 150	R <sub>6</sub> =27225
2009	V <sub>71</sub> =900	Z <sub>71</sub> = 230	V <sub>72</sub> = 500	Z <sub>72</sub> =150	V <sub>73</sub> = 500	Z <sub>73</sub> =200	V <sub>74</sub> =40	Z <sub>74</sub> = 500	V <sub>75</sub> = 500	Z <sub>75</sub> = 150	R <sub>7</sub> =26235
2010	V <sub>81</sub> =900	Z <sub>81</sub> = 235	V <sub>82</sub> = 500	Z <sub>82</sub> =150	V <sub>83</sub> = 500	Z <sub>83</sub> =200	V <sub>84</sub> =40	Z <sub>84</sub> = 500	V <sub>85</sub> = 500	Z <sub>85</sub> = 145	R <sub>8</sub> =26345
2011	V <sub>91</sub> =800	Z <sub>91</sub> = 240	V <sub>92</sub> = 400	Z <sub>92</sub> =150	V <sub>93</sub> = 500	Z <sub>93</sub> =200	V <sub>94</sub> =40	Z <sub>94</sub> = 500	V <sub>95</sub> = 500	Z <sub>95</sub> = 140	R <sub>9</sub> =24310
2012	V <sub>101</sub> =700	Z <sub>101</sub> = 245	V <sub>102</sub> = 400	Z <sub>102</sub> =150	V <sub>103</sub> = 500	Z <sub>103</sub> =200	V <sub>104</sub> =40	Z <sub>104</sub> = 500	V <sub>105</sub> = 500	Z <sub>105</sub> = 135	R <sub>10</sub> =23045

ՄՍՕ օգտագործման տարին, i	Վճարվող ռոյալտիի չափը, R <sub>i</sub> , պ.մ.	α <sub>t</sub>	Բերված ընդհանուր գուտ տարեկան դրամային հոսքը, պ.մ.
2003	R <sub>1</sub> =16197,5	α <sub>1</sub> =0,8696	14084,78
2004	R <sub>2</sub> =19800	α <sub>2</sub> =0,7561	14971,64
2005	R <sub>3</sub> =25437,5	α <sub>3</sub> =0,6575	16725,57
2006	R <sub>4</sub> =26675	α <sub>4</sub> =0,5718	15251,52
2007	R <sub>5</sub> =26950	α <sub>5</sub> =0,4972	13398,91
2008	R <sub>6</sub> =27225	α <sub>6</sub> =0,4323	11770,12
2009	R <sub>7</sub> =26235	α <sub>7</sub> =0,3759	9862,71
2010	R <sub>8</sub> =26345	α <sub>8</sub> =0,3269	8612,23
2011	R <sub>9</sub> =24310	α <sub>9</sub> =0,2843	6910,42
2012	R <sub>10</sub> =23045	α <sub>10</sub> =0,2472	5696,37
Ընդամենը			117284,27

Օգտագործման իրավունքի արժեքի հաշվարկը կատարվել է (2) բանաձևով՝

$$C_{10} = \sum_{i=1}^k \frac{R_i}{(1 + E)^i} - C_4 = 117284,27 - 30000 = 87284,27 \text{ պ.մ.}$$

### Օրինակ 2

ՄՍՕ օգտագործման իրավունքի արժեքի որոշումը, որը ձեռք է բերվել լիցենզային պայմանագրով, ենթադրում է ռոյալտիի վճարում և որոշվում է ՄՍՕ օգտագործումով արտադրվող արտադրանքի իրացումից ստացված շահույթով: Պայմանագրի գործողության ժամկետը՝ 10 տարի:

Օգտակար մոդել «Գազային մանրէագերծիչ պահարան», պահպանված №14 (A61L/20) ՀՀ արտոնագրով, ՄՍՕ արտոնագրատերերի և «Գևորգ-Գրին» ձեռնարկության միջև կնքվում է լիցենզային պայմանագիր, որը ենթադրում է ստացվող շահույթից հաշվարկված ռոյալտիի վճարում:

Գնահատման օրը՝ 1 դեկտեմբերի 2002թ.:

29.10.2002թ. տեղաբաշխված պետական կարճաժամկետ բաժնետոմսերի միջին կշռված եկամտաբերությունը՝ 15% (E):

Շահույթի (գուտ եկամտի) մեծության հաշվարկը կատարվում է (3) բանաձևով՝ նախորդ թեմայի օրինակ 1-ի աղյուսակ 5-ում բերված տվյալների հիման վրա:

Հաշվարկի արդյունքները բերված են աղյուսակ 4-ում: Ռոյալտիի դրույքը որոշվում է աղյուսակ 1-ով: Հաշվարկի համար ընդունվում է  $p_i = \text{const} = 30\%$  :

Աղյուսակ 4

ՄՍՕ օգտագործման տարին, i	Ընդհանուր շահույթ PV <sub>i</sub> , պ.մ.	Ռոյալտիի վճարման չափը R <sub>i</sub> , պ.մ.
2003	PV <sub>1</sub> =43500	R <sub>1</sub> =13050
2004	PV <sub>2</sub> =65700	R <sub>2</sub> =19710
2005	PV <sub>3</sub> =105150	R <sub>3</sub> =31545
2006	PV <sub>4</sub> =124000	R <sub>4</sub> =37200
2007	PV <sub>5</sub> =129000	R <sub>5</sub> =38700
2008	PV <sub>6</sub> =134000	R <sub>6</sub> =40200
2009	PV <sub>7</sub> =131000	R <sub>7</sub> =39300
2010	PV <sub>8</sub> =133000	R <sub>8</sub> =39900
2011	PV <sub>9</sub> =123000	R <sub>9</sub> =36900
2012	PV <sub>10</sub> =115000	R <sub>10</sub> =34500

Տարածամկետ արժեքային գնահատականների հաշվարկը կատարվում է (5) բանաձևով: Հաշվարկի արդյունքները բերված են աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 5

ՄՍՕ օգտագործման տարին, I	Ռոյալտիի վճարման չափը $R_i$ , պ.մ.	$\alpha_i$	Բերված ընդհանուր տարեկան զուտ դրամային հոսքը պ.մ.
2003	$R_1 = 13050$	$\alpha_1 = 0,8696$	11347,83
2004	$R_2 = 19710$	$\alpha_2 = 0,7561$	14903,59
2005	$R_3 = 31545$	$\alpha_3 = 0,6575$	20741,35
2006	$R_4 = 37200$	$\alpha_4 = 0,5718$	21269,22
2007	$R_5 = 38700$	$\alpha_5 = 0,4972$	19240,74
2008	$R_6 = 40200$	$\alpha_6 = 0,4323$	17379,57
2009	$R_7 = 39300$	$\alpha_7 = 0,3759$	14774,33
2010	$R_8 = 39900$	$\alpha_8 = 0,3269$	13043,38
2011	$R_9 = 36900$	$\alpha_9 = 0,2843$	10489,28
2012	$R_{10} = 34500$	$\alpha_{10} = 0,2472$	8527,872
Ընդամենը			151717,16

ՄՍՕ արդյունաբերական օգտագործման պատրաստ դարձնելու համար անհրաժեշտ է ծախսել 30000 պ.մ. 2002թ. դեկտեմբերին:

ՄՍՕ օգտագործման իրավունքի արժեքի հաշվարկը կատարվում է (14) բանաձևով.

$$C_{11} = \sum_{i=1}^k \frac{R_i}{(1+E)^i} - C_4 = 151717,16 - 30000 = 121717,16 \text{ պ.մ.}$$

ԱՄՓՈՓՈՒՄ

Ամփոփելով 4, 5 և 6 թեմաներում ստացված արդյունքները, որոնք ընդգրկված են աղյուսակ 6-ում, կարելի է կատարել ներքոհիշյալ եզրակացությունները.

Աղյուսակ 6

N	ՄՍՕ գնահատման տարբերակները	ՄՍՕ արժեքը, պ.մ.
1	Ձեռնարկությունում ստեղծված ՄՍՕ արժեքի որոշումը	41082.62
2	Ոչ նյութական ակտիվի արժեքի որոշումը	13156.70
3	ՄՍՕ արժեքի որոշումը, երբ իրավունքները ամբողջապես հանձնվում են ձեռնարկությանը	516181.76
4	Առանց որակի նվազեցման, արտադրության ծախսերի 10% իջեցում ապահովող ՄՍՕ – նոու-հաուի արժեքի որոշումը	39096.19
5	Այնպիսի ՄՍՕ արժեքի որոշումը, որը ձեռք է բերվել լիցենզիոն պայմանագրով, այն ենթադրությամբ, որ վճարվելու է ռոյալտի. ա) որը որոշվելու է արտադրանքի իրացման ծավալից ելնելով բ) որը որոշվելու է արտադրվող արտադրանքի իրացումից ստացված հասույթից	87284.27  121717.16

Եթե ՄՍՕ ստեղծված է ձեռնարկությունում, որը պատրաստել է փորձնական նմուշները, արտոնագրել է դրանք և զբաղված է դրանց հետագա բարելավումներով, ծախսերը այս դեպքում այնքան էլ բարձր չեն: Երբ ձեռնարկությունը ձեռք է բերում ՄՍՕ օգտագործման

իրավունքը վճարելով ռոյալտի, ապա ծախսերը կրկնապատկվում են արտադրանքի իրացման դեպքում և եռապատկվում են, եթե ռոյալտին վճարվելու է շահույթից:

Այսպիսի ՄՍՕ, որը փորձնական փուլից անցել է արդյունաբերական արտադրություն, մի աստիճանով ավելի թանկ է: Արդյոք սա՞ չի այն ապացույցը, որ ՄՍ ձեռքբերումը թանկ «հաճույք» է և որ մյուս կողմից ներուժապես շուկայացվող ՄՍՕ խիստ շահավետ է «գործարկել» համապատասխան ներդրումային ծրագրերով:

## 15. ՄՍՕ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ

ՆՈՐ ԱՊՐԱՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՏԱՐԵԿԱՆ ԶՈՒՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ

Եկամտային մոտեցման օգտագործման դեպքում անհրաժեշտ է որոշել այն տարեկան եկամուտը, որը ծագում է գնահատվող օբյեկտի օգտագործումից: Զուտ տարեկան տնտեսական արդյունավետության որոշման համար օգտագործվում է հետևյալ բանաձևը.

$$z_i = n_i g_i - n_i \sum_{j=1}^m a_{ij} r_{ij} - R_i \quad (1)$$

որտեղ,

$z_i$  - դրամական հոսքի չափն է  $i$ -րդ շրջանում,

$n_i$  - արտադրանքի իրացման ծավալն է  $i$ -րդ շրջանում,

$g_i$  - արտադրանքի մեկ միավորի գինն է  $i$ -րդ շրջանում,

$a_{ij}$  -  $j$ -րդ ռեսուրսի օգտագործման այն ծավալն է, որը օգտագործվում է  $i$ -րդ շրջանում,

$r_{ij}$  -  $i$ -րդ շրջանում արտադրանքի արտադրության համար անհրաժեշտ  $j$ -րդ ռեսուրսի մեկ միավորի գինն է,

$R_i$  - հաստատուն ծախսերի չափն է  $i$ -րդ շրջանում,

$m$  - արտադրանքի արտադրության անհրաժեշտ ռեսուրսների անվանումների քանակն է:

Երբ որոշվում է ՄՍՕ արժեքը գնահատող անձը պետք է որոշի արտադրանքի այնպիսի ծավալներ և գներ, որոնց պայմաններում (1) արտադրությունը կհասնի առավելագույն նշանակության՝ հաշվի առնելով առկա սահմանափակումները:

Որպես սահմանափակում կարող են հաշվի առնվել արտադրության առավելագույն հնարավոր ծավալը, պահանջարկի պոտենցիալ ծավալը և այլն: Հաջորդ քայլում որոշվում է գնի և արտադրության ծավալի օպտիմալ չափերը յուրաքանչյուր հաշվարկային շրջանի համար: Օրինակ, եթե շահույթ ստանալու պրոցեսում օգտագործվում է անշարժ գույք, ապա հաստատուն ծախսերի մեջ անհրաժեշտ է ընդգրկել դրա օգտագործման արժեքը (վարձավճարը):



Կարելի է նշել երկու հիմնական դեպք. առաջին դեպքում որպես արտադրանք, ինչը արտադրվում է գնահատվող ՄՍՕ օգնությամբ, ի հայտ են գալիս մասսայական սպառման ապրանքներ, այսինքն՝ սպառողական հատկություններ ունեցող արտադրանք: Երկրորդ դեպքում որպես արտադրանք ի հայտ են գալիս արտադրության միջոցներ (սարքավորումներ, տրանսպորտային միջոցներ, անշարժ գույք և այլն):

ՄՊԱՌՈՂԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՕՊՏԻՄԱԼ ԳՆԵՐԻ ԵՎ ԾԱՎԱԼՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Առկա են մի քանի ֆունկցիաներ, որոնց օգնությամբ կարելի է ներկայացնել պահանջարկի ծավալի կախվածությունը գներից և բնակչության մեկ շնչին ընկնող միջին եկամտից:

$$N = a_0 + a_1 g + a_2 D \tag{2}$$

$$N = a_0 + a_1 \ln g + a_2 \ln D + a_3 \ln g \ln D \tag{3}$$

$$\ln N = a_0 + a_1 \ln g + a_2 \ln D \tag{4}$$

որտեղ,

N - ապրանքի պահանջարկի ծավալն է,

g - արտադրանքի գինն է,

D - բնակչության մեկ շնչի միջին եկամուտն է,

a<sub>0</sub>, a<sub>1</sub>, a<sub>2</sub>, a<sub>3</sub> - ապրոկսիմացիայի գործակիցներն են:

Այս գործակիցները սովորաբար որոշվում են ունեցած վիճակագրական տվյալների հիման վրա՝ փոքրագույն քառակուսիների մեթոդով: Քանի որ արտադրության պրոցեսում ռեսուրսների հիմնական ծավալների օգտագործումը քիչ հավանական է, ապա (1) բանաձևը կարելի է ներկայացնել հետևյալ տեսքով.

$$z_i = f(g_i, D_i) \cdot (g_i - r) - R_i \rightarrow \max \tag{5}$$

հետևյալ սահմանափակման դեպքում,

$$f(g_i, D_i) \leq N_i$$

որտեղ,

f(g<sub>i</sub>, D<sub>i</sub>) - արտադրանքի իրացման ծավալն է i-րդ շրջանում՝ կախված գնից և բնակչության մեկ շնչի եկամտից,

r – փոփոխական ծախքերի չափն է,

N<sub>i</sub> – արտադրության ծավալի սահմանափակումը:

N<sub>i</sub> սահմանափակումը որոշվում է շուկայի պոտենցիալ տարողությունը պարզելով:

Կարող են լինել այլ սահմանափակումներ ևս, օրինակ՝ տվյալ ապրանքը փոխարինող ապրանքի գինը: Բնակչության մեկ շնչի միջին եկամտի մեծությունը վերջին տարիների համար կարելի է վերցնել տեղեկագրերից: Այդ ցուցանիշի փոփոխությունների կանխագուշակման համար սովորաբար օգտագործվում են աստիճանային կամ լոգարիթմական ֆունկցիաներ:

Վերլուծելով (2), (3) և (4) բանաձևերը և հաշվի առնելով (5) բանաձևը, կարելի է որոշել արտադրանքի գնի և արտադրության ծավալների օպտիմալ նշանակությունները: Օրինակ, (2) բանաձևի համար օպտիմալ գինը որոշվում է հետևյալ բանաձևի օգնությամբ.

$$q = \frac{a_1 r - a_0 - a_2 D}{2a_1} \quad (6)$$

(3) բանաձևի համար օպտիմալ գինը կորոշվի հետևյալ բանաձևի օգնությամբ.

$$\frac{q-2}{q} + \ln(g) = -\frac{a_0 + a_2 \ln D}{a_1 + a_3 \ln D} \quad (7)$$

(4) բանաձևի համար օպտիմալ գինը հավասար է.

$$g = \frac{a_1 r}{a_1 + 1} \quad (8)$$

Այսպիսով, ՄՍՕ օգտագործումից ստացվող տարեկան տնտեսական արդյունավետությունը կկազմի.

$$z_i = f(g_i^*, D_i) \cdot (g_i^* - r) - R_i \quad (9)$$

որտեղ,

$g_i^*$  - օպտիմալ գինն է, ինչը որոշվում է (6), (7) կամ (8) բանաձևերի օգնությամբ,

$f(g_i^*, D_i)$  - համապատասխան արտադրության ծավալներն են, որոնք որոշվում են (2), (3) կամ (4) բանաձևերի օգնությամբ:

Եթե ՄՍՕ օգտագործման ժամանակ հնարավոր է արտադրել մի քանի տեսակի ապրանքներ, ապա (2-4) և (6-8) բանաձևերը անհրաժեշտ է օգտագործել յուրաքանչյուր ապրանքի համար առանձին: Այս դեպքում տարեկան տնտեսական արդյունավետությունը կորոշվի հետևյալ բանաձևի օգնությամբ.

$$z_i = \sum_{j=1}^m f_j(g_{ij}^*, D_i) \cdot (g_{ij}^* - r_{ij}) - R_i \quad (10)$$

որտեղ,

$g_{ij}^*$  - j-րդ ապրանքի օպտիմալ գինն է, որը որոշվել է (6-8) բանաձևերի օգնությամբ,

$f_j(g_{ij}^*, D_i)$  - j-րդ ապրանքի ծավալն է, որը արտադրվել է i-րդ շրջանում և որոշվել է (2-4) բանաձևերի օգնությամբ,

$r_{ij}$  - արտադրանքի մեկ միավորի փոփոխական ծախսերն են,

m - ապրանքատեսակների քանակն է:

### Օրինակ 1

«Ալֆա» ձեռնարկությունը որոշել է արտադրել իր համար նոր ապրանք՝ բնական ծիրանի հյութ, որը առկա է շուկայում: Այդ ապրանքի տեխնոլոգիան արտոնագրված է ձեռնարկության կողմից և ունի << արտոնագիր: Մարքեթինգային հետազոտությունների

արդյունքում հայտնաբերվել են շուկայում ապրանքի իրացման ծավալների՝ աղյուսակ 1-ում բերված ցուցանիշները:

Աղյուսակ 1

N	Տարի	Գինը (ՀՀ դրամ)	Բնակչության մեկ շնչին ընկնող եկամուտ (ՀՀ դրամ)	Արտադրանքի իրացման ծավալը ՀՀ, մլն. լիտր
1	1999	600	21000	4
2	2000	550	22000	7
3	2001	500	24000	8.5
4	2002	450	26000	9.5

Արտադրանքի մեկ միավորի փոփոխական ծախսերը կազմում են 400 դրամ, իսկ բոլոր հաստատուն ծախսերը՝ 500 մլն. դրամ: Պահանջարկի առավելագույն ծավալը գնահատված է 15 մլն. լիտր: Ենթադրվում է, որ 2004թ. բնակչության մեկ շնչի միջին եկամուտը կկազմի 28000 դրամ:

Անհրաժեշտ է որոշել ՀՀ արտոնագրով պահպանված գյուտի օգտագործումից 2004 թ. ստացված տարեկան տնտեսական արդյունավետությունը:

Աղյուսակ 2-ում բերված են (2), (3) և (4) բանաձևերի ապրոկսիմացիայի միջոցով ստացված գործակիցները և կատարված հաշվարկների արդյունքները:

Աղյուսակ 2

Բանաձևերը	Գործակիցները				Օպտիմալ գները 2004 թ.-ի համար ՀՀ դրամ	Օպտիմալ ծավալը 2004 թ.-ի համար մլն. լիտր
	a <sub>0</sub>	a <sub>1</sub>	a <sub>2</sub>	a <sub>3</sub>		
(2)	100931205	-97849	-1820	-	430	7.9
(3)	18940636	73569170	30736572	-12419287	425	9.92
(4)	20.46	-1.52	0.48	-	1025	2.784

Օպտիմալ գինը և օպտիմալ ծավալը ստացվել են (2) և (3) բանաձևերի օգնությամբ: Օպտիմալ գինը կկազմի 425 դրամ, իսկ իրացման ծավալը՝ 9.92 մլն. լիտր:

Տնտեսական արդյունավետությունը, որը հաշվարկվել է (9) բանաձևով, կկազմի 293.6 մլն. դրամ:

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ

Արտադրության միջոցների տնտեսական արդյունավետության որոշման հիմքում դրված է եկամտային մոտեցումը, ավելի շատ դրամային հոսքերի դիսկոնտավորման մեթոդը և զուտ եկամտի կապիտալացման մեթոդը: Օգտագործվում են մեզ արդեն հայտնի բանաձևերը:

$$V_{\max} = \sum_{i=1}^n \frac{PV_i}{(1+E)^{i-1}} \quad (11)$$

որտեղ,

$PV_i$  – տարեկան զուտ եկամտի նշանակությունն է  $i$ -րդ շրջանում,

$E$  - դիսկոնտի գործակիցն է,

$n$  - արտադրական միջոցների շահագործման տևողությունն է:

Եթե  $PV_i$  նշանակությունները քիչ են փոխվում արտադրական միջոցի շահագործման ընթացքում, իսկ այդ ընթացքը գերազանցում է 10-15 տարին, ապա (11) բանաձևը կարելի է ներկայացնել հետևյալ ձևով.

$$V_{\max} = \frac{PV}{K}$$

որտեղ,

$PV$  - արտադրական միջոցի շահագործումից ստացվող տարեկան եկամուտն է,

$K$  – կապիտալացման գործակիցն է:

Կապիտալացման գործակիցը և դիսկոնտի գործակիցը որոշվում են տվյալ շուկայում արտադրանքի միջին շահութաբերությունից: Այդ արտադրանքի գնի ներքին սահմանը որոշվում է որպես արտադրական պրոցեսում կատարված բոլոր օպերացիոն ծախսերի գումար: Եթե գինը լինի այդ սահմանից ավելի ցածր, դա կբերի նրան, որ ինովացիոն նախագիծը կլինի ոչ արդյունավետ: Արտադրանքի վաճառքի հաշվարկային գինը պետք է գտնվի նվազագույն և առավելագույն գների միջև: Գնահատող անձը ինքնուրույն կորոշի այդ գինը, հետևյալ բանաձևի օգնությամբ.

$$V = \lambda V_{\max} + (1 - \lambda)V_{\min} \quad (12)$$

որտեղ,

$V_{\min}$  - արտադրական միջոցի գնի ներքին սահմանն է:

$$\lambda \in (0,1)$$

Երբ մարքեթինգային հետազոտությունների արդյունքում կորոշվի պահանջարկի պոտենցիալ ծավալը, կհաշվարկվի տնտեսական արդյունավետությունը.

$$z_i = N_i(V - r) - R_i \quad (13)$$

որտեղ,

$N_i$  - արտադրության ծավալն է  $i$ -րդ շրջանում:

Եթե գնահատվող ՄՍՕ օգտագործումից հնարավոր է արտադրել մի քանի անվանում ունեցող ապրանքներ, տարեկան տնտեսական արդյունավետությունը կհաշվարկվի հետևյալ բանաձևի օգնությամբ.

$$z_i = \sum_{j=1}^m N_{ij}(V_j - r_j) - R_i \quad (14)$$

որտեղ,

$V_j$  –  $j$ -րդ արտադրական միջոցի գինն է,

$N_{ji}$  – j-րդ արտադրության միջոցի արտադրության ծավալն է i-րդ շրջանում:

m - արտադրական միջոցի անվանումների քանակն է:

### Օրինակ 2

ՄՍՕ օգտակար մոդել «Գազային մանրէագերծիչ պահարան» հիման վրա, որը պահպանված է ՀՀ արտոնագրով N14(A61L 2/20) «Բետա» ձեռնարկությունը պլանավորում է կազմակերպել հետևյալ տեսակի սարքավորումների նոր արտադրություն.

- մանրէագերծիչ պահարան «Արեգ-307»,
- ծավալային ախտահանիչ «Արեգ-308»,
- դյուրակիր մանրէագերծիչ «Արեգ-304»,
- «Արեգ 312» միկրոֆիլտրերի վերականգնման սարք,
- Ախտահանիչ ջրի համար «Արեգ-313»:

Մարքեթինգային հետազոտությունները ցույց են տվել, որ ՄՍՕ օգտագործումը կտևի 10 տարի՝ սկսած 2004 թվականից: Հայտնի են նաև իրացման ծավալները, արտադրանքի գինը, փոփոխական ծախքերը արտադրանքի ինքնարժեքը: Դրանք բերված են 3,4,5 և 6-րդ աղյուսակներում:

Արտադրանքի իրացման ծավալները ( $N_{ij}$ ), հատ

*Աղյուսակ 3*

ՄՍՕ օգտագործման տարին, i	Արտադրանքի անվանումը, j				
	Արեգ-307	Արեգ-308	Արեգ-309	Արեգ-312	Արեգ-313
2004	$N_{11}=500$	$N_{12}=300$	$N_{13}=350$	$N_{14}=25$	$N_{15}=500$
2005	$N_{21}=700$	$N_{22}=350$	$N_{23}=400$	$N_{24}=30$	$N_{25}=500$
2006	$N_{31}=1000$	$N_{32}=400$	$N_{33}=500$	$N_{34}=35$	$N_{35}=500$
2007	$N_{41}=1000$	$N_{42}=500$	$N_{43}=500$	$N_{44}=40$	$N_{45}=500$
2008	$N_{51}=1000$	$N_{52}=500$	$N_{53}=500$	$N_{54}=40$	$N_{55}=500$
2009	$N_{61}=1000$	$N_{62}=500$	$N_{63}=500$	$N_{64}=40$	$N_{65}=500$
2010	$N_{71}=900$	$N_{72}=500$	$N_{73}=500$	$N_{74}=40$	$N_{75}=500$
2011	$N_{81}=900$	$N_{82}=500$	$N_{83}=500$	$N_{84}=40$	$N_{85}=500$
2012	$N_{91}=800$	$N_{92}=400$	$N_{93}=500$	$N_{94}=40$	$N_{95}=500$
2013	$N_{101}=700$	$N_{102}=500$	$N_{103}=500$	$N_{104}=40$	$N_{105}=500$

Արտադրանքի իրացման առավելագույն գինը ( $V_{maxj}$ ), ա.մ.

*Աղյուսակ 4*

Արտադրանքի անվանումը, j				
Արեգ-307	Արեգ-308	Արեգ-309	Արեգ-312	Արեգ-313
$V_{max1}=230$	$V_{max2}=210$	$V_{max3}=250$	$V_{max4}=650$	$V_{max5}=190$

Մեկ միավոր արտադրանքի վրա կատարված փոփոխական ծախսեր ( $r_i$ ), պ.մ.

Աղյուսակ 5

Արտադրանքի անվանումը, j				
Արեգ-307	Արեգ-308	Արեգ-309	Արեգ-312	Արեգ-313
$r_1=140$	$r_2=115$	$r_3=150$	$r_4=380$	$r_5=100$

Մեկ միավոր արտադրանքի նվազագույն ինքնարժեքը ( $V_{\min j}$ ) պ.մ.

Աղյուսակ 6

Արտադրանքի անվանումը, j				
Արեգ-307	Արեգ-308	Արեգ-309	Արեգ-312	Արեգ-313
$V_{\min 1}=160$	$V_{\min 2}=120$	$V_{\min 3}=160$	$V_{\min 4}=460$	$V_{\min 5}=150$

(12) բանաձևի օգնությամբ որոշվում է արտադրանքի հաշվարկային գինը, երբ  $\lambda = 0.5$ :  
Արդյունքները բերված են աղյուսակ 7-ում:

Աղյուսակ 7

Արտադրանքի անվանումը, j				
Արեգ-307	Արեգ-308	Արեգ-309	Արեգ-312	Արեգ-313
$V_1=195$	$V_2=165$	$V_3=250$	$V_4=555$	$V_5=150$

Այնուհետև (14) բանաձևի օգնությամբ հաշվարկվում է գնահատվող ՄՍՕ օգտագործումից ստացվող տարեկան տնտեսական արդյունավետությունը: Արդյունքները բերված են աղյուսակ 8-ում:

Աղյուսակ 8

ՄՍՕ օգտագործման տարին, i	Տնտեսական արդյունավետությունը ըստ արտադրանքի տեսակի (j), ըստ շահագործման տարիների					Տնտեսական արդյունավետությունը $z_i$ , պ.մ.
	Արեգ-307	Արեգ-308	Արեգ-309	Արեգ-312	Արեգ-313	
2003	15500	17500	15500	2375	23000	$z_1=73875$
2004	22500	20750	18000	3250	23000	$z_2=87500$
2005	33000	24000	23000	4125	23000	$z_3=107125$
2006	33000	30500	23000	5000	23000	$z_4=114500$
2007	33000	30500	23000	5000	23000	$z_5=114500$
2008	33000	30500	23000	5000	23000	$z_6=114500$
2009	29500	30500	23000	5000	23000	$z_7=111000$
2010	29500	30500	23000	5000	23000	$z_8=111000$
2011	26000	24000	23000	5000	23000	$z_9=101000$
2012	22500	24000	23000	5000	23000	$z_{10}=97500$

Տարեկան զուտ դրամային արդյունավետությունը որոշվում է տարեկան առավելագույն դրամական եկամտի (որը ստացվում է նոր տեխնոլոգիայի օգտագործումից) և նույն ցուցանիշի մեծության (որը կստացվի առանց նոր տեխնոլոգիայի օգտագործման) տարբերությամբ:

$$z_i = n_i(g - r) - R_i - [n_i^* \cdot (g^* - r_i^*) - R_i^*] \quad (15)$$

որտեղ,

$n_i^*$  - արտադրության ծավալն է  $i$ -րդ շրջանում, առանց նոր տեխնոլոգիայի օգտագործման,

$g^*$  - արտադրանքի գինն է առանց նոր տեխնոլոգիայի օգտագործման,

$r_i^*$  - փոփոխական ծախքերն են, որոնք անհրաժեշտ են  $i$ -րդ մեկ միավոր ապրանք արտադրելու համար, առանց նոր տեխնոլոգիայի օգտագործման,

$R_i^*$  - հաստատուն ծախքերն են  $i$ -րդ շրջանում, առանց նոր տեխնոլոգիայի օգտագործման:

Կարելի է առանձնացնել հինգ հիմնական դեպքեր.

1. Արտադրանքի գնի աճը ապրանքի սպառողական հատկությունների աճի պատճառով: Ենթադրվում է, որ ծախքերը և իրացման ծավալը մնում են անփոփոխ: Տնտեսական արդյունավետությունը ստացվում է գների տարբերության հաշվին.

$$z_i = n(g^* - g) \quad (16)$$

2. Արտադրանքի իրացման ծավալի աճ՝ արտադրանքի որակի հաշվին: Ենթադրվում է, որ գինը և ծախքերը մնացել են անփոփոխ: Սովորաբար այդպիսի իրավիճակները բնորոշ են արտադրական միջոցների արտադրության ժամանակ:

$$z_i = g(n - n^*) \quad (17)$$

3. Աճել են արտադրանքի գինը և իրացման ծավալները, ապրանքի որակի բարելավման կապակցությամբ: Ծախքերը մնացել են անփոփոխ: Այս դեպքը բնորոշ է լայն սպառում ունեցող ապրանքների, երբ դրանց սպառողական հատկությունները զգալիորեն բարելավվում են:

$$z_i = g^* n^* - gn \quad (18)$$

4. Համապատասխան ծախքերի նվազման պատճառով իջել է գինը, և աճել է արտադրանքի իրացման ծավալը: Այս դեպքը բնորոշ է այն իրավիճակին, երբ շուկայում նկատվում է կատարյալ մրցակցություն, այսինքն՝ ապրանքի գինը հավասարվում է մեկ միավոր ապրանքի համապատասխան ծախքերի գումարին: Երբ ի հայտ է գալիս նոր տեխնոլոգիա, որը նվազեցնում է ծախքերը, ֆիրման, որը իրավունք ունի օգտագործել այդ տեխնոլոգիան, հնարավորություն է ստանում, նվազեցնելով գինը, զավթել շուկայի մեծ մասը: Եթե խոսքը գնում է լայն սպառման ապրանքի մասին, անհրաժեշտ է (6-8) բանաձևերի օգնությամբ հաշվարկել զուտ տարեկան եկամտի առավելագույն

նշանակությունը նոր տեխնոլոգիայի օգտագործման և չօգտագործման դեպքերում: Տնտեսական արդյունավետությունը կկազմի այդ երկու մեծությունների միջև եղած տարբերությունը.

$$z_i = n^* \cdot (g^* - r^*) - R - [n(g - r) - R] \quad (19)$$

5. Նվազում են համապատասխան ծախսերը, իսկ ապրանքի գինը և իրացման ծավալները մնում են անփոփոխ: Այս դեպքում տնտեսական արդյունավետությունը որոշվում է համապատասխան ծախսերի տարբերությամբ: Այս դեպքը հնարավոր է, երբ կա անփոփոխ պահանջարկ և անփոփոխ գին:

$$z_i = n(r - r^*) - R^* + R \quad (20)$$

### Օրինակ 3

«Բետա» ձեռնարկությունը որոշել է փոխել մեքանայական յուղի արտադրության տեխնոլոգիան, որը կբավարարի դիզելային շարժիչների աշխատանքը: Այդ տեխնոլոգիան պաշտպանված է ՀՀ արտոնագրով: Նոր տեխնոլոգիայի կիրառման դեպքում արտադրության հաստատուն և փոփոխական ծախսերը չեն փոխվելու: Որակի բարելավման պատճառով արտադրողը հնարավորություն է ստացել բարձրացնելու ապրանքի գինը՝ 1 լիտրի համար 600 դրամից մինչև 700 դրամ: Մարքեթինգային հետազոտությունները ցույց են տվել, որ ապրանքի պահանջարկը չի փոփոխվի և կկազմի 50 հազ. լիտր մեկ տարվա համար:

Օգտագործելով (16) բանաձևը՝ որոշում ենք տարեկան տնտեսական արդյունավետությունը.

$$z_i = 50000(700 - 600) = 5 \text{ մլն. դրամ}$$

### Օրինակ 4

«Գամմա» ձեռնարկությունը որոշել է փոխել ավտոմեքենայի պահեստամասի արտադրության տեխնոլոգիան, որը կբերի արտադրությունում օգտագործվող սարքավորումների արտադրողականության բարձրացմանը: Նոր տեխնոլոգիան պաշտպանված է ՀՀ արտոնագրով: Նախկին տեխնոլոգիան թույլ էր տալիս մեկ տարվա ընթացքում արտադրել 5 հազ. հատ տվյալ պահեստամասից, իսկ նորը՝ 6.5 հազ. հատ: Ապրանքի գինը կազմում է 1500 դրամ: Փոփոխական և հաստատուն ծախսերը մնացել են անփոփոխ:

Օգտագործելով (17) բանաձևը՝ հաշվարկում ենք տարեկան տնտեսական արդյունավետությունը.

$$z_i = 1500(6500 - 5000) = 7,25 \text{ մլն. դրամ}$$

### Օրինակ 5

«Դելտա» ձեռնարկությունը որոշել է փոխել մակարոնի արտադրության տեխնոլոգիան, ինչը պահպանված է ՀՀ արտոնագրով: Ապրանքը, որը կարտադրվի նոր տեխնոլոգիայով, կունենա ավելի բարձր սպառողական հատկություններ: Հին տեխնոլոգիայով արտադրվող 1 կգ.



ապրանքի գինը կազմել է 250 դրամ, իսկ իրացման ծավալը՝ 50000 կգ.: Տեխնոլոգիայի փոփոխման արդյունքում գինը կկազմի 275 դրամ, իսկ իրացման ծավալը 75 հազ. կգ.:

Օգտագործելով (18) բանաձևը կարելի է հաշվարկել տարեկան տնտեսական արդյունավետությունը.

$$z_i = 275 \times 75000 - 250 \times 50000 = 8,125 \text{ մլն. դրամ}$$

### Օրինակ 6

«Ալֆա» ձեռնարկությունը որոշել է փոխել ծիրանի բնական հյութի արտադրության տեխնոլոգիան: Արտադրության ծախքերի, շուկայի իրավիճակի և միջին եկամտի տվյալները, ըստ հին տեխնոլոգիայի, համապատասխանում են օրինակ 1-ում բերված տվյալներին: Նոր տեխնոլոգիայի օգտագործման դեպքում փոփոխական ծախքերը կկազմեն 320 դրամ, իսկ հաստատուն ծախքերը՝ 550 մլն. դրամ:

Անհրաժեշտ է կանխագուշակել տնտեսական արդյունավետությունը 2004 թ.-ին, երբ կկիրառվի ՀՀ արտոնագրով պահպանված նոր տեխնոլոգիան:

*Լուծում.*

Համաձայն օրինակ 1-ում բերված տվյալների՝ հին տեխնոլոգիայի օգտագործման դեպքում օպտիմալ գինը կազմել է 425 դրամ, իսկ դրան համապատասխանող ծավալը՝ 9.42 հազ. լիտր: Օգտագործելով (7) բանաձև և աղյուսակ 2-ում բերված տվյալները, որոշում ենք օպտիմալ գինը և դրան համապատասխան օպտիմալ ծավալները նոր տեխնոլոգիայի համար: Նշվածները կազմել են համապատասխանաբար 420 դրամ և 10.55 մլն. լ.: Օգտագործելով (19) բանաձևը՝ հաշվարկում ենք գյուտի օգտագործումից ստացված տնտեսական արդյունավետությունը 2004 թ. համար:

$$z_i = 10.55 \text{ մլն.} \times (420 - 320) - 550 \text{ մլն.} - [9.92 \text{ մլն.} \times (425 - 345) - 500 \text{ մլն.}] = 211.4 \text{ մլն. դ.}$$

### Օրինակ 7

«Զսի» ձեռնարկությունը որոշել է փոխել յուղաներկի արտադրության հին տեխնոլոգիան նորով, որը պաշտպանված է ՀՀ արտոնագրով: Արտադրանքի որակը կմնա անփոփոխ: Ըստ հին տեխնոլոգիայի 3 կգ-ոց տուփի արտադրության ուղղակի ծախսերը կազմում են 3.5 հազ դ., իսկ անուղղակի ծախսերը՝ 10 մլն. դրամ: Նոր տեխնոլոգիայի կիրառման դեպքում դրանք համապատասխանաբար կկազմեն՝ 3100 դրամ և 11 մլն. դրամ: Իրացման ծավալը՝ 50 հազ. տուփ, գինը անփոփոխ է:

Համաձայն (20) բանաձևի, տարեկան տնտեսական արդյունավետությունը կկազմի.

$$z_i = 30000 \times (3500 - 3100) - 11 \text{ մլն.} + 10 \text{ մլն.} = 11 \text{ մլն. դ.}:$$

## Գրականություն

1. Леонтьев Б. Б., Рынок интеллектуальной собственности и проблемы оценки. В журнале "Вопросы оценки", изд. РООО., 1996 г., ст. 14-22.
2. Леонтьев Б. Б., Аспекты охраны, оценки и управления интеллектуальной собственностью. М., 2001г.
3. Мэггс Л. Б., Сергеев А. П., Интеллектуальная собственность. М. Юриі., 2000г.
4. Минков А. Международная охрана интеллектуальной собственности. СПб, Питер, 2001 г.
5. Брукинг Э. Интеллектуальный капитал. Пер. с английского. Под редакцией А. Н. Ковалик. СПб, Питер, 2001г.
6. Десмонд Г. М., Нелли Р. П., Путеводство по оценке бизнеса. М., 1996г.
7. Козырев А. Н., Оценка интеллектуальной собственности. М., 1997г.
8. Валдайцев С. В., Оценка бизнеса и инноваций. М., 1997г.
9. Коуз Р., Фирмы, рынки и право. М., 1993г.
10. Соловьев Э. Я., Коммерческая тайна и ее защита. М., 1996г.
11. Шипова Е. В., Оценка интеллектуальной собственности, Иркутск, 2003г..
12. Леонтьев Б. Б., Мамаджанов Х. А., Принципы и подходы к оценке интеллектуальной собственности и нематериальных активов, М., 2003г.

## Բովանդակություն

Հեղինակի կողմից.....	3
<b>Բաժին առաջին. Նորարարության կառավարում.....</b>	<b>4</b>
1. Մտավոր սեփականության հիմնական դրույթները.....	4
2. Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպությունը (ՄՍՀԿ)..	8
3. Արդյունաբերական սեփականության օբյեկտների առանձնահատկությունները և դասակարգումը.....	11
4. Արդյունաբերական սեփականության իրավական հիմքերը.....	16
5. Ապրանքային և սպասարկման նշանները, արդյունաբերական նմուշներ.....	20
6. Հեղինակային և հարակից իրավունքների օբյեկտները.....	25
7. Ոչ նյութական ակտիվների կառավարում.....	27
8. Մտավոր սեփականության արժեքի գնահատման և վերլուծության մոտեցումները.....	33
<b>Բաժին երկրորդ. Մտավոր սեփականության օբյեկտների գնահատում..</b>	<b>40</b>
9. Մտավոր սեփականության շուկան և գնահատման նպատակները.....	40
10. Մտավոր սեփականության բնագավառում գնահատման գործունեության իրականացման հիմքերը.....	45
11. Մտավոր սեփականության համեմատական իմաստավորության գնահատումը.....	50
12. Մտավոր սեփականության գնահատումը ծախսային մոտեցման մեթոդներով.....	55
13. Մտավոր սեփականության գնահատումը եկամտային մոտեցման մեթոդով..	58
14. Մտավոր սեփականության գնահատման առանձնահատկությունները՝ համեմատական մոտեցման մեթոդներով.....	65
15. ՄՍՕ օգտագործման արդյունքում տարեկան տնտեսական արդյունավետության որոշման մեթոդիկան.....	72
Գրականություն.....	82



## Ղանթարջյան Սարգիս Լևոնի

Տնտեսագիտության դոկտոր  
պրոֆեսոր

Ծնվել է 1939 թվականին Երևանում: 1961 թվականին ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի էլեկտրատեխնիկական ֆակուլտետը:

1966 թվականին ԽՍՀՄ ԳԱ սիբիրյան մասնաճյուղի տնտեսագիտության և արդյունաբերական արտադրության կազմակերպման ինստիտուտում պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը, իսկ 1980 թվականին նույն ինստիտուտում նրան շնորհվել է տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան:

1966-1975 թվականներին աշխատել է պոլիմերների արտադրության համամիութենական գիտահետազոտական և նախագծային ինստիտուտում, որպես տեխնիկա-տնտեսագիտական հետազոտությունների լաբորատորիայի վարիչ, 1975-1977 թվականներին եղել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի «Տնտեսագիտական կիրառական» ֆակուլտետի ղեկավար:

1977 թվականին նշանակվել է ՀՀ նախարարների խորհրդի նախագահի օգնականի պաշտոնում: 1983-1992 թվականներին հանդիսացել է ՀՀ կառավարության բնապահպանության բաժնի վարիչը: 1992 թվականից եղել է ՀՀ կառավարությանն առընթեր արտոնագրային վարչության պետ, իսկ 2003 թվականից Երևանի պետական համալսարանի «Գործավարության և մենեջմենտի» ամբիոնի վարիչն է:

1996-1998 թվականներին և 2000-2003 թվականներին հանդես է եկել որպես Եվրասիական Արտոնագրային կազմակերպության /Մոսկվա/ վարչական խորհրդի նախագահի տեղակալ: 1997-1999 թվականներին եղել է Մադրիդյան Խորհրդի Կազմակերպության փոխնախագահ /Ժնեվ/, իսկ 1999-2001 թվականներին՝ Փարիզյան Խորհրդի Կազմակերպության փոխնախագահ /Ժնեվ/:

1999 թվականից Հայաստանի Ճարտարագիտական ակադեմիայի ակադեմիկոս է:

Սարգիս Լևոնի Ղանթարջյանը հեղինակ է ավելի քան հարյուր գիտական աշխատությունների, այդ թվում նաև քիմիական տեխնոլոգիայի տիպային գործընթացների տնտեսագիտության բնագավառում՝ երեք մենագրությունների և հինգ թեմատիկ ակնարկների: Հանրապետական մամուլում ունի ավելի քան քսան հրատարակումներ, որոնք վերաբերում են մտավոր սեփականության պահպանման և գնահատման խնդիրներին: